


4402

Myself -  
George Johnson

232

---

B-68



ԱՐԵՎԻԿԱ Գ. ԹԻՓՐԻՆՅԱՆ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԸ

(ՀԵՏԵՆՈՂՈՒԹԵԱՄԲ ԱԵՆԱՐՀԱՀԱՄԲԱԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ)

ՅԱՌԱՋԱՐԱՆ

ՈՐՈՑ Գ. Յ. ՅԱԿՈԲՅԱՆԷ

ԿՐ. ԿՈՒԹՐՈՒԹ

ՀԱՅ ԳՐԻՍՏՈՂՆԵՐՈՑ ՀԱՌԱՅԱՆՈՐ ԵՂՎԱՐՆԵՐՈՒ

Համարանքիան մեծագոյն բաժնիանք՝ ժա-  
մանակը, մեծագոյն բանաժի՛ն՝ նախարարաւանքը,  
իսկ սեւեռանք բնիկը՝ իսկաւանքաւանքիան է,  
ԵՂՎԱՆ

232  
Թ-68

2100

ՄԱՐԶՈՒՆ  
ՅՊԱԳՐ. ԿԵՐՍՈ ԵՒ ՍՐԱԹԵԱՆ  
1914

50

232  
թ. 68

ԱՐՇԱԿ Կ. ՓԻՓՓԻՆՃԵԱՆ


Printed in Turkey

# ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

(ՇԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՇԽԱՐՀԱՀԱՄԲԱԻ ՇԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ)


ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԲՐՈՑ. Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆԷ



ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻ

ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՒԱՏԱԻՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՍ



Ճամբարսուքեան մեծագոյն բարեկամք՝ Ժամանակը, մեծագոյն բռնամիտ՝ նախապատարուքը, իսկ տեսական ընկերք՝ խոնարհամասնութիւնն է:  
ԳՕԼԳԸՆ



ՄԱՐՁՈՒԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵՐՍՕ ԳՄ ՍՐԱՊԵԱՆ

1914

9902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱՐԱՆ՝ Բրոճ. Վ. Յ. Յակոբեանի:  
ՆԵՐՄԵՈՒԹԻՒՆ  
ՀԱՐՑԻՆ ԺԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Printed in Turkey

Մ Ա Ս Ն Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՅՈՅՅՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ

ԳԼՈՒԽ Ա.— 1. Աւեսարաններուն վկայութիւնը եւ հա-  
րազատութիւնը.— 2. Բնագրի կնադատու-  
թիւն.— 3. Հին ձեռագիրներ.— 4. Եկեղեցւոյ  
հայրերուն վկայութիւնը.— 5. Թուականի  
հարցը:

ԳԼՈՒԽ Բ.— Նախնական Աւեսարանին եւ Լօկիայի վը-  
կայութիւնը:

ԳԼՈՒԽ Գ.— Պողոս Առաքեալ եւ Պատմական Յիսուսը:

Մ Ա Ս Ն Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՅՈՅՅՆԵՐ՝ ԱՐՏԱՔԻՆ

ԳԼՈՒԽ Դ.— Հրեայ մեծ պատմաբան Յովսեփոսի վկա-  
յութիւնը:

ԳԼՈՒԽ Ե.— Հռովմայեցի հեղինակներու վկայութիւնը:  
1. Տակիտոս.— 2. Սուեդիմիոս.— 3. Պլինիոս:

ԳԼՈՒԽ Զ.— Հրեական աւանդութեան Յիսուսը:



2081  
40

Մ Ա Ս Ն Ք.

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻՏՏՄՐԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Է.— Քրիստոս Բաբելոնական ղիցաբանութեան արդիւնքն էր.— 1. Երեք Մարիամները.— 2. Յիսուսի ծննդեան պատմութիւնը.— 3. Մկրտութիւնը.— 4. Փորձութիւնը.— 5. Տասներկու աշակերտները.— 6. Երուսաղէմ մուտքը.— 7. Խաչելութիւնը.— 8. Համբարձումը:

Մ Ա Ս Ն Ք.

Եզրակացութիւն.— 1. Յիսուս առասպել մը չէ՛ երբեք.— 2.— Դարերու վկայութիւնը.— 3. Քրիստոնէութիւնը՝ իր պտուղէն.— 4. Մարդկային միտք չի կրնար Քրիստոս մը ստեղծել:



ՅԱՌԱՋԱԲԱՆ



Քսան դար առաջ Հրեասանի ֆաղափներուն եւ Գալիլիայի գիւղերուն մէջ կ'աւրոգէր անձ մը, որ ֆաւրոզութեան աւանդական կերպերը ձգելով բոլորովին նոր ինքի մը կ'զգժէր: Ան կ'միացնէր խօսքը գործին հետ: Կայրէր անկեալին, բուռտին, անօրին եւ հիւանդին հետ: Հանոյ կ'զգար անոնց մէջ ապրելով. բորոսներուն, կաղերուն եւ կոյրերուն կ'համակէր: Իր երեք տարուան անձայն անշուշտ գործունէութեան մէջ անցնելի սպաւորութիւն գործեց իր շուրջի անձերուն եւ ժողովուրդներուն վրայ: Անուս, զգէտ, բարձր դասակարգէն անարգուած մարդիկներէ ընտրեց իր հետեւողները եւ զանոնք մարզեց. իր կեանքով եւ խօսքով անոնց նկարագիրը կազմեց: Յիսուս Քրիստոս էր, այս գերբնական անձը: Նա հալածուեցաւ, բռնուեցաւ, իր հետեւողները բողիկ զինքը, ուրացան եւ փախան. դատուեցաւ եւ խաչուեցաւ. մեռաւ մահերուն սոսկալիներէն մեկովը. քաղուեցաւ եւ կնիւեցաւ մասնեալ ֆահանայից. ինք կ'մարտնչէր բռնութեան դէմ, մեղքի դէմ, ընկերային ամէն զեղծումներու դէմ: Գերեզմանին մէջ մարտնչեցաւ մեծ բռնաւորին՝ մահուան հետ եւ յաղթեց. յաղթական երեւցաւ իր հետեւողներուն, սրբապնդեց զանոնք եւ զրկեց բոլոր աշխարհ ֆաւրոզելու:

Տգէտ, անուս մարդիկ ելան ֆաւրոզելու իրենց վարդապետը. վկայեցին իրենց վարդապետին համար. իշխաններու եւ քաղաւորներու առջեւ ելան, չաւիչան եւ չվախցան. սպառնալիքներու առջեւ տեղի չտուին. հաստատուն կեցան իրենց սկզբունքին վրայ եւ անոր սիրոյն նահասակուեցան:

Իշխանութեանց կոճ ոյժին դեմ մարտնչեցան իրենց գլուխը մասուցանելով. ժամանակին իմաստաւերներուն եւ գիտնականներուն հետ վիճեցան՝ նկարագրին եւ հոգիին իրենց տուած ներշնչումներովը, եւ յաղթեցին:

Հօր կայսրներ նակասեցան անոնց դեմ. իրենց բանակներով, պաշտօնեաներով հալածեցին, կոտորեցին, ջարդեցին զանոնք. բայց անոնց վարդապետութիւնը սարածուեցաւ. երկիրներ զբաւուեցան հալածեալ ֆրիսոնեաներու ձեռնով: Փիլիսոփայական դպրոցներ ի զուր կշանային իրաւախօսութեան զալ ֆրիսոնեութեան հետ. անիկա իշխող էր, անողոք էր մուրեքան, կռապաշտութեան դեմ. խիստ էր մեղին դեմ. փառասիրութեան դեմ. ամեն ինչ՝ փառք, պատիւ, հարսութիւն կուգէր, կպահանջէր Անոր համար, առանց վերապահութեան:

Քարոզուեցաւ հռովմեական լայնածաւալ կայսրութեան ամեն կողմ. Ասորեստան, Պարսկաստան, Հնդկաստան, բոլոր Եւրոպա. Ամերիկաներն Անորն են եւ Ափրիկէն Անորը պիտի ըլլայ. Ովկիանիայի կղզիները ձեռք կերկնցնեն Անոր: Մարդկեր ցեղեր, մարդկերայ արարածներ՝ լեզուի դիւանարին նման Անոր ոտներուն ներքեւ կուգան, կնստին հանդարտ եւ խաղաղ:

Երկրի քաղաւորներու եւ իշխաններու հօրագոյնները Անոր անունը կիրեն իրենց վրայ եւ անոնց քաղերուն զարդարանքը Անոր խաչն է. քաղուհիներ անով կզարդարեն իրենց կուրծքերը. կարողիկէներ, որբանոցներ, հիւանդանոցներ, դպրոցներ՝ Անոր անունով կկառուցուին: Մեծ սաղանդներ, հօր գրիչներ Անոր ի սպաս կղեն իրենց հանճարին լաւագոյն կարողութիւնները: Մեծ նկարիչներ զայն կնկարեն, եւ գլուխ գործոցներ կարտադրեն: Մեծ բեմբասացներ Անոր փառքը եւ խոնարհութիւնը կպանծացնեն: Քաղցրածայն երգիչներ անոր սերը կգեղգեղեն: Բայց Անիկա կնախընտրէ փառաւորուիլ խեղճուկ

հիւղակներու մէջ, խոնարհ սիրտերու մէջ: Անոր անունով կմխիբարուին անոնք. իր աղախիկները եւ ծառաները Անոր անունով կդարմանեն անբուժելի հիւանդներ, Անոր անունը կհծեն հոգեվարժին ականջին: Անոր սիրոյն նուիրուած են բանկագին կեանքներ ծառայելու անկեալ մարդկութեան:

Ան քարոզուեցաւ Հիւսիսականաց՝ Պարբեւներու հրպարտ ցեղին, Հայերուն ալ. պինդ փարած էին մեր նախնիք իրենց Անահիթին, Գիսանէին եւ Վահագնի պաշտամունքին. սակայն նոր կրօնին վստեմութիւնը Սանդուխտներու, Թեոդորոսներու, Շուշաններու կեանքին եւ տոնոց մարտիրոսութիւնը յաղթեցին անոնց ընդդիմութեանը, եւ Հայաստան աշխարհ եւ յուսաւորուեցաւ ֆրիսոնեութեան յուսով: Քրիստոնէութիւնը բարձրացուց մեր ազգային կեանքը, սրբեց հայ ընտանիքը. եկեղեցին արիւնի, սուրի, հուրի դարերուն մէջ ապաւենը եղաւ հալածեալ հայութեան:

Ճենկիզներու, Լենկի մուրներու եւ Համիսներու բռնութիւններուն տկաց մեր ազգը. ջարդերու մէջ վրկայ կանգնեցաւ իր Փրկչին. 1300 տարիք ի վեր բարձր կբռնէ ան իր դրօշակը, հաւասարիմ մնացած է իր կրօնին. իրեն մասուցուած պատիւներ, փառքեր չեն գործը զինք դասալիք ընելու. Ան հաստատուն պիտի կենայ Արարատայ ստորոք բարձրացող կաղնիին նման:

Սակայն Ի. դարուն մէջ, քերահաւասութեան եւ դիւրահաւասութեան այս դարուն մէջ. փոքորիկներ կուգան խոռովել հայ եկեղեցիին հանգիստը. անհաւաստութեան հովեր կցնցեն հասարէս կաղնիին դարերու:

Ամենէն անհեթեթ սուտերը իրենց հաւաստողները կբանակ սնել ամենէն անհաւաստի վարդապետութիւնները իրենց հետեւողները կունենան. եւ ամեն մուրեցուցիչ իրեն աւակերտները սնեցած է. Հեկեղներու, Ինկըրսուներու, Մանկասարեաններու անհեթեթութիւնները կընան իրենց

հաւասարողները գտնել ամեն կողմ ամեն կլիմայի ներքեւ .  
սերեւները կարծիքն, երբեմն կիյնան, բարձր կազմին ը  
մնայ եւ իր հաստատուն հիւղերը նոյնպէս կտկան ամեն  
փոքրիկի :

Գիւրահաւան եւ պարզամիտ ժողովուրդը սերելի  
նման կարծի ամեն քեթեւ հովեւ . սրամաքանութենէ զուրկ  
մարդիկ շուտով կընդգրկեն ինչ որ կըսուի իրենց, մեծ  
անուններու ոսկեգօծ Տիտոսներու շարքին տակ : Մեծա-  
դորդ յայտարարութիւններ շատ մարդ կ'ողովեն : Սակայն  
պէտք է խորհիլ, սրամաքանել, պէտք է դիմել անաչառ  
դատաւորին որ պատմութիւն կ'ընդունի . խուժանին մա-  
կերեսէն վեր բարձրանալու է : Քրիստոնէութեան եւ իր  
Հիմնադիրին հակառակող՝ շատ մը գրագէտներ, փիլիսո-  
փաներ կ'ապրին շատ հասարակ անձնատէր կեանք մը : Ա-  
նոնց հոգը չէ անկեալ մարդկութիւնը, անոր վերականգ-  
նումը . անոնք կ'ապրին լոկ կործանելու համար : Անոնց  
հանդէպ կ'ընեն եւ խուլ եւ համբերու դպրոցները, ծերե-  
րու ապաստանարանը, հիւանդանոցները եւ անոնց մէջ  
գործող անձնուէր գործողները : Ո՛ւր են Հեփթեաններու  
որբանոցները, ո՛ւր են Մանկասարեաններու անկեղանոց-  
ները : Անոնք ո՛ր սուրբ դասին պաշտպան կանգնած են . ո՛ր  
հիւանդին այցելած են . ի՞նչ բրած են իմ ազգիս համար .  
մեր արդար դասը պաշտպանելու համար քանի՞ տող գիր  
գրած են : Ոչինչ . անտարբեր ժայիտ մը ունին միայն : Ա-  
նոնք կ'խեղաքիւրեն պատմութիւնը, կ'չափազանցեն իրո-  
ղութիւնները, կ'նուագեցնեն ամեն ազնիւ գործի յարգը :  
Պէտք է մարտնչիլ անոնց դէմ պատմութեամբ, սրամաքա-  
նութեամբ, փաստերով : Մի՛ խռովիք, ով սկար քրիստոն-  
եաներ, գիտնականի անուն կրողներ՝ յանախ արժանի չեն  
այդ անունին . Քրիստոսի դրօշակին ներքեւ շատ աւելի  
լուրջ իմաստասերներ, ներհուն փիլիսոփաներ, անաչառ  
պատմագիրներ կան ժողոված :

Դու մանաւանդ ո՛վ հայերիսասարդ, պէտք չունիս  
երբեք Մանկասարեաններու մուրացածոյ վարդապետութիւն-  
ներէն յուզուելու . բաց աչիւղ դիտէ իրողութիւնները, քննե՛  
զանոնք լրջօրէն եւ խաւաքարէ շինուած այդ առարկու-  
թիւնները պիտի ջնջուին բոլորովին : Քրիստոս կենդանի  
է, պատմական է, իր հետեւողներուն հետ կերբայ ամեն  
տեղ . եկեղեցիին սիւնը եւ հաստատութիւնը եւ կեանքն է  
ու զանիկա կմոյէ ամեն բարի եւ ազնիւ ձեռնարկներու :  
«Մտար իր պտուղէն կ'հանչցուի» : «Ամեն բան քննեցե՛ք,  
բարին ամուր բռնեցե՛ք» :

Ներկայ գործիս մէջ Թիւքիւններէն է՞ . կ'զանայ  
պատմականօրէն ապացուցանելու՝ քէ Քրիստոս առասպե-  
լական չէ՛, պատմական է, կենդանի՛ է : Ամեն կերպով գը-  
նահատելի եւ անաչառ կերպով ի գիր առնուած գործ  
մէ՛ք : Արժանի է որ ամեն լուրջ երիտասարդ կարգայ գայն  
եւ նկատի առնէ յայտնուած հումարսութիւնները : Երբ մենք  
անկեղծօրէն եւ պարզութեամբ հումարսութիւնը քննելու,  
որոնելու կեղեմք, Անիկա ինքզինքը կը յայտնէ մեզ . կարծե՛  
քննուել հումարսութեան զոհարը եւ ստանալ գայն ի գին  
ամեն զոհողութեանց :

(Բրոճ.) Վ. Յ. ՅԱԿՈՒԲԵԱՆ



### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կրօնական, ինչպէս նաև գիտական, կարգ մը կրնճուտա, խորհրդաւոր և դժուարահասկնալի խնդիրներու կամ հարցերու մասին մարդկային էակին համար տարակուսիլը ո՛չ միայն այսպէսեւ չէ՝ այլ բնական ալ է: Տարակուսելով Թովմաս ճշմարիտ և կենդանի հաւատքի տիրացաւ: Տարակոյտը՝ մասնաւորաբար կրօնական հաւատալիքներու մասին, ներկայ քսաներորդ դարու սեպհականութիւնը չէ, ինչպէս ոմանք կը կարծեն, ա՛ն շա՛տ հին է, ա՛մէն ատեն և ա՛մէն դարու մէջ մարդկային միտքը տարակուսած է, և պէ՛տք է որ տարակուսի: Հաւատացեալ Արքահմաններու քով միեւնոյն ընտանեկան յարկին ներքեւ անգամ սկեպտիկ Սաւաններ միշտ պիտի գտնուին: Տարակուսող միտքն է որ հաւատալու համար ստորդ փաստեր և իրականութեան շօշափելի հետքեր կը փնտռէ կասկածի նմիտակայ եզող ո՛ւնէ հարցի շուրջ: Թող ա՛յսպէս ընէ, տսիկա զարգացման և յառաջդիմութեան յայտնի նշան մըն է: Տարակուսիլը բ՛նաւ մեղք չէ՛, սակայն յայտնի ուրացումը մեղք է. այսինքն երբ տարակուսող միտքը կը հասկնայ ճշմարտութիւնը, երբ գիտակցօրէն բարիին՝ չար և չարին ալ՝ բարի կ՛ըսէ, ա՛նա՛ այս պարագային կ՛ուրանայ ճշմարտութիւնը և գիտութեամբ կը մեղանչէ: Այս տեսակ մեղանչում մը միշտ դատապարտելի և զգուշելի է արդարև:

Ներկայ դարուս կարկառուն յատկանիչներէն մէկն է նախ քննել ո՛ւնէ խնդիր և յետոյ ապացուցանել անոր իրականութիւնը, քննել գիտական, պատմական հողի վրայ

և այս կերպով հաստատել կամ ժխտել անոր գոյութիւնը, ստուգութիւնը և արժանիքը: Ներկան «Քննադատութեան դար» անունով որակուած է: Ամէն հարց, դէպք, խնդիր և եզրութիւն, որ անցելոյն մէջ պատահած է, ինչ կայուածի ալ պատկանի, պատմագիտական կամ ուրիշ բացատրութեամբ՝ արդի ֆիլոսոֆիայի մեթոտով նկատի կ՛առնուի, կը զննուի և ապա ճշմարիտը կ՛որգեզրուի իսկ անստոյգը կը մերժուի:

Ներկայ դարու քննադատութիւնը սակայն, կարծես իր սուր սլաքը պէլի շատ ուղղած է Քրիստոնէութեան և Յիսուս Քրիստոսի դէմ: Գերմանիա՝ աստուածաբանական լայնամիտ և նոյն ատեն ծայրայեղ հայեացքներու և տեսութիւններու մայր հանդիսացած է, իր գրկին մէջ մեծ աստուածաբաններու, մեծ քննադատներու, մեծ գիտնականներու և վերջապէս մեծ փիլիսոփաներու լեզէն մը սնուցանելուն համար: Հո՛ն ծաղկած են Բիշլի, (Ritschl) Շլէյրմախերի, (Schleiermacher) Հարնաքի, (Harnack) և Քաֆթանի (Kaftan) պէս հռչակաւոր աստուածաբաններ, Պաուլլրի (Baür) Սթրաուսի (Strauss) և Հարթմանի (Hartmann) պէս նշանաւոր քննադատներ և Հէկէլի (Hegel) Շէլլինկի (Shelling) և Իւքէնի (Eucken) պէս մեծանուն փիլիսոփաներ: Անգլիոյ և Ամերիկայի աստուածաբանութիւնը՝ եթէ ըսենք թէ իր սնունդը Գերմանիայէն կ՛առնէ, չե՛նք սխալիր: Հո՛ն է որ ազատ խորհող դպրոցի (Liberal school) աշակերտները ծնունդ տուած են ու կ՛ուտան բազմազան և զանազան տեսութիւններու (Theory) և լոյս կը սփռեն Քրիստոնէութեան հետ առնչութիւն ունեցող կարգ մը խնդիրներու, ինչպէս, Քրիստոսի աստուածութեան և կամ մարդկութեան, Քաւութեան վարդապետութեան, Չարիքի ծնունդին, Յաւիտենական կեանքի և ուրիշ կարեւոր հարցերու վրայ, և այ՛սպէս հետզհետէ պահպանողական ծայրայեղ գաղափարներ

կը Վտարուին և նորեր կ'ուզան բռնել անոնց տեղը : Գերման դպրոցին աստուածաբանական և այլ յարակից խնդիրներու մատուցած ծառայութիւնը մեծ և ամէն գնահատումէ վեր է : Սակայն հոս հարկ է դիտել տալ թէ ծայրակ Աղատական դպրոցի պատկանողներէն մէկ քանին Յիսուսի մասին իրենց յայտնած արտակարգ գաղափարներովը , զոր օրինակ , Անկէ կողոպտելով Աստուածորդութեան իրաւունքն ու փառքը և Անոր տալով միայն կատարեալ բարոյական մարդու մը պատիւը , մաքրու չփոթութիւն և բուն վիճաբանութիւններու տեղի առած են :

Բայց ինչիրը հոս և ասով չվերջացաւ . ուրիշներ աւելի շատ առաջ գացին և ուրացան ո՛չ միայն Քրիստոսի աստուածորդութիւնը , այլև Անոր պատմականութիւնն ալ , ու մէկ խօսքով , ըսին թէ Յիսուս անունով մէկը երբեք մեր մտրակը այցելած չէ , հետեւաբար Յիսուս առասպել մըն է : Ասոր համար անոնք նախ ուրացան աւետարաններու հարազատութիւնը , զանոնք նկատելով առասպելական հատորներ և անոնց հեղինակներն ալ իհարկէ . . . առասպելական դէմքեր կամ խաբեբաներ : Այս կարգի քննադատներ քիչ են թուով , մասի վրայ միայն կը համբուին Գերմանիոյ , Անգլիոյ , Ամերիկայի և ուրիշ երկիրներու մէջ , սակայն զօրաւոր են երեւակաշութեամբ : Յիսուսի պատմական դէմք մը ըլլալը միտելու համար զԱյն կը բազդաանն դիցարանական կամ առասպելական արեւ-աստուածութիւններու հետ , նմանութիւններ կը գտնեն Յիսուսի և այդ կարգի ուրիշ աստուածութիւններու (?) պատկանող ծննդեան , փորձութեան , միտութեան , խաչելութեան , թաղման և . . . յարութեան պարագաներուն մէջտեղ և այս կերպով արտաուց ենթադրութիւններու և ո՛չ արամաբանական եղբակացութիւններու քմածին և երեւակայական անկ լարիւրինդոսի մը մէջ մոլորելով կ'ուրանան Յիսուսի պատմա-

կանութիւնը և մահացու հարուած մը կ'ուսանն (?) Քրիստոնէութեան : Իրենց գաղափարները կը հրապարակեն պարբերականներու , բանաստուծութիւններու և զրքերու միջոցաւ , որոնց պատասխաններ կը տրուին նշանաւոր հեղինակութիւններու կողմէ : Թուենք մէկ քանի քննադատներու կարեւոր գործերը և մէկ երկու տողով ցոյց տանք թէ ի՛նչ կ'ըսեն անոնք Յիսուսի մասին :

Ճ . Մ . Րօպըրտսըն ( J . M . Robertson ) , իր կարեւոր գործերն են «Քրիստոնէոգրիան եւ Առասպելականութիւն» (Christianity and Mythology , 1900) , «Հեքսանս Քրիստուներ» (Pagan Christs, 1912) և այլն :

Րօպըրթսըն կ'ըսէ թէ Աւետարաններու Յիսուսը աւրեւ-աստուծոյն «Յեսու»ի , որ Յուդայի ցեղին առասպելական գաղափարներուն արդիւնքն էր , և ուրիշ հեթանոս հաւատքներու՝ մասնաւորապէս Քրիշնայի (Krishna) առասպելին և Պուտոայի պատմութեան հետ շատ նմանութիւն կ'ենթադրէ , ուստի Յիսուսի դիմագիծը անոնց հետեւողութեամբ յերիւրուած է :

Ու Պ . Սմիթի ( W . B . Smith ) իր նշանաւոր գործն է «Նախա-քրիստոնէական Յիսուսը» (Pre-Christian Jesus, 1906) : Սմիթն կ'ըսէ թէ Քրիստոս առասպելը նախաքրիստոնէական թուականի Յիսուս-պաշտամունքներու (Jesus-Cults) արդիւնքն է : Կը պնդէ թէ Նազարէթ բառը սեղական անուն մը չէ՛ , այլ ինչպէս որ «Նազարիոս» (Nasarios) կը նշանակէ «պահպան» և կամ « փրկիչ » Յիսուս բառին հոմանիչ ըլլալով , ա՛յնպէս ալ Քրիստոս անունը կը նշանակէ աստուածութիւն :

Ա . Տրիւս ( A . Drews ) , իր նշանաւոր գործն է՝ «Քրիստոս Առասպելը» (The Christ Myth, 1910) , ինք Րօպըրթսընի և Սմիթի հետեւող մըն է : Առաջինէն սա գաղափարը կ'առնէ Ճաշուս (Joshua) , Ճէյսոն (Jason) և Ճիզըս (Jesus) արեւ կը նշանակեն , ուստի Յիսուս Իսրայէ-

լայւոց նախկին արեւ-աստուծոյ զաղափարէն առնուած է : Իսկ երկրորդին հետեւելով կ'ըսէ թէ Աւետարաններու Յիսուսին պատկերը շինուած է , թէ՛ Հրեաներու Մեսիականութեան զաղափարէն և թէ՛ հեթանոսներու «Փրկիչ-աստուծոյ» (Adonis=Աւօնիս) առասպելէն որ ա՛մէն տարի «կը մեռնի» և «կը յառնէ» : Ս . Պօղոս ալ , կը պնդէ Բրոֆ . Տրիւս , պատմական Յիսուսը չէր քարոզեր՝ այլ զաղափարական Քրիստոսը : Նախապէս Պօղոս օրէնքին հետեւող մըն էր և Աւետարանին հակառակ . սակայն վերջէն շուտով լուսաւորուեցաւ , վասնզի իր մտքին մէջ արթնցաւ «ակնկալուած» և «Ուղղափառ Հրէական Մեսիայի» զաղափարը՝ զոր միացուց հեթանոս «բնական ծէսերու» (Nature-Cults) «անձնազոհ աստուածներու» գաղափարին հետ , որոնք սերտօրէն կը համաձայնէին Քրիստոնէութենէ առաջ գոյութիւն ունեցող «Յիսուս-պաշտամունքներու» (Jesus-Cults) հետ և ահա՛ այս էր այն վայրկեանը որ ատեն Քրիստոնէութիւնը ծնաւ . . . :

Զանց կ'ընենք յիշել այս նիւթին շուրջ Գերմ . Լիգուով գրուած գրքերուն անունները , քանի որ արդէն Անգլիերէնով հրատարակուած երեք գլխաւոր հատորներուն և անոնց բովանդակութեան մասին հակիրճ տեղեկութիւն մը տուինք : Հարցը դեռ չատ նոր է , վերջին 10 տարիներու մէջ միայն երեւան ելաւ , ուստի կրնանք ըսել թէ դեռ իր սաղմին մէջ է : Քրիստոնեաներէն շատեր ու միլիոնաւորներ կարեւորութիւն իսկ չեն տար յառաջ բերուած ժխտական ապացոյցներուն և փաստերուն (?) որոնցմով ոմանք կը ջանան ուրանալ Յիսուսի պատմականութիւնը . անոնք Պօղոսի պէս գիտեն թէ «որո՛ւ են հաւատացիր» , ուստի անվրդով կը մնան իրենց հաւատքին մէջ . անդին խռովողները կամ չփոթողները բազմութիւն մը չէ որ կը ներկայացնեն : Այս հարցին շուրջ յարուցուած վիճարանութիւնը յառաջ կը տարուի աստուածաբաններու , բրո-

ֆէսօրներու և քննադատներու մէջտեղ և մէկ ժխտական փաստի դէմ Յիսուսի պատմականութիւնը տարացուցանող հարիւրաւոր բանաւոր փաստեր յառաջ կը բերուին : Անգլին Քրիստոնէութիւնը կը նմայ հաստատուն , տեւական , անվրդով , միշտ գորութենէ գորութիւն կը դիմէ և Յիսուս Քրիստոսի անունը կը փառաւորուի միլիոնաւորներու կողմէն : Ծովուն ալիքները ուժգնօրէն կը բաղխին ժայռերուն , որոնք կը մնան միշտ անյողողող , միշտ հաստատուն : Քննադատութեան , անհաւատութեան և թշնամութեան ալիքները միշտ դատապարտուած են վերուելու Քրիստոնէութեան ժայռին վրայ :

Յիսուսի առասպելականութեան հարցը դեռ նոր լրսուեցաւ մեր ազգին մէջ «Երկունք» Ամսաթերթի Ա . տարուան 10-11 , 12 և 13րդ թիւերով հրատարակուած Մ . Մ . Մանկասարեանի «Յիսուս առասպել մըն է արդեօք» գրութեան միջոցաւ : Ինչպէս պիտի տեսնուի , մենք այդ հարցին շուրջ յարուցուած Գերման և ուրիշ հեղինակաւոր անձերու տեսութիւնները պարզելով և հարցը իր ընդհանուր տեսակէտէ միայն առնելով պիտի տանք մեր պատասխանը՝ տարացուցանելու համար Յիսուսի պատմականութիւնը : Ուստի այս տողերը Մ . Մանկասարեանի գրութեան ուղղակի պատասխան մը տալու նպատակաւ չէ որ կը գրենք : Բարեկամներու կողմէն , մասնաւորապէս Տիար Մ . Վարժապետեանէ , մեզ թելադրուեցաւ այս գրքին պատրաստութիւնը և չեչոտուեցաւ անոր մատուցանելիք ծառայութիւնը : Ուստի քաջալերուելով ձեռնարկեցինք և կը յուսանք թէ Մ . Մանկասարեանի՝ սիրելի ազգիս մէջ յարուցած անդէպ զայթակղութեան բարձումին պիտի օժանդակէ մեր այս աշխատութիւնը , միանալով թերթերու և հանդէսներու մէջ արդէն հրատարակուած յօդուածներու ազդեցութեան :

Հոս պէտք է ըսեմ թէ այս գործը պատրաստելու ա-

տեն ազատեան հետեւած եմ կարգ մը նշանաւոր հեղինակներու, մասնաւորաբար դեռ վերջերս հրատարակուած Վեր Տր. Ճ. Թօրպրինի «Յիսուս Քրիստոս պատմական քե առասպելական» անուն գիրքին՝ որուն կը պարտինք այս հատորին Բ. մասին պատրաստութիւնը ամբողջապէս: Օգտուած ենք նաեւ Տր. Ճ. Ֆ. Բայթի «Քրիստոնեական Ապացոյցներու Գիշական Կողմը» անուն գրքէն և դեռ ուրիշ գրքերէ և պարբերականներէ:

Կը նուիրեմ այս երկս այն պատուական ժողովուրդին՝ որոնց հայրերը Յիսուսի խանդավառ և ճշմարիտ Սիրովը լեցուած, Հայաստանեայց Ս. Եկեղեցիին և Հայութեան պարծանք եղած են: Վարդաններ, Դեռնդներ, Սահակներ ու Մեսրոպներ, Հայրիկներ ու Իգմիրլեաններ արտադրող ազգ մը, որ արեան ծովերու մէջ դարերով լողալու դատապարտուած ըլլալով հանդերձ, իր կազմած հաւատքը կենդանի պահեր է, ո՛չ, անսակ ազգ մը չի կրնար լքել իր Ս. Կրօնքը, ուրանալ իր Քրիստոսը և իր լոյս հաւատքը ու տարակուսիլ Անոր պատմականութեան մասին:



## ՀԱՐՑԻՆ ԺԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Բրո՛ք. Տրիւսի փաստերուն Աւելոյումը

Մտածող մարդուն մտքին ստէպ կենսական և մեծ հարցումներ կը բաղխին և կը շփոթեցնեն զինքը: Ահա՛ այդ կարգի կնճռոտ հարցերէն մէկ քանին: Ի՞նչ է այս աշխարհը, ի՞նչպէս և ե՞րբ ստեղծուեցաւ ան: Ի՞նչ է անհո՛ւն տիեզերքը և զայն կառավարող զօրութիւնը: Ինչպէ՞ս ըստեղծուեցաւ մարդը և ի՞նչ է իր վախճանը: Կա՞յ այս կեանքէն անդին ուրիշ կեանք մըն ալ, թէ՛ իր կեանքին սկիզբն ու վերջը այս աշխարհի վրայ է: Ո՞վ է Աստուած և ինչպէ՞ս կրնանք սպացուցանել Անոր գոյութիւնը, ելն, ելն: Սակայն այս անհնէն վեր և այս ամէնէն առաջ Յիսուո Քրիստոսի Աստուածորդի՞ թէ հասարակ մարդ ըլլալու հարցը իր կարեւորութեան կողմէն քրիստոնէական Ա. դարէն մինչեւ այսօր մեծամեծ վիճաբանութիւններու և զանազան տեսութիւններու նիւթ հայթայթած և շա՛տ մտքերու ալ շփոթութիւն պատճառած է: Շատեր ու միլիոնաւորներ հաւատացեր են ու կը հաւատան Անոր ճշմարիտ Աստուածորդի ըլլալուն, իսկ ուրիշներ ընդունած են ու կ'ընդունին թէ Անիկա լոկ մարդ մըն էր, սակայն հասարակ մահկանացուներէ գերընտիր մարդ մը, կատարեալ՝ բարոյականով, կատարեալ՝ նկարագրով, սուրբ և անմեղ: Այսպէս, մինչ մէկ կողմէն հաւատացեալ և ճշմարիտ քրիստոնեաներ, որոնք կարկառուն դէմքեր և կարող մտքեր էին, օր. համար, օտարներէն՝ Սփրճըններ, Մուսալիներ, Քլարքներ, Փարքըրներ, ելն, ելն, և մեր եկեղեցույ երանաշնորհ հայրերէն՝ Լուսաւորիչներ, Մեսրոպ-

1808/04

ներ, Շնորհայիններ, Նարեկացիներ, Խորմեաններ եւն, կն, Անոր մատուցին Աստուածորդի ըլլալու իրաւունքը և զԱյն մեծ հաւատքով քարոզեցին, անդին գտնուեցան ուրիշներ ալ, որոնք մերկացուցին զԱյն Աստուածորդիութեան փառքէն և իրբև բարոյական մարդ մը միայն ուղեցին ցոյց տալ: Բայց խնդիրը ասով ալ չվերջացաւ. տարակուսող միտքը ասելի եւս չփոթեցաւ և ան՝ քսաներորդ դարու վերջընթեր մէկ երկու հնգեակ տարիներու մէջ ծագում առաւ սա հարցը. «Յիսուս պատմական է թէ առասպելական»: Հարցը թէեւ նոր ու թարմ է, և ամբողջ քսան դարեր վկայ կը կանգնին Յիսուսի պատմականութեան, սակայն վիճարանութեան լուրջ և առատ նիւթ մը կը հայթայթէ, որովհետեւ միլիոնաւոր քրիստոնեայ հաւատացեալներու մտքերուն չփոթութիւն պատճառելու բնոյթն ունի կարծես, և անոնց հաւատքին կրօնագոյնայ (?):

Որպէսզի մեր ընթերցողները նախապէս մօտէն տեղեակ ըլլան թէ առասպելաբան դպրոցի աշակերտները Յիսուսի պատմականութիւնը ժխտելու համար ինչ տեսակ տեսութիւն կը պարզեն, ստորև կը հրատարակենք այդ դպրոցի ներկայացուցիչներէն մէկուն՝ Բրոֆ. Տրիւսի (Prof. Drews) փաստերուն (?) ամփոփումը:

1910 Յունվ. 31 ին և Փետր. 1 ին Գերմանիոյ Պերլին մայրաքաղաքին մէջ վիճարանական պատմական միջոցով մը տեղի ունեցաւ, ուր աադանդաւոր և գիտական մտքի տէր հեղինակաւոր անձեր ներկայ էին: Բրոֆ Տրիւս, Յիսուսի առասպելականութիւնը ապացուցանելու համար, հետեւեալ հինգ կէտերը յառաջ բերաւ, զոր Տր. Թ. Թօրպրնի՝ «Յիսուս Բրիտոս, Պատմական թէ Առասպելական» գրքին յաւելուածէն քաղելով կը զննեք հոս:

1. «Աւետարաններու Յիսուսին ժամանակէն առաջ, Հրէական կարգ մը ազանդաւորները «Յիսուս» անունով

արեւ-աստուած մը կը պաշտէին որ հաւանականաբար Իսրայէլացիներու արեւ-աստուծոյն Յիսուսի (JOSUA) նման էր: Հրեաներու յայտնատեսական գաղափարները այս աստուածութեան և հեթանոսներու մեռնող և նորէն ծնող «Փրկիչի» մը վրայ ունեցած ծանօթութեան վրայ հիմնուած էին:

2. Պօղոս առաքեալ պատմական Յիսուսը չէր որ կը քարոզէր: Իր առաքելական թուղթերուն մէջ նկարագրուած Աստուծոյ մարմնացեալ Որդին պարզապէս այս Հրեայ- Հեթանոս փրկող աստուածութիւնն էր, որ առարկայական կամ թանձրացեալ ձեւով պատմութեան մէջ երկրպագութեան և խորհուրդի իրբև կեդրոնական գաղափարական մը կը ներկայացուի:

3. Աւետարանները իրական (actual) մարդու մը պատմութիւնը չէ որ կը բովանդակեն՝ այլ միայն Աստուած-Մարդ Յիսուսի առասպելը, որ պատմական տարագով ըզգեստաւորուած է:

4. Աւետարաններու մէջ արձանագրուած կրօնքի նըպատակին համար կարեւոր և նշանաւոր եղող խնդիրները, որ. համար, Մկրտութիւնը, Վերջին Ընթրիքը, Խաչելութիւնը և Յարութիւնը ամէնքն ալ առասպելական Յիսուսի ձէս-հանգանակներէն (Cult Symbolism) փոխ առնուած են:

5. Արդի քրիստոնեական աստուածաբանութեան «պատմական» Յիսուսը անորոյ և կասկածելի դէմք մը կը ներկայանայ թէ՛ աստուածաբանութեան և թէ՛ պատմութեան մէջ, որ Ան ասիական փրկութեան անհրաժեշտ պայման ու միջոց չի կրնար ներկայացուիլ:»

Այսպէս ուրեմն, Բրոֆ. Տրիւս, կ'ուրանայ Յիսուսի պատմականութիւնը՝ Անոր ու արեւ-աստուածներու (Jesus-Cults) մէջտեղ նմանութեան եզրեր գտնելուն համար: Սմբթն Ամբրիկայի մէջ իսկ Բօպըրթսըն Մազլիոյ մէջ իր ու

րինակին կը հետեւին : Ուստի մենք ալ քննադատութեան արդի մեթոտներուն համաձայն , ջանանք ապացուցանել Յիսուսի պատմականութիւնը և տեսնենք թէ ո՞րը գիւրդին է , հաստատելը թէ ժխտելը , և կրօնական կեանքի մէջ ո՞ր մէկ դիրքը ապահով է , հաւատա՞լը թէ ուրանալը , ընդունելը թէ մերժելը :



ՄԱՍՆ Ա.

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ

ԳԼ. Ա.

#### 1. ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի պատմականութիւնը հաստատող երկու գըլխաւոր աղբիւրներ կան . առաջինը՝ Ներթին և երկրորդը՝ Արտաքին : Ներքին աղբիւր ըսելով կը հասկնանք Աւետարաններուն վկայութիւնը՝ որոնք կը պատմին մեզ Անոր խօսքերը և կեանքը , և Պօղոս առաքեալին վկայութիւնը :

Ինչպէս յայտնի է , Յիսուս իր ձեռքով և ոչ մէկ տող գրեց , իր խօսքի և կեանքի պատմութիւնը մեզ հասած է չորս աւետարանիչներու գրութիւններուն միջոցաւ : Իր քարոզութիւններն ու կեանքը աշակերաններուն և իր հետեւորդներուն մտքին ու սրտին վրայ պատկերացնելու առաւելութիւնը իրեն համար թուելթի վրայ եղած գրութիւններէ ա՛ւելի ևս նախընտրելի ըլլալուն պատճառաւ թերեւս չուզեց գրել ո՛րեւէ յիշատակագիր : Եւ արդէն ինչպէս արեւելքի բոլոր ուսուցիչներուն , նոյնպէս և Հրեայ Բարբրիներուն ու օրինաց վարդապետներուն ուսուցանելու մեթոտը բերանացի էր և ո՛չ թէ գրաւոր : Օրէնքին բերանացի կրկնութիւնը առաքինութեան կարգը կը դասուէր : Արեւելքի միտքը , մասնաւորաբար Հրեայ միտքը , Աստուծոյ օրէնքին և պատուիրանքներուն վրայ միջ՛ա «տրոճալու» և զանոնք միտք պահելու եղական կարողութեամբ օժտուած կը թուէր : Ուստի քա՛նի որ Յիսուս գրաւոր յիշատակագիր չէ թողուցեր , և Աւետարաններու

մէջ միայն կը գտնենք իր խօսքին ու կեանքին արձանագրութիւնը, անմիջապէս սա կարեւոր հարցը կը ծագի մեր մտքին մէջ. «Աւետարանները մեզի կը բերեն Յիսուսի կեանքին խկական և հարազատ պատմութիւնը»: Այս մասին երեք զլխաւոր ենթադրութիւններ կրնանք ընել 1. Թե աւետարանիչները խարուսձ եին. 2. Թե կը ջանա՞ն խարեյ եւ 3. Թե աւետարաններուն բովանդակած պատմութիւնը usnyց եւ վաւերակա՞ն է: Քննենք այս խնդիրները կարգաւ:

1. Արդեօք իրենի խարուսձ չե՞ին: Անոնք իրենց պատմութիւնը կ'ընեն պարզ և բնական կերպով մը, առանց դժուարութիւն կրելու կը պատկերացնեն Յիսուսի խօսքն ու կեանքը՝ վասնզի Անոր խօսքն ու կեանքը իրենց մշտնապէս վրայ ապաւորուած էր: Անոնց գրութեան ոճը յստակ, պարզ և հասկնալի է: Կը պատմեն իրենց տեսածը և կ'արտայայտեն իրենց հաւատքը՝ Յիսուսի վրայ: Չորս աւետարանիչներու ՄԻՍՍԻՆ միեւնոյն անձեւ խաբուիլը ո՞րչօքի հաւանական կրնայ թուիլ: Հասկա ուրիշ հարիւրաւոր գէժքերու վկայութիւնը՝ որոնք լսիկ կերպով կը խօսին մեզ աւետարաններու պատմութեան մէջէն...: Առասպելական անձեր էին աւետարանիչները. և երեւակայի որ այս առասպելական չորս անձերը կը միանան... առասպելական Յիսուսի մը պատկերը նկարելու համար, ինչպէս կ'ուզեն հաւատացնել առասպելաբան դպրոցի աշակերտները: Գարծնալ երեւակայեցէք որ խաբուած չորս անձեր Յիսուսի նոյն պատկերը կը նկարեն, Անոր կեանքին շուրջ նոյն գրուագիւնները կը հիւսեն, Անոր խօսքերը միեւնոյն կերպով կը բացատրեն և միեւնոյն հաւատքը կամ անտութիւնը կ'ուսնենան Անոր վրայ, ու այս նկարին, գրուագիւններուն, բացատրութիւններուն և անտութիւններուն մէջ ընդհանուր գծերու վրայ կասարեղապէս կը հանձնայնին իրարու հետ, շատ քիչ բացառութեամբ միայն,

և արդէն այս բացառութիւնը որ կը անհուսի կամ տարբերութիւնը՝ կարգ մը երկրորդական ու երրորդական խնդիրներու շուրջ, երեւան չ'ը բերել անոնց անկեղծութիւնը և իրենց գրութիւններուն ալ հարազատութիւնը...:

Մակայն քննադատութիւնը հոս մեր դէմ կը կանգնի ու կ'ըսէ. «Հասկա հրաշքներու պարագան». եթէ անոնք խաբուած չէին, կամ այսպէս ըսենք, հիսկնուացած վիճակի մը ենթակայ չէին. ինչո՞ւ հաւատացին հրաշքներու և զանոնք արձանագրեցին»: Ուրեմն հարցումը սա է. «Հրաշք կը պատահի, Յիսուսի ժամանակ հրաշքներ տեղի ունեցան»: Այս հարցումին ուղիղ պատասխանը տալու համար նախ պէտք է սահմանենք ի՞նչ է հրաշքը:

Ասոր պատասխանը տալու և նոյն ասան հրաշքին ու բրնտլութեան օրէնքներուն մէջ եղած ներդաշնակութիւնը հաստատելու կամ այսպէս ըսենք, ապացուցակներ հաւատ քե նրաշքը բնութեան կանոնատն օրէնքը չեղծակեր, խօսքը կուտանք Վեր-Տր ձէյմա Օրի (J. Orr, DD), նշանաւոր Բրոքս. մը, հանրաձայնօթ իր բազմաթիւ երկերով: Իր գրութիւնը թարգմանաբար կը ներկայացնենք հոս.

«ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐԷՆԻՔ-ՀՐԱՇՔՆԵՐ»

«Գիտութիւնը կը հակառակի Ս. գրքին և Բրիտոնիէութեան գուցէ աւելի տիեզերքի մասին իր ունեցած ընդհանուր ծանօթութեան և ո՛չ թէ մասնաւորապէս ձեռք բերած որոշ արդիւնքներու վրայ յենլով: Ս. Գիրքը յայտնութեան մը արձանագրութիւնն է: Բրիտոնիէութիւնը գերագոյն սխալեմ (դրութիւն) մըն է: Հրաշքը՝ այն իմաստով որ Աստուած անոր միջոցաւ մարդկային խօսքի և գործի պատմութեան մէջ բաժին ունեցաւ՝ իր վառաւոր նպատակին համար, Բրիտոնիէութեան էական մասը կը կազմէ: Միւս կողմէն գիտութեան յառաջդիմութիւնը՝

բնական օրէնքին տիեզերական իշխանութիւնը խորապէս հաստատելու համար, մեծ ծառայութիւն մատուցած է: Իսկ ասոր արդիւնքը ան կղած է որ հազարաւորներ՝ ուրոնց հաւատքը ուղղակի հոգեւոր փորձառութեան արդիւնքը չէ, միայն միակողմանի տեսութիւն մը կ'ունենան Գերագոյնին մասին: Կ'ենթադրուի թէ Աստուած իր որոշ կամ մասնաւոր գործելակերպը ունի և Ան կը գործէ երկրորդական ոյժերու (agencies) միջոցաւ՝ որոնք Բնութեան մեջ բացարձակապէս ներդաշնակ են եւ ուստի հրաշք-ներու մտքը անկարելի է: Եւ քանի որ Աստուածաշունչին մէջ հրաշքներու պատմութիւններ կան՝ քանի որ ամբողջ Գիրքը շնորհքի գերագոյն անստուծութեան գաղափարին վրայ կը հանգչի՝ ամբողջն ալ պէտք է մերժուին՝ իրրեւ հակառակ բան մը ներկայ մտքին: Բրոֆ. Ճ. Պ. Փոսթըր (Prof. C. B. Foster) շատ հեռունները կ'երթայ, երբ կը յայտարարէ թէ ո'րեւէ անձ իմացականապէս պարկեշտ չի կրնար սեպուիլ, երբ ասանկ ժամանակի մը մէջ Ս. Գրքի պատմած հրաշքներուն կը հաւատայ:

«Հրաշքներու դէմ խօսիլ և զանոնք Ս. Գրքէն մերժելը նոր բան մը չէ: Անոր դէմ կղած հակառակութիւնը նոր չէ, հին է, բանապաշտութեան (rationalism) չափ հին: Դուք այդ հակառակութիւնը պիտի տեսնէք Սքինոզայի, Սթրաուսի և ուրիշներու գրութեանց մէջ: Տը Ուէթ և Վէթք, Հին Կտակարանի քննադատութեամբ զբաղող ուրիշ անձերու հետ զօրեղապէս արտայայտուեցան անոր դէմ և զանիկա իրենց քննադատութեան առանցքը ըրին, որուն կը հետեւին ներկայիս մէջ իրենց աշակերտներն ալ: Տիլսթրները Բրիտանացիութեան վրայ յարձակեցան լոկ հրաշքի կարեկրութիւնը ժխտելուն համար: Տէյ-վիտ Հիւմ (David Hume) ճառ մը գրեց հրաշքներու դէմ և կարծես թէ ասով հարցին վերջ մը տուած կղաւ: Սակայն եթէ լրջօրէն նկատի առնենք խնդիրը՝ հրաշքներու

գաղափարին վրայ կատարուած յարձակումը, որ տիեզերքի օրէնքներուն ներդաշնակ ըլլալու գաղափարէն ծնունդ առած է, կրնա՞յ արդարանալ: Այդ յարձակումը սխալ ենթադրութեան մը արդիւնքը չէ՞ և հասարակութեան զգացումի ու փորձառութեան չի՞ հակառակիր: Հարցը շահեկան է և կ'արժէ նկատի ունենալ:

«Նախ՝ ի՞նչ է հրաշքը: Ետ մը սահմաններ կրնան տրուիլ, սակայն կը բաւէ ըսել թէ՛ հրաշքը Գերագոյն պատճառի մը միջնակարգութեան ծագում առնող արդիւնք մըն է և քննարկեան մեջ և կամ զարտադրութեան մը անոր ստիճակակալ ընթացիկէ: Ս. Գրքի մէջ հրաշքի գաղափարին կարեւոր մէկ մասը չի կազմեր, ինչպէս դիտելի է, սա տեսութիւնը թէ՛ բնական ոյժերը (agencis) պէտք չէ գործածուին իրենց կարեկրութեան սահմանին մէջ: Եթէ Կարմիր ծովուն ջուրերուն քաշուիլը կամ ցամքիլը՝ Իսրայելացիներուն ճամբայ բացուելու համար, մասնակի կերպով հովին արդիւնքն էր՝ որ զօրեղապէս փչեց, նաև Աստուծոյ հրամանն ալ էր՝ որ գործածեց հովին ոյժը. դէպքին գերագոյն նկարագիր մը ունենալը չի կրնար ժխտուիլ: Աստուծոյ հրամանաւն էր որ ջուրերը բաժնուեցան ճիշդ տոնինն և անդին վրայ, ժողովուրդին ճամբայ բացուելու համար: Աստուածարանները ասիկա կը կոչեն «նախախնամակած» հրաշք, որուն մէջ բնական ոյժերը՝ աստուածային ուղղութեան տակ, բաւական են ուղղուած արդիւնքը արտադրելու համար: Սակայն կայ հրաշքներու ուրիշ դաս մը, օր. համար, բորոտին վայրկեանապէս բժշկուիլը կամ մեռելալին յարութիւնը, այս պարագաներուն մէջ բնական ոյժերը յայտնապէս զսպուած են և այս կարգի հրաշքներն են որ վիճարանութեան նիւթ կը հայթայթեն:

«Երկրորդ՝ ի՞նչ կը հասկցուի «բնութեան ներդաշնակութիւն» խօսքով: Անշուշտ կան բնութեան օրէնքներ, և ո՛չ մէկը կը վիճարանի ասոր վրայ: Բոլորովին սխալ է են-



թաղրել թէ Ս. Գրքը՝ քանի որ քսաներորդ դարուն մէջ գրուած չէ, կանոնաւոր և բնական օրէնքի մասին ո՛րեւէ բան չի գիտեր: Աշխարհ Աստուծոյ աշխարհն՝ է հաստատուած ըլլալով իր հրամանաւ: Աստուած իւրաքանչիւր արարած օժտած է իր յատուկ բնութեամբ՝ տալով անոր որոշ սահման և եզր, ուստի ամեն ինչ կը շարունակուի իր անօրէնութեան համաձայն: Սակայն զիտելի է որ Օրէնքը Ս. Գրքին մէջ չի նկատուիր իբրև անկախ գոյութիւն մը, այլ կը նկատուի Աստուծոյ իմաստութեան և գորութեան արտայայտութիւնը և այս տեսութիւնը օրէնքին հրաշքին հետ ունեցած յարաբերութիւնը մեզ կը պարզարանէ: Ի՞նչ կը հասկնանք «Բնութեան օրէնք» ըսելով: Բնութեան օրէնքն է, ինչպէս գիտութիւն պիտի յօժարի ըսել, մեր ունեցած ապահով գիտօրութիւնը այն կարգերու մասին՝ որոնց մէջ արդիւնքները և պատճառները բոլոր մեր փորձառութեան, միացած կը գտնենք անյեղիօրէն: Թէ արդիւնք և պատճառ սերտօրէն իրարու հետ կապ ունին, այս մասին ո՛չ ոք կը տարակուսի: Եթէ այսպէս չըլլար, մենք մեզի բնակութեան աշխարհ մը պիտի չօճենայինք: Սակայն մենք ի՞նչ կը հասկնանք «միութեան մէջ եղած ներդաշնակութիւն» խօսքով՝ կը հասկնանք թէ՛ նման պատճառներ, որոնք նման պայմաններու տակ կը գործեն, նման արդիւնքներ շտապ կը բերեն: Շօ՛տ ուղիղ է այս արամարանութիւնը և ո՛չ մէկը կ'ուրանայ:

«Երրորդ՝ ինչպէս Ճ. Ս. Միլ (J. S. Mill) սակէ առաջ իր Տրանսպանտրեան մէջ մասնանշած է, հրաշք մը այս ճշմարտութիւններէն մէկուն չի հակասեր, երբ ան իր ուղիղ իմաստովը կ'առնուի: Հրաշքը եւրպարտքիւն մը չի թէ, երբ նոյն պատճառներ գործեն, տարբեր արդիւնքներ շտապ կը բերեն, ընդհակառակը հրաշքի գաղափարը կ'ըսէ թէ՛ ՆՈՐ պատճառ մը միջնորդած է և այս պատճառը աստուածապաշտները կը կոչեն «Աստուծոյ կամքը»

կամ «գորութիւնը»: Ծիշդ ինչպէս որ երբ վեր կը վերցնեմ իմ բազուկս կամ քար մը կը նետեմ օդին մէջ ձեռքողութեան օրէնքը ջնջած չեմ ըլլար՝ այլ պարզապէս կը կառավարեմ կամ կ'արգիլեմ իր բնական ընթացքը՝ ուրիշ նոր ուժի մը միջնորդութեամբ, ա՛յդպէս ալ, անհունապէս բարձրագոյն միջոցաւ մը-Առաջին պատճառին՝ Աստուծոյ միջնորդութեամբ — կը կատարուի հրաշքը, որ չի ջնջեր բնութեան օրէնքին կարգը: Ի՞նչ որ գիտական մարդը կը կարօտի՝ հաստատելու համար իր աւարկութիւնը հրաշքին դէմ, սա է, պէտք է ապացուցանէ թէ՛ ոչ միայն բնութեան օրէնքները ներդաշնակօրէն կը գործեն, այլ թէ բնական պատճառներէն զատ ուրիշ պատճառ գոյութիւն չունի, թէ բնական պատճառները տիեզերքի մէջ գտնուող պատճառականութիւնը վեր կը բռնեն: Եւ սակայն գիտութիւնը չկրնար պնդել թէ պատճառներէն անդին ուրիշ մեծագոյն ՊՍՏՃԱՍ մը չկայ:

Ուրեմն մեր այս խօսքերէն կը յայտնուի թէ վէճի նիւթ եղող հրաշքի մէջ իրական հարցը բնութեան օրէնքին չուրջ չէ որ դառնալու է՝ այլ աստուածապաշտութեան (Theism): Պէտք է համոզուինք թէ հրաշքի մասին բանաւոր վիճաբանութիւն մը կրնայ կատարուիլ միայն այն տակ, երբ տիեզերքի վրայ աստուածադաւանական (Theistic): տեսութիւն մը կ'ուրենանք: Տիեզերքի նկատմամբ հրաշքի կարելիութիւնը ժխտող տեսութիւններ կան: Անաստուածը (Atheist) չի կրնար ընդունիլ հրաշքի կարելիութիւնը, վասնզի հրաշք գործող Աստուած չունի: Համայնաստուածեանը (Pantheist) չի կրնար ընդունիլ հրաշքը, վասնզի անոր համար բնութիւնը և Աստուած մէկ են: Տիիսքը (Deist) չի կրնար ընդունիլ հրաշքը, վասնզի ան տիեզերքը և զԱստուած ա՛յնչպիսի բաժնած է իջարմէ, որ ա՛լ չի կրնար իրարու մօտեցնել: Հարցումը այն չէ թէ Հրաշք կարելի է անաստուածական, նիւթապաշտական,

համայնաստուածեանական քիտրիներու = տեսութիւններու համաձայն, այլ թէ կարելի՞ է ըստ աստուածապաշտական տեսութեան, այսինքն տեսութիւն մը Աստուծոյ վրայ, որ տիեզերքէն վեր (Transcendent) է անհուն միջոցներով և նոյն ատեն ներմնայուն (immanent) է ա՛մէն տեղ տիեզերքի մէջ: Ես ոչինչ ունիմ բսելիք «իմացական պարկեշտութեան» մասին. սակայն կը հիանամ ո՛րքէ անձի վրաստանութեան վրայ, որով կը յօժարի բսել թէ Աստուած, իր արարածներուն հետ ունեցած անձնական յարաբերութեանց բարձրագոյն և սրբագոյն նպատակին համար, կըրնայ գործել ազատօրէն բնութեան ենթադրած սահմաններու շրջանակին մէջ, և թէ Ան չի կրնար գործել աւանց բնութեան կարգին և անկէ վեր, եթէ այդ կերպը իրեն հաճելի կը թուի: Հրաշքները կը կանգնին կամ կ'իյնան իրենց ապացոյցէն. սակայն բնութեան օրէնքներու ներդաշնակութեան մասին եղած կանխակալ (apriori) կարծիքներու վրայ միայն յենյով զանիկա ջրկը բանաւոր չիթուիր: Մարդիկ նոյն կերպով կը մերժեն նախասնամական անտեսութեան գաղափարը և ազօթքի պատասխանին կարելիութիւնը այսինքն՝ կ'ըսեն թէ բնութեան ներդաշնակութեան հակառակ են անոնք: Հրաշքի կարելիութիւնով բնութեան օրէնքը չի խզուիր. ան կը ցուցնէ թէ բնութեան օրէնքին ուղղութիւն կը տրուի կամ այդ օրէնքը իբրև ոյժ կը գործածուի աւելի փառաւոր նըպատակի մը համար, որուն փորձառութիւնը միշտ կ'ունենանք մեր աօրեայ կեանքին մէջ»:

Ուրեմն հրաշքը չեղծանիւր բնութեան ներդաշնակ օրէնքը և անոր կարելիութիւնը բանաւոր կը թուի ո՛րքէ անձի, որ տիեզերքի վրայ աստուածադաւանական տեսութիւն մը ունի, ինչպէս տեսանք, Վեր. Բրոֆ. Օրի ա՛յնչափ իմաստալից և արամաբանական փաստերէն:

Այժմ այս նիւթին վրայ թող խօսի ուրիշ հեղինակա-

ւոր անձնաւորութիւն մը Բրոֆ. Ա. Հարնաք, (Adolf Harnak) Պերլլէի համալսարանէն:

«Աւետարանները գրուեցան անանկ ժամանակի մը մէջ, որ ատեն կեանքի ամէնօրեայ պատանձունքներու մէջ զարմանալի բաները սովորական էին. ա՛յսպէս մարդիկ կը խորհէին ու կը տեսնէին թէ զարմանալիքներով չըջապատուած էին: Այդ օրերուն մէջ հրաշքը միայն կեանքի սեպհական չէր, անոր ազբիւրները շա՛տ էին, բայց մարդիկ ա՛մէն Աստուծոյ առջեւ չէին ծնրադրեր: Դարձեալ այն օրերուն մէջ «հրաշք» բառը իր լիցուն նշանակութիւնով անծանօթ էր:

2. «Մենք այսօր գիտենք թէ՛ ինչ որ կը պատահի ժամանակի և միջոցի մէջ, օրէնքի ընդհանուր շարժումին կը հպատակի. և ուստի կը խորհնք թէ այս տեսակէտէն դատելով «Հրաշք» կոչուած բաներ տեղի չեն ունենար: Սակայն նոյն ատեն գիտենք ալ թէ, կրօնական մարդը վստահ է թէ ինք փակուած չէ բնութեան կոյր և անբան ընթացքին մէջ, այլ թէ՛ բնութեան այս ընթացքը կը ծառայէ բարձրագոյն նպատակներու կամ ուրիշ խօսքով, ներքին և աստուածային գորութիւն մը կրնայ օգնել մեզ, որով մենք կը նկատենք բնութեան օրէնքը իբրև այն՝ որ ամէն բան անհրաժեշտօրէն ծառայելու է լաւագոյնին համար: Այս փորձառութիւնը անբաժան է ա՛մէն կրօնական կեանքէ և հրաշք կը թուի:

3. «Թէև բնութեան օրէնքը անճնշկի է, սակայն, տակաւին մենք չենք գիտեր բոլոր ա՛յն ոյժերը, որոնք կը գործեն անոր մէջ և ուրիշ գորութիւններու հետ փոխադարձ կերպով: Նոյն իսկ գիտական դաշտի մէջ, մեր ձեռքին տակ գտնուած գորութիւններու մասին որոշ և կատարեալ ծանօթութիւն չունինք, և հոգեբանական երեւոյթներու մասին մեր ծանօթութեան սահմանը շատ նեղ ու անճուկ է: Մենք կը տեսնենք թէ զօրաւոր կամք

և հաստատուն հաւատք մարմինին վրայ կ'ազդեն և մեզ անհուն զարմանք պատճառող բներեւոյթներ (Phenomena) յառաջ կը բերեն: Ո՞վ յաջողած է ցա՛րդ կարելիին և անկարելիին մէջտեղ զանազանութիւն դնել: Ո՞վ կրնայ ըսել թէ հոգիին ուրիշ հոգիի մը վրայ ունեցած ազդեցութիւնը և հոգիին մարմնոյ վրայ ունեցած ազդեցութիւնը որչափ սահման ունի. և ո՛չ մէկը: Ո՞վ կրնայ ըսել թէ բացառիկ դէպքերը պատրանքի արդիւնք են. և ո՛չ մէկը:»

Հրաշքներու կարելիութեան դէմ խօսիլ զիւրին գործ է. սակայն ո՞վ կրնայ հոգեբանական բներեւոյթներու տեղի ունենալը ժխտել, ինչպէս կ'ըսէ Բրոֆ. Հարնաք: Ի՞նչ էր Յիսուսի հրաշքներուն միակ նպատակը - մէկ կողմէն զԱստուած յայտնել մարդոց և միւս կողմէն օգնել մարդուն: Աստուծոյ մարդկութեան յայտնուելը կարեւոր էր ու կենսական: Ուստի եթէ Ան հրաշալի միջոցաւ — Յիսուսով և Անոր գործերով — յայտնուեցաւ, ասոր մէջ զարմանալի ի՞նչ բան կամ ժխտելու ի՞նչ կէտ կայ: Հըրաշխերու կարելիութիւնը ապացուցանելը, օր համար, թէ Յիսուս ի՞նչպէս, ի՞նչ կերպով կոյրին աչքերը բացաւ, թէ ի՞նչպէս մեռեալներուն յարութիւն տուաւ երև. չի կարելորագոյն բանը, այլ մեկ պիտի չի գիտնանք թէ Յիսուս անանկ Մարդ մըն էր, որ այս ամէն հրաշխերը կատարելու կարողութիւնը ունէր, ինք ըզրայով մեծագոյն հրաշխ-Հրաշքներուն Հրաշքը. կամ ա՛յսպէս ըսենք, հրաշքին մարմննացումը: Ինձ համար անլուծելի է սա հարցը թէ, ելեքարականութիւնը ի՞նչ տեսակ գորութիւն մըն է, ի՞նչ կերպով այդ գորութիւնը ծնունդ առած է, սակայն մէկ բան գիտեմ, կը տեսնեմ, թէ ելեքարականութիւն կոչուած գորութիւն մը կայ, գոյութիւն ունի և կը գործէ: Իմ ելեքարականութեան ուրիշ և ինչպէ՞ս յառաջ գալը չի հասկնալուս համար անոր գոյութիւնը ժխտել յիմարութիւն պիտի չըլլայ: Ասանկ ալ չեմ հասկնար թէ ի՞նչպէս

հրաշքներ կրնան կատարուել կամ կատարուեցան, ասկայն ամէն պարագայի մեջ անոնք անհաւանական չե՛ն, քանի որ Աստուած կը գործէ ինչպէ՛րք մեզ: Առասպելական պատմութիւններ են հրաշքներու արձանագրութիւնները, ո՛չ, վասնզի ինչպէ՛ս կը տեսնենք. ամէն կրօնի մեջ առասպելի պատմութիւնները կրօնուայց վարդապետներու մահեմ շատ վերջ տեսնուի անոնց կեանքին շուրջ. իսկ Յիսուսի մասին ա՛մէն բան կը պատմուի ճիշդ իր ապրած միջոցին և յարաբերակն անմիջապէս վերջ: Գործեալ կայ անհաւատալի բան մը բոլոր հրաշքներուն մէջ: Մ. Կիզո, Գաղիացի պատմագիրը և փիլիսոփան, կ'ըսէ թէ՛ հրաշքներու կամ գերբնական յայտնութիւններու մասին եղած հաւատքը բնական է և սկիզբէն մինչև հիմա ընդհանուր եղած: Սակայն Աւետարանի հրաշքները հաւանական կը թուին, որովհետեւ ազգացոյցը բուն իսկ հրաշքներու ոգիէն կամ տեսակէն կը ծագի: Անոնք Աստուաներու ոգիէն կամ տեսակէն կը ծագին յայտնութիւններ ծային կարողութեան արտաքոյ կարգի յայտնութիւններ են. ուրեմն ինչո՞ւ զարմանալ եթէ անոնք աստուածային գերագոյն յատկութիւններ կ'ունենան և մեզի անկարելի կը թուին: Ինչո՞ւ կը գործուին անոնք. ո՛չ թէ աննշան պատճառներու համար, ո՛չ թէ մտքերու գոհացում տալու համար, ո՛չ թէ պատիւ և համբաւ շահելու համար, որովհետեւ հրաշագործ Յիսուս կը նախատուի Փարիսեցիներէն այդ պատճառաւ, այլ պիտի մը ըլցնելու կամ մարդոց օգնելու համար:

Աւետարանիչները կատարելապէս համոզուած էին Յիսուսի հրաշքներ գործած ըլլալուն և ուստի գրեցին ու վկայեցին: Հրաշքները Աւետարանին մէկ կենսական մասը կը կազմեն, եթէ վերցնենք զանոնք, ան իր կենսականութեան մէկ մասը կը կորսնցնէ, բայց հակառակ ծայրայեղ քննադատներու ջանքին, անոնք կը մնան պատմական յիշատակագրերու կարգին մէջ:

Ուրեմն կ'եզրակացնենք թէ հրաշքները անկարելի չեն թուրք և հետեւաբար աշակերտները խաբուած մարդիկ չէին :

2. Աւետարանիչները արդեօք խաբէ՞ր ուզեցին : Ի՞նչ նպատակաւ պիտի խաբէին , ի՞նչ շահ պիտի ունենային այդ խաբերայութիւնով : Ընդհակառակն անոնք հալածանք կրեցին : Անկեղծութիւն և պարզութիւն կը նշմարուի իրենց պատմելակերպին մէջ : Ուրիշները համոզելու և ասոր համար փաստեր և ապացոյցներ յառաջ բերելու ջանքը կը պակտի իրենց քով : Տրամաբանական և ենթադրական հաշիւներու մէջ չեն մտնէր : Այնքան անկեղծ են և պատմական դէպքերը ա՛յնքան պարզ կը ներկայացնեն , որ նոյն իսկ իրենց անձին աննպաստ եղող դէպքերն ու խօսքերն ալ կ'արձանագրեն : Ըսել թէ ո՛չ շահու և ո՛չ ալ պատիւի համար էր որ գրեցին : Ուրեմն ինչո՞ւ այսչափ զոհողութիւն , լոկ ուրիշները խաբելո՞ւ կամ . . . առասպել՞ մը երեւան բերելու համար : Արդեօք մարդիկ դիւրաւ կը խաբուին , խաբուեցան առաջին դարու բոլոր քրիստոնեաները , որոնք մարտիրոսացան Աւետարաններու քարոզած Յիսուսին համար՝ որուն հեղինակները խաբերաներ էին , ինչպէս ոմանք ենթադրել կ'ուզեն :

Ուրեմն կ'ուզանք սա եզրակացութեան թէ՛ ակոնք վաւերական , պատմական դեպքերու արձանագրութիւնը կը բովանդակեն և կամ ուրիշ խօսքով Աւետարանները կը վկայեն թէ Յիսուս անուշով մէկը ասկէ իբր 20 դարեր առաջ Պաղեստինի մէջ ծնած , ապրած և գործած է : Անոնք Յիսուսի կեանքին մակրաւաւսն նկարագրութիւնը , այսպէս ըսենք , կենսագրութիւնը չէ՛ որ կ'ուսանի իր ամէն մէկ փուլին մէջ , այլ աւելի կը պատմեն Անոր խօսքն ու կեանքը և ա՛սոր համար ծննդեան թուականի և այլ հաշիւներու մէջ չեն մտնէր . մանաւանդ որ Աւետարանիչները՝ անտեղի է նկատել արդի ըմբռնումով ներհուս

պատմագիրներ կամ կենսագիրներ և անոնցմէ սպասել կենսագրութեան մը ամբողջական ու ընդհանուր գիծերը ներկայացնել անթերի . ասկէ զատ կրնանք խորհիլ թէ աւետարանիչներուն համար Յիսուսի ո՛ր ատեն ծնած ըլլալու խնդիրէն աւելի Անոր կեանքը կարեւոր էր , ուստի իրենց ամբողջ ուշադրութիւնը ասոր շուրջ կը դարձնեն : Ըստ Բրոֆ . Ս . Հարնաքի , Աւետարանները մեզի կ'ուսանեն՝ Ս . Յիսուսի խօսքերուն կամ քարոզներուն մէկ պարզ ամփոփումը . Բ . կը պատմեն մեզի թէ ի՞նչպէս իր ծառայութեան գործէն իր կեանքը յառաջ եկաւ և Գ . թէ այս կեանքը ի՞նչ տեսակ ազդեցութիւն մը ունեցաւ աշակերտներուն վրայ :

Սակայն հոս ուրիշ հարց մը կը ծագի . եթէ ընդունինք որ Աւետարանները կը բերեն մեզի պատմական Յիսուսի մը խօսքն ու կեանքը , բայց անոնց բնագրի հարազատութեան մասին ի՞նչ սպացոյցներ կան . քննենք և այս պարագան :

2. ԲՆԱԳՐԻ ՔՆՆԱԳՐԱՏՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Դպրոցականներու արամադրութեան սակ գանուած Նոր Կտակարանի ամէնէն հնագոյն օրինակները 350 էն առաջ թուագրուած չեն : Ուրեմն հարցը սա է թէ , այժմ մեր ունեցած Աւետարաններու բնագրերուն հարազատութեանը՝ ի՞նչպէս կրնանք վստահ ըլլալ : Եթէ նոյն իսկ անա՛նկ ձեռագիրներ մեր ձեռքը անցնէին , որոնց վրայ նշանակուած ըլլային թէ անոնք բուն իսկ աւետարանիչներու ձեռքով գրուած են , մենք տա՛կաւին իրաւունք պիտի ունենայինք կասկած յարուցանել իրենց հարազատութեան մասին և զանոնք իրարու հետ բաղդատութեան պիտի դնէինք :

Բնագրի քննադատութեան գործը՝ ձեռագիրներու

համարներու և վիայութեանց իրարու հետ բազմաառ-  
թեան չի բազկանար միայն: Անիկա ուղիղ կերպով կը  
հետևի գիտական մեթոաներուն և իրողութիւնները մէջ-  
տեղ կը բերէ մականական (Inductive) եզանակով: Ուրե-  
մըն ճշմարտութիւնը երևան կը բերուի ծանօթ իրողու-  
թեանց միջոցաւ: Ինչպէս որ բնական գիտութեան սահ-  
մանին մէջ հետախուզող անձը կը հրաւիրուի որ արտա-  
դրէ դիտողութեան սահմանին մէջ գտնուող ծանօթ պատ-  
ճառ մը և սահկա կատարելագէտ համաձայնի նկատողու-  
թեան տակ գտնուած բներևոյթներուն հետ, ասանկ ալ  
բնագրի քննադատին դործն է նկատի առնել ձեռագիր-  
ներու մէջ գտնուած զանազանութիւնները՝ անանկ բնա-  
կան սկզբունքներու համաձայն, որ բուն համարին կամ  
բնագրին ճշմարիտ հանգամանքը անտարակուսկի կերպով  
ապացուցուի: Այսպէս բուն կամ ճշմարիտ բնագիրը կը  
համաձայնի բոլոր տարբեր ձեռագիրներուն հետ:

Բնագրի քննադատը ծանօթ է մարդկային մտքի ըն-  
դունակութեան սահմանափակ ըլլալուն և ասկէ զատ նաև  
այն շարժառիթներուն, որոնք մարդկային գործերը յաճախ  
կը կառավարեն: Մարդուն մտաւոր ոյժը այնպիսի կերպով  
մը միացած է իր ֆիզիքական կազմութեան յարափոփոխ  
տարբերուն հետ, որ նոյնիսկ շատ անգամ իր լաւագոյն  
մտածութիւնը և գիտաւորութիւնը ճշդիւ չի կրնար  
արտայայտել: Այսպէս մարդկային որևէ ձեռնարկի մէջ երբ  
տարբերութիւններ կը նշմարուին, ֆիզիքականը իր բա-  
ժինը ունի: Երկու դիտող աչքեր՝ նոյնը չեն կրնար ըլ-  
լալ, մէկը՝ մէկ կերպով կը տեսնէ, միւսը՝ ուրիշ կեր-  
պով՝ և ասկէ զատ, աչքի տեսութեան սրութիւնը միշտ  
ներդաշնակութեան մէջ պահել կարելի չէ՝: Աստղագէտը  
երկինքի փաղփուռ և լուսաչող աստղերը դիտելէ վերջ, իր  
աչքերը պահ մը սեւ աւարկայի մը վրայ կը դարձնէ: Հաս-  
տատուած է որ մտքով յոգնած անձեր՝ որոնք սպազբա-

կան գործերու կը հսկեն, սխալները դիւրին կերպով չեն  
կրնար գտնուի. անա՛ւ ասոր համար մեր ֆիզիքական և մը-  
տաւոր աշխատութիւններուն սահման դնել կարելոր է:

Ահա այս պատճառին կարելի է վերագրել միեւնոյն  
անձին կողմէ գրուած երկու ձեռագիրներու մէջտեղ գտնու-  
ած տարբերութիւններու գոյութիւնը՝ մէկը միւսէն քիչ  
թէ շատ տարբեր կ'ըլլայ: Նոյն իսկ տպուած միեւնոյն  
օրինակներու մէջ ալ տարբերութիւններ կը մտնեն, երբ  
Ա. Էն վերջ, Բ. Գ. տպագրութիւններ ալ կը կատարուին  
դարձեալ նոյն բնագրէն: Օր. համար, Յակոբ Բ. ի հրա-  
մանաւ կատարուած Ս. Գրոց թարգմանութեան առաջին  
տպագրութիւնը (Անդլ. լեզուաւ) 1611 ին լոյս տեսաւ.  
Եթէ այս տպագրութիւնը բաղդատենք 1613 ի տպագրու-  
թեան հետ, 400 էն աւելի տարբերութիւններ պիտի նըշ-  
մարուին: Այս տարբերութիւններուն մէջ ուշագրաւ կէ-  
տեր կան: 1613 ի տպագրութեան մէջ Յովհ. Ի 25 հա-  
մարին «ու մաստ բեւեռներուն տեղը յիսթիս» նախագա-  
սութիւնը բոլորովին զանց առնուած է: 1632 ին երեւ-  
ցած տպագրութեան մէջ եօթներորդ պատուիրանին «մի»  
բառը զանց առնուած է, և ին. և ին: Եթէ միեւնոյն տը-  
պարանին մէջ վերստին տպուած նոյն գրքին Ա. Բ. և Գ.  
տպագրութեանց մէջ փոփոխութիւններ կը մտնեն, հապա  
որչոյսի աւելի շատ անգիտակից սխալներ կրնան սպրդիլ  
միեւնոյն անձի կողմէ ընդօրինակուած շատ մը ձեռագիր-  
ներու մէջտեղ: Այսպէս 1600 ձեռագիր Աւետարաններու  
մէջտեղ գտնուած տարբերութիւնը՝ քննադատներու հաշ-  
ուով, 120,000 ի կը հասնի: Սակայն ի՞նչ են այս տարբե-  
րութիւնները: Մէկ երկու օրինակներ կը բաւեն հաստա-  
տելու համար թէ անոնք պատմութեան բուն ոգիին կաւ ի-  
մասին բնա՛ւ չեն վնասեր: Օր. համար, տեղ մը ըսուած  
է «Տէրոջը թագաւորութիւնը», ուրիշ տեղ մը «Աստու-  
ծոյ թագաւորութիւնը»: Մէկուն մէջ «Եսայի մարգարէն»,

ուրիշի մը մէջ «մարգարէն Եսայի»: Օրինակի մը մէջ «Յիսուս Քրիստոս մեր Տէրը», ուրիշի մը մէջ «Մեր Տէրը Յիսուս Քրիստոս»: Ահա եղած աննշան տարբերութիւնները որոնք ձեռագիրներու մէջ կը նշմարուին և ինչպէս կը տեսնուի, իմաստի վրայ կրնէք չեն ազդեր: Այս տարբերութիւններու բուն պատճառը հասկնալու համար, Ա. նկատի առնելու ենք դարը՝ որու մէջ գրուեցան անոնք, արպագրութիւն չկար: Բ. ընդօրինակողներու անուշադրութիւնը, և Գ. կէտադրութեան կանոնի և նոյն իսկ բառերը իրարմէ անջատելու պակասը, ինչպէս կը ցուցնեն կարգ մը ձեռագիրներ և Դ. լուսանցքի մէջ գրելու դրութիւնը, ինչպէս սովորութիւն է ամէն դարու մէջ: Երկու խօսքով բացատրենք այս վերջին կէտը. մէկը ձեռագիր մը կարդալու ատեն այս ինչ սողին կամ խօսքին դէմ իր կողմէն բառ մը կամ խօսք մը կ'աւելցնէ լուսանցքին մէջ, վերջէն երբ ուրիշ մը այս ձեռագրին վրայէն ընդօրինակութիւն կը կատարէ, ուրիշի մը կողմէն աւելցուած այս բառը կամ խօսքը բնագրինը կամ հեղինակինը կարծելով կը մայնէ իր ընդօրինակութեան մէջ և ահա յառաջ կուգայ տարբերութիւնը:

Սակայն հոս ուրիշ հարց մը եւս կը ծագի. միթէ Աւետարանները զիրար չեն հերքեր իբրև իրարու հակասական, քանի որ անոնք միեւնոյն դէպքի վրայ երբեմն տարբեր տեղեկութիւններ կը բովանդակեն: Այս հարցին պատասխանը տալէ առաջ երկու կէտեր մեր ուշադրութիւնը կը գրաւեն. Ա. Աւետարանիչները ո՛րեւէ դէպքի մանրամասն նկարագրութիւնը չեն տար, այլ համառօտ մէկ ամփոփումը՝ իւրաքանչիւրը իր տեսակէտէն և, Բ. Անոնք ժամանակագրական կարգերու կարեւորութիւն չեն տար:

Այժմ տանք հարցին պատասխանը մէկ երկու օրինակներ յառաջ բերելով: Մատթէոս կ'ըսէ թէ Յիսուս Ե-

րիքովի մօտ ետևը կայրերու աչքերը բացաւ. (Մատթ. Թ. 27-31) իսկ Մարկոս (Ը. 22-26) և Ղուկաս (ԺԸ. 35-43) կ'ըսեն թէ մեկ կայրի աչքը բացաւ: Դորձեալ Մատթէոս և Մարկոս կ'ըսեն թէ՛ այս հրաշքը տեղի ունեցաւ Յիսուսի Երիքովէն մեկնած ատենը, իսկ Ղուկաս կ'ըսէ թէ Երիքովի մօտեցած ատենը: Կայ իրական հակասութիւն մը ասոր մէջ, թէ եւ երեւութապէս անանկ կը թուի: Արդեօք չենք կրնար համաձայնեցնել այս տարբեր տեսակէտէ պատմուած միեւնոյն դէպքին երեւութական տարբերութիւնները: Անշուշտ կրնանք, և բանաւոր չե՞ խօսիլ թէ Յիսուս բացաւ կայրի մը աչքը Երիքով մօտ պահուն, ինչպէս կ'ըսէ Ղուկաս, և անկէ ելած ժամանակն ալ ուրիշ կայրի մը աչքերը բացաւ, ինչպէս կ'ըսէ Մարկոս: Իսկ Մատթէոս ալ երկու կայրերուն պարագան համառօտ կերպով միասին կը պատմէ եւ այս պարագային կայրերուն մէկը բժշկած կ'ըլլայ քաղաքին մօտեցած ատենը, իսկ միւսը մեկնած ատենը: Ուրեմն տարբերութիւնը երեւութական է, իրողութիւնը կը մնայ արձանագրուած 4 Աւետարաններուն մէջ ալ, այսինքն Յիսուս կայրը կամ կայրերը բժշկեց:

Առնենք Յիսուսի որ ժամուն խաչուած ըլլալու պարագան: Ըստ Մատթէոսի, Յիսուս խաչուեցաւ երրորդ ժամուն, իսկ Ըստ Յովհաննէսի, դեռ վեցերորդ ժամն էր երբ Պիլատոս սկսաւ դատել զՅիսուս: Ինչպէ՞ս մեկնել այս տարբերութիւնը: Յովհաննէս Աւետարանին ուրիշ մասերէն կ'ենթադրուի թէ Յովհաննէս ըստ Հռովմայեցեաց կը հաշուէ ժամերը կէս գիշերէն սկսելով, իսկ Մարկոս Հրէական սովորութեան համաձայն, արեւին ծագումէն ըսկսելով կը հաշուէ: Գերմանացի նշանաւոր մեկնիչ մը այս մեկնութիւնը բանաւոր կը նկատէ: Ենթադրենք որ ճամբան քաղած ատենը երկու մարդոց կը հանդիպուի և ժամը քանին ըլլալը գիտնալ ուզելով կը հարցնես մէկուն. «Բա՛րեկամ, ժամը քանի՞ն է» և ան կը պատասխան «12ն

«է իսկ միւսը կ'ըսէ «4,50ն է» . ասոր մէջ հակասութիւն կա՞յ, երբ Ա. Մարդը Ը. Ե. 12ն է կ'ըսէ, իսկ Բ. ը թէ Ը. Թ. 4. 50ն է:

Դարձեալ իբրև վերջին օրինակ, առնենք Յիսուսի ցեղաբանութեան պարագան, որ վիճաբանութեան նիւթ կը հայթայթէ հակառակորդներուն: Աւետարանիչներէն երկուքը, Մատթէոս և Ղուկաս, կուտան Յիսուսի ցեղաբանութիւնը, որոնց հաշիւները իրարմէ կը սարբերին: Մատթէոս իր ճիւղահամարը կը տանի մինչև Արքանամ իսկ Ղուկաս մինչև Ադամ. այսպէս առաջինը կը ներկայացնէ զՅիսուս Դաւիթի սերունդէն կամ Արքանամու եղած խոստմունքէն, իսկ վերջինը կը ներկայացնէ զԱյն բոլոր մարդոց նախահայրէն՝ Ադամէն և կամ Աստուծոմէ ամէնէն վերջը աւելցնելով «Որ յԱստուծոյ:» Մատթէոս իրերը կամ զէպրերը հաւաքելու, զանոնք մէկ խումբ կազմելու իր յատուկ մէթոտովը կ'երեւի ցեղաբանական այս հաշիւին մէջ ալ, ինչպէս իր Աւետարանին ուրիշ պատմութեանց մէջ ակնյայտնի է սա և այսպէս երեք հաւաքական բաժանումներ կ'ընէ, որոնց իւրաքանչիւրին մէջ տամնեւ չորս ազգ կը համրէ, իսկ Ղուկաս այս հաշիւին կարեւորութիւն չիտար: Առաջին աւետարանիչը երբայցի ընթերցողներու համար գրած ըլլալով իր Աւետարանը, Յիսուսը Դաւիթի (խոստմունքի) սերունդէն կը ներկայացնէ, իսկ Ղուկաս բոլոր մարդոց նախահայրէն: Դարձեալ յայտնի է որ Մատթէոսինը Յիսուսի հօր կողմէ իսկ Ղուկասինը մօր կողմէ սերունդը կը պարզէ: Ղուկասուտուած վերջին ճիւղահամարի անունը «որ ան Հեղիին» տարբեր մէկ ձևն է Յովակիմի: Սակայն ԻՐՈՂՈՒԹԻԻՆԸ կը մնայ միշտ իրողութիւն. Յիսուս աշխարհ կուգայ: Իրանելի է որ ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ և ո՛չ ալ յետագայ դարերու մէջ մարդիկ վիճաբանութիւն ըրին այս ցեղաբանական հաշիւներուն վրայ. անոնց համար խոշոր իրենք

կար ու կը մնար նոյնիսկ ցեղաբանական այդ անորոշ (?) ենթադրուած հաշիւին մէջ: Ա. դարեկն անսխալապէս վերջ մեծ վիճաբանութիւններ եղան Յիսուսի աստուածորդի ըլլալուն կամ չըլլալուն շուրջ, բայց ԲՆԱԻ չկաւ ո՛րէք վիճաբանութիւն Անոր ճիւղահամարի մասին: ԻՆչ էր պատճառը. վասնզի խոսվելու պէտք չունէին. անոնք ԳԻՏԷԻՆ ու կը ՀԱԻԱՍՏՅԻՆ որ Յիսուս իրապէս աշխարհ եկաւ և ապրեցաւ. աւելին պէտք չունէին: Նոյն իսկ աւետարանիչներուն՝ Ա. դարուն կէսէն անդին երբ գրեցին իրենց աւետարանները և սուին նաև Յիսուսի ցեղաբանական հաշիւն ալ, հաւատարմորեկն ակամակամեղաւ առջեւ այդ հաշիւներուն տուիլը գորաւոր փաստ մը չի՞, քէ իրենց երեւակայութեանէն չի՞ր որ գրեցին այդ ցեղաբանութիւնը: Մենք Յիսուսի պատմականութեան հաւատարմութեան համար պէտք չունինք ճիւղահամարական հաշիւներու քսան ամբողջ դարեր կը վկային անոր: Նոյնիսկ տեսնուած անշանք տարբերութեանց մէջ երեւան կուգայ աւետարաններու հարազատութիւնը և կը շեշտէ սա ճշմարտութիւնը թէ, աւետարանի հեղինակները նպատակաւոր սուս մը յերկրելու համար չէր որ իրարու միացան. և թէ այդպէս ըլլար, անոնք ամէն կերպով պիտի ջանային համաձայնեցնել իրենց գրութիւնները իրարու հետ:

Ուրեմն բնագրի քննադատութիւնը վկայ կը կանգնի աւետարաններու հարազատութեան:

### 3. ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹ ԻՒՆԸ

Յունական չորս ձեռագրեր գտնուած են թանկագին ու արժէքաւոր, որոնք մեծ ծառայութիւն մատուցին ընդհանրատուութեան և սկան ասպոցուցանել թէ ներկայ Աւետարանները հարազատ և նախնական բնագրերու համաձայն են: Թուենք այս չորս ձեռագրերը և անոնց մասին

ամիսի տեղեկութիւններ տանք :

1. «Սինայի ձեռագիր» կամ Ալէֆ (Aleph) : Այս ձեռագիրը գտնուեցաւ հռչակաւոր քննադատ-գործակցանի մը՝ Թիւէնտորֆի ձեռամբ 1859ին, Սինա լեռան վրայ գտնուող Ս. Կատարինէի մենաստանէն՝ ուր փոշիներու կոյտին տակ թաղուած կը մնար երկա՛ր դարերէ ի վեր : Այս ձեռագիրը ընտիր մագաղաթի վրայ գրուած է և կը բովանդակէ Նոր Կտակարանին ամբողջ թուղթերը : Չեռագրին ձեւէն, չորսրոգ դարու կիսուն պատկանող գործ մը ըլլալը ընդունուած է բոլոր քննադատներուն կողմէ : Արդարեւ կ'ընդունուի թէ 331 ին Կոստանդինոս կայսեր հրամանաւ և եկեղեցական Պատմութեան մեծ գէմբերէն Եւսեբիոսի (Eusebios) հեղուցեան տակ գրուած 50 ձեռագիր Աւետարաններուն մէկն ըլլալու է ասիկա :

2. A. «Ալեքսանդրիոյ ձեռագիր» : Այս ձեռագիրը Կ. Պոլսոյ պատրիարքին կողմէ Անգլիոյ Կարոլոս թագաւորին ընծայ գրկուեցաւ և վերջինն ալ փոխադարձաբար Բրիտանական Միւսէոնին (Musoum) ընծայեց՝ ուր ցա՛րդ կը մնայ : Նոր Կտակարանի գրեթէ բոլոր գրքերը կը բովանդակէ և մագաղաթի վրայ ձեռագիր գլխադրերով գրուած է, բառերու մէջ բաժանուած չունի, ո՛չ ալ կէտադրութիւն : Կը կարծուի թէ հինգերորդ դարու գործ է :

3. B. Վատիկանի Չեռագիր (Codex Vaticanus) : Չի գիտցուիր թէ այս ձեռագիրը ե՞րբ գրկուեցաւ Հռովմ՝ որ ամբողջ 4 Աւետարանները և Նոր Կտակարանի թուղթերը կը բովանդակէ : Իր էջերը քառածալ են : Չեռագիրի իւրաքանչիւր էջը երեք սիւնակներ ունի և իւրաքանչիւր սիւնակի մէջ 42 տողեր կան, բացի տողի ծայրերէն, բառերու մէջտեղերը միջոցներ չկան : Կը կարծուի թէ 350 ին գրուած է :

4. J. Պեզայի ձեռագիր (Codex Beza) : Այս Չեռագիրը երկու սիւնակի բաժնուած է մէջտեղէն, որուն մէկ կողմը

Յունարէն և միւս կողմը Լատինարէն լեզուով գրուած են նոյն խօսքերը : Նշանաւոր գործակցան մը՝ Պէզա, Լիւնի մէկ վանքէն գտաւ ասիկա 1562 ին, երբ քաղաքը կը կողոպտուէր և նուիրեց Օւնգլիոյ Քէյմպրիձ համալսարանին, որուն գանձերէն մէկը կը կազմէ :

Վերոգրեալ չորս ձեռագիրերէն զատ, կան ուրիշ բազմաթիւ ձեռագրեր ալ, որոնցմէ ոմանք Նոր Կտակարանի ամբողջ, ոմանք ալ լոկ մէկ քանի մասերը կը բովանդակեն : Այս բոլոր ձեռագրերը երբ իրարու և չորս Աւետարաններուն հետ բաղդատուին, իմաստի տեսակէտով կատարելապէս կը համաձայնին իրարու հետ : Նշմարուած տարբերութիւնները՝ որուն պատճառը տուող պարագաները նախապէս թուեցինք, աննշան են : Մէկ երկու օրինակը տանք լուսարանութեան համար : Մարկոսի Աւետարանի Ը. Գլ. 21րդ համարը՝ «Գիւղը մի՛ մտնէր ու տարանին Ը. Գլ. 21րդ համարը՝ «Գիւղը մի՛ ըսեր»ը՝ Սինայի և Վատիկանի գիւղին մէջ մէկուն մի՛ ըսեր»ը՝ «Գիւղը մի՛ մտնէր» ձեռագրերուն մէջ կը կարգացուին՝ «Գիւղը մի՛ մտնէր» մինչդեռ Պէզայի ձեռագիրը կ'ըսէ «Գիւղին մէջ մէկուն մի՛ ըսեր», իսկ Ալեքսանդրիոյ ձեռագիրը՝ «Գիւղը մի՛ երթար ու մէկու մը մի՛ պատմեր գիւղին մէջ» : Ի՛նչպէս կը տեսնուի, չորս հին ձեռագրերը իմաստի կողմէ կատարելապէս կը համաձայնին Մարկոսի հետ և նաև փոխադարձաբար իրարու հետ : Դարձեալ Մարկ. Թ. 49րդ համարը՝ ձաբար իրարու հետ : Դարձեալ Մարկ. Թ. 49րդ համարը՝ «Սմէն զո՛ն աղով պիտի աղուի», Սինայի և Վատիկանի ձեռագրերուն մէջ կը կարգացուին՝ «Սմէն բան կրակով պիտի աղուի», մինչ Պէզայի ձեռագիրը կ'ըսէ, «Սմէն զո՛ն աղով պիտի աղուի», իսկ Ալեքսանդրիոյ ձեռագիրը երկու ջրը իրար միացուցած կը կարգացուի, «Վասնզի ամէն բան քը իրար միացուցած կը կարգացուի, «Վասնզի ամէն բան քը իրար միացուցած կը կարգացուի, «Վասնզի ամէն բան քը իրար միացուցած կը կարգացուի, և ա՛մէն զո՛ն աղով պիտի աղուի» : Այս համայններուն մէջ ալ իմաստի կատարեալ ներդաշնակութիւն կայ :

Երկու խօսք ձեռագրերու մասին : Ասոնք այժի մտր-



Թերէ պատրաստուած թանկագին մագաղաթներու վրայ կը գրուէին՝ իւրաքանչիւրը 50-60 սօկի արժողութեամբ: Ահագին աշխատութիւն և երկար ժամանակ կը տրուէր իւրաքանչիւր ձեռագիր օրինակի պատրաստութեան համար: Այս տեսակ մագաղաթներ գոյութիւն ունէին Ա. դարէն անմիջապէս վերջ և կամ չորրորդ դարուն վերջանալէն առաջ: Ի՞նչ կը ցուցնէ ասիկա. թէ՛ Քրիստոնէութիւնը անմիջապէս կրօնք մըն էր և թէ Յիսուս պատմական դէմք մը: Այս ձեռագրերը կը պատրաստուէին Անտիօքի և Ալէքսանտրիոյ մէջ, որոնք մտաւորական ջանք էին Քրիստոնէութեան առաջին մէկ քանի դարերուն մէջ:

Այսպէս, այս հին ձեռագիրներու գոյութիւնը կուգայ ապացուցանել մեր այժմեան Աւետարաններուն հարազատութիւնը:

#### 4. ԵԿԵՂԵՅԻՈՅ ՀԱՅՐԵՐՈՒՆ ՎԿՍՅՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցւոյ հայրերուն հեղինակութիւններն ալ առատ վկայութիւններ կամ համարներ կը բովանդակեն Նոր Կրտակարանէն և այսպէս անուղղակի կերպով կուգան ապացուցանել Աւետարաններուն հարազատութիւնը: Յիշենք զլսաւորները:

1. Որոգինես (Origen). Եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն մէկը, որ քրիստոնէական կրօնը սորվեցնող էր՝ Աղեքսանդրիոյ մէջ 230 ին, Յուն, լեզուով մեկնութիւններ գրեց Աւետարաններուն վրայ: Իր գրութիւններուն մէջ ալ անհամար վկայութիւններ ունի Աւետարաններէն և մանաւանդ կ'երեւի թէ մասնաւոր կերպով ուշադրութիւն կուտար մինչև անգամ ձեռագրերու մէջտեղ գտնուած անշան տարբերութիւններուն:

2. Կղեմես Աղեքսանդրացի. (Clement of Alexandria) Որոգինէսի ուսուցիչը՝ որ հեթանոսութենէ քրիստո-

նէութեան դարձաւ: Ծնած էր 150 ին և մաքրով չա՛տ դարգացած ըլլալով. ծանօթ էր իր դարու փիլիսոփայութեան և մասնագրութեան: Շատ գրքեր գրած է, որոնց մէջ Աւետարաններէն բազմաթիւ համարներ կան: Որովհետև ինք ծանօթ էր ձեռագրին երէցներու՝ որոնք քրիստոնէական Ա. դարուն մէջ ծնած էին, քանի որ ինքն ալ 150 ին ծնած էր, անոնցմէ սորված էր չորս Աւետարաններուն հիմնական կարգը:

3. Երսուս (Ireneus) 140-170: Աւետարաններու մասին իր առում վկայութիւնը արժէքաւոր է և վճռական. վասնզի ինք Պողիկարպոսի աշակերտն էր, իսկ աս ալ Յովհաննէս աւետարանիչին: Իր հեղինակութիւններէն հինգը միայն մեզ հասած են, որոնց մէջ կը խօսի Աւետարաններուն մասին: Լսենք իր վկայութիւնը. «Մենք փրկութեան ձամբան սորվեցանք ուղղակի անոնցմէ, որոնք մեզի Աւետարանը առին զոր, առաջին անգամ քարոզեցին և յետոյ զրի առին, որպէսզի ազգային մէջ հաւատքի հիմ առ սին ըլլայ: Որովհետև անոնք մեր Տէրօջր Յարուսթենէն վերջ, վերէն զօրութիւն ապին և Ս. Հոգիին միջոցաւ ամէն բանի մասին կատարեալ գիտութիւն ստացան: Յետոյ ցրուեցան երկրիս չորս կողմերը Աւետարանը քարոզելու համար: Մասթէոս Հրէից մէջ գտնուելով նր քարոզելու համար: Մասթէոս Հրէից մէջ գտնուելով Աւետարանը անոնց լեզուով գրեց, Պողոսի ընկերը գրեց զայն Պողոսի քարոզութեան համաձայն: Մարկոս աւանդեց մեզ ինչ որ Պետրոսէն ըսած էր և վերջապէս Յովհաննէս Եփեսոսի մէջ հրատարակեց իր Աւետարանը:»

4. Տերտուլիանոս (Tertulian) Հեթանոս ծնողքի զաւակ, ծնաւ 160 ին Կարթեգոնի մէջ: Ուստալ և հմուտ անձ մըն էր: Իր գրութեանց մէջ կ'ըսէ թէ Աւետարանները և ուրիշ առաքելական գրութիւնները ապահով իրենց ձեռքը հասած էին: Ինք ալ չորս Աւետարաններէն շատ մէջըրեւումներ կ'ընէ իր գրութիւններուն մէջ:

Ասոնց վրայ աւելցնենք նաեւ հերետիկոսի մը Մարկիոնի (Marcion) վկայութիւնը: Ինք մերժեց բոլորովին Հին Կտակարանի ամբողջ գրութիւնները, մերժեց նաեւ Նոր կտակարանի բոլոր թուղթերն ալ, և ընդունեց միայն Ղուկասի Աւետարանին մէկ մասը որ համաձայն կուգար իր վարդապետութեան: Ինք Յուստինոսի ժամանակակից էր՝ այսինքն կ'ապրէր 140 ի ատենները: Շատ ազէկ, ինչ կը ցուցնէ իր Նոր կտակարանի բոլոր թուղթերուն՝ բացի Ղուկասու Աւետարանին մէկ մասէն, մերժելը — թէ Աւետարանները Բ. դարէն առաջ գոյութիւն ունէին և ուստի հարազատ են անոնք:

Ինչպէս ըսինք նախապէս, ա՛յսպէս անուղակի կերպով եկեղեցւոյ հայրերու գրութիւններն ա՛լ լեցո՛ւն են Աւետարաններու համարներով, որոնք կ'ապահովեն անոնց հարազատութիւնը:

### 5. ԹՈՒՍԿԱՆԻ ՀՍՐՅԸ

Աւետարաններու հարազատութեան հարցին հետ սերտորէն կապ ունի անոնց թուականի խնդիրը. վասնզի պէտք է ապացուցուի անոնց Ա. դարու մէջ գրուած ըլլալը: Գնահատանք չորս Աւետարաններու թուականին մասին տարակարծիք են, սակայն մեծ մասը կ'ընդունին անոնց Ա. դարու կէսէն անդին գրուած ըլլալը: Առաջին անգամ Մարկոս իր Աւետարանը գրեց, ինչպէս բոլոր քննադատներ կը միաբանին, ըստ Բրոֆ. Բիքի, 75էն առաջ, յետոյ Մատթէոս՝ 75ի ատենները, յետոյ Ղուկաս՝ 75էն վերջ, իսկ չորրորդ Աւետարանը գրուեցաւ ա՛ւելի ուշ՝ Ա. դարու վերջնապու ատենները: Հոս սակայն հարց մը կը ծագի. «Ինչո՞ւ մինչեւ այդ թուականները Աւետարանները չգրուեցան»: Ասոր պատասխանը պարզ է, որովհետեւ Յիսուսի կեանքը և խօսքերը աշակերտներու և հաւատացեալներու

սրտերուն և մտքերուն վրայ տպաւորուած, կարծես յուսանկարուած էին: Սակայն երբ հաւատացեալներու թիւը երթալով աճեցաւ և նոյն ատեն առաքեալները ծերացան, գրաւոր յիշատակագիրներու կարեւորութիւնը զգալի դարձաւ, և ասոր համար Աւետարանները գրուեցան:

Աւետարանները առասպելական գրութիւններ ներկայացնելու մարմաջէն բռնուող մէկ քանի քննադատներ անոնց Ա. դարու մէջ գրուած ըլլալը կը ջանան ժխտել, սակայն արտաքին և ներքին շատ մը փաստեր միաբան կը վկայեն անոնց Ա. դարու մէջ գրուած ըլլալը: Իբր արտաքին ապացոյց, Եկեղեցւոյ հայրերու գրութիւնները՝ որոնց մասին քիչ առաջ խօսեցանք, կը բաւեն. քանի որ անոնք Բ. դարու մէջ գրեցին և ինչպէս իրենց գրութիւններէն կը յայտնուի, այդ միջոցին ա՛րդէն Աւետարանները գոյութիւն ունէին պաշտօնապէս: Ուստի այժմ քննենք թէ կա՞ն ներքին ապացոյցներ բուն իսկ Աւետարաններուն մէջ՝ որոնցմով հաստատուի անոնց Ա. դարու մէջ գրուած ըլլալը և ուստի հարազատութիւնը:

Ներքին գլխաւոր փաստերուն մէկ ամփոփումը կ'ուսանք հետեւելով Բրոֆ. Հուխարըքորթի:

1. «Երկրորդ և երրորդ դարերու մէջ շատ վիճաբանութիւններ տեղի ունեցան Քրիստոնեաներուն և Հրեաներուն կամ Քրիստոնեաներուն և հեթանոսներուն մէջտեղ, որոնց կամ Քրիստոնեաներուն և հեթանոսներուն մէջ, մինչմասին բա՛ն մը իսկ չըսուի Աւետարաններուն մէջ, մինչդեռ Առաքելոց թուղթերուն մէջ անոնց յիշատակութիւնը կ'ըլլայ. քանի որ անոնք Աւետարաններէն ա՛ւելի ուշ գրուեցան: Բ. դարու մէջ Գնոստիկեան աղանդաւորներ կրան վիճաբանեցան Քրիստոնեաներու հետ, սակայն Աւետարաններուն մէջ այս տեսակ վիճաբանութեանց հետեւին իսկ չի նշմարուի: Քրիստոնէական դարէն վերջ ապրող եկեղեցւոյ հայրեր Երանոս, Տերտուլիանոս, Յուստինոս Մարտիրոս իրենց գրութիւններուն մէջ կը խօսին

Գնտախիկեան աղանդաւորներու մասին :

2. «Առաքելական դարէն անմիջապէս վերջ տիրող կարգ մը խնդիրներու, կարծիքներու և վիճարանութիւններու բացակայութիւնը Աւետարաններու մէջէն՝ կ'ենթադրէ թէ անոնք Առաքելոց թուղթերէն շատ կանուխ գրուեցան : Կռաքերու զոհ մատուցանելու խնդիրը, մարմնաւոր Յարութեան գաղափարը, Հաղարամեան, Նեւին գալը, և ին. և ին, այս տեսակ հարցերէն էին :

3. «Քրիստոնեաներու մէջ տիրող կարգ մը սովորութիւններու արձանագրութեան բացակայութիւնն ալ կը ցուցնէ Աւետարաններուն կանուխ գրուիլը . միայն Մկրտութեան վրայ կը խօսուի, բայց և ո՛չ մէկ բան Շարժի, Կիրակնօրեայ հաւաքոյթիներու, միւր արիւնտով չուտելու խնդրոյն և ին. ի մասին :

4. «Քրիստոնեայ» բառին բացակայութիւնն ալ՝ որուն կը հանդիպինք առաջին անգամ Գործ. ԺԱ. 26ին մէջ, կը հաստատէ թէ Աւետարանները շատ կանուխ գրուեցան : Աւելի ուշ քրիստոնեաներու մէջ սովորական եղող բառեր ալ, օր. համար, «անհաւատ», «անօրէն», և ին, չեն գործածուիր Աւետարաններուն մէջ այն իմաստով՝ որով անոնք կը գործածուին առաքելական թուղթերուն մէջ :

5. «Հեթանոսական և ժողովրդական խաղերու, գերութեան և ին. ի մասին, որոնց քրիստոնեաները յարեցան», Աւետարաններու մէջ բան մը չի խօսուիր, մինչդեռ առաքելական թուղթերուն մէջ կան այդ կարգի յիշատակութիւններ :

6. «Ներոնի և Անդրիանոսի օրով եղած պատերազմներու մասին ո՛րեւէ բան չըսուիր մինչդեռ, անոնք պատմական կարեւորութիւն ունէին, քանի որ Երուսաղէմ այդ պատերազմներու երեսէն աւերակ եղաւ և Սողոմոնի տաճարին վրայ «Սատուոնի կամ Կռոնոսի» անուան տաճար

մըն ալ կառուցուեցաւ . ուստի եթէ Աւետարանները ուշ գրուած ըլլային, այս մասին յիշատակութիւն ընելու էին :

Այսպէս ուրեմն բոլոր պարագաները կը միանան և կ'ապացուցանեն Աւետարաններուն Ա. դարուն մէջ գրուած ըլլալը :

\* \* Ի՞նչու այսչափ շատ գրադուեցանք Աւետարաններու հարսագասութեան խնդրով :

Պատճառը պարզ է. ուրանալ Աւետարաններու հարադատութիւնը՝ կը նշանակէ ուրանալ Յիսուս և հետեւաբար Քրիստոնէութիւնը : Քրիստոնէութիւնը զո՞րքի կապուած կրօնի մը չէ՞, ասկիւ շխտակ է, սակայն քրիստոնեաներ Յիսուսի խօսքին ու կեանքին արձանագրութիւնները Աւետարաններուն մէջ կը գտնեն : Եւ անա՛յս Աւետարաններու հարազատ ըլլալուն կը վկային այն ամէն ներքին ու արտաքին փաստերն ու եղելութիւնները, զոր նկատի առինք :

Հապա Աւետարանին թշնամիներուն վկայութիւնը . Քրիստոնէութեան Ա. Բ. Գ. և Ե. դարերուն մէջ ապրող հեթանոսներ և անհաւատներ անգամ չ'այնդգնեցան ուրանալ Յիսուսի աշխարհ եկած ըլլալը . ո՛չ յանդգնեցան ուրանալ Աւետարանին գոյութիւնը, պատմական գիրք մը ըլլալը և Յիսուսի պատմական անձ մը ըլլալը : Լսեցինք ասկէ առաջ թէ Պողիկարպոս Յովնանէս առաքելալին աշակերտըն էր և Երանոս ալ՝ Պողիկարպոսի, շատ աղէկ, ինչպէս կրնար Պողիկարպոս ինք սուտ բանի մը հաւատալ և հաւատայնել ալ Երանոսի՝ որ հեթանոս էր և յետոյ դարձաւ Քրիստոնէութեան : Սուտ ու առատակական պատմութիւններ և գրքեր ո՞րչափ ասոն կրնան աւել, անչուշտ շատ քիչ ժամանակ : Սակայն 20 ամբողջ դարեր վկայ կը կանգնին Աւետարաններու հարազատութեանը, զիւրք մը՝ որ այնչափ երկար ստրած է, զիւրք մը՝ որ փիլիսոփաներու, զիտուներու, թագաւորներու, զպրոցականներու,

րու և հասարակ մարդոց գրադարաններուն, տուններուն մէջ կը պահուի և ո՛չ միայն ա՛յսչափ՝ այլ կը սիրուի, գիրք մը որ հին՝ բայց միշտ նոր է և վերջապէս գիրք մը որ ա՛մէն գլխաւոր լեզուներու թարգմանուած է և որուն իւրաքանչիւր համարներուն վրայ հարիւրաւոր քարտիկներ կը խօսուին, հարիւրաւոր հատորներ կը գրուին, ասանկ գիրք մը առասպելական կոչել պարզապէս ճերմակին սեւ կամ սեւին ճերմակ ըսել է, և ո՛չ ուրիշ բան, պարզապէս ճշմարտութեան հակառակիլ է: Խաչին թըշնամիներն անգամ չհանդգնեցան ուրանալ Խաչեալին պատմականութիւնը, Բընաններ անգամ չի համարձակեցան ուրանալ անոր աննման մարդ մը ըլլալը, թէեւ չտուին Անոր Աստուծոյ Որդի ըլլալու իրաւունքը, սակայն ահա՛ վերջին տասնեակ մը տարիներու մէջ մէկէն երան անձեր, որոնք համարձակեցան առասպելականացնել (?) Յիսուան ու Աւետարանը. . . Ո՛վ դար, ո՛վ ժամանակ. . . :

Այսպէս, ուրեմն, հարազատ Աւետարանները կը բերեն Հարազատ պատմական դէմքի մը՝ Յիսուսի խօսքն ու կեանքը:



Գ. Ա. Ռ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԵՒ ԼՕԿԻՆՅՈՒ  
ՅԻՍՈՒՍԸ (40—50?)

(Աւետարանին Գիտական-Քննական Վերլուծումը)

Նախընթաց երկու գրութիւններուն մէջ ջանացինք ասպացուցանել մեր այժմեան Աւետարաններուն հարազատութիւնը թէ՛ ներքին և թէ՛ արտաքին փաստերով, որպէսզի ասով կարենայինք ասպացուցանել նաև Յիսուսի պատմական դէմք մը ըլլալը: Սակայն թէև միջակ միաքը մեր տուած բացատրութիւններով և եզրակացութիւններով գոհանայ ու հաւատայ Աւետարաններուն վաւերական և Յիսուսի ալ պատմական ըլլալուն, (եթէ այդ մասին ուէ կասկած ունի) բայց ներկայ քննադատութիւնը կը մերժէ, ան չի համոզուիր այդ կերպով, և կը պնդէ որ ներկայ գիտական պատմութեան պահանջին համաձայն Աւետարաններուն մէջէն գտնենք Յիսուսի գործնական խօսքերուն պատմութիւնը և այս կերպանքին և խօսքերուն Անոր պատմական դէմք մը ըլլալը: Գերման գաղտնի քննադատ - հեղինակ անձնաւորութիւններէն Բրոֆ. Հարնաք, իրաւացիորէն դիտել կուտայ թէ, «Կար ժամանակ ժր. . . որ տանն մարդիկ գաղափարուած էին թէ, քրիստոնէական ամբողջ զըրականութիւնը՝ Նոր Կտակարանն ալ միասին, խարէութիւններու և ստութիւններու զանգուած մըն էր: Այդ գիտական ալ անցե՛ր է: (Հայեր ալ կ'երեւի թէ զըժ-ժամանակն ալ անցե՛ր է: (Հայեր ալ կ'երեւի թէ զըժ-բախտաբար դեռ նոր մտանք այդ չըջանը՝ այսինքն Ս. Գիրքը հին, փսած գիրք նկատելու գաղափարի չըջանին մէջ): Եկեղեցիին հնագոյն գրականութիւնը իր գլխաւոր կէտերուն մէջ, ինչպէս նաև իր ամենավերջին մանրամասնութեանց մէջ անգամ, վստահելի և արժանահաւատ է՝ եթէ գիտական - պատմական փորձի ալ ենթարկուի»: :

Մակայն միւս կողմէն կը սնդեն թէ մեր ներկայ Աւետարանները Յիսուսի մասին կը հաղորդեն անանկ խօսքեր և կը պատմեն անանկ գործեր՝ որոնք Անոր ժամանակակիցներուն ունեցած գաղափարներուն զուտ արդիւնքն են. այդ գաղափարները կամ տեսութիւնները ՚ի հարկէ հիմնովին սխալ և նախապաշարեալ չէին, սակայն այդ տեսութիւններուն պատճառաւ, Յիսուսի պատմական զուտ դիմելը մեզմէ մասամբ ծածկուած է և ազօտ կը թուի:

Տարբեր ժամանակներու մէջ շատ մը զանազան փորձեր եղած են երեւան բերելու համար «Պատմական Յիսուսը», սակայն մենք փորձենք թէ ներկայ ծանօթութեանց լոյսով կրնանք նոյնիսկ Աւետարաններուն մէջէն երեւան հանել Յիսուսի ճշգրիտ կենսագրութեան և բարոյական խօսքերուն (Teaching) մէկ ամփոփումը՝ որով հաստատուի Մեծ Ուսուցչին և Փրկչին իրական կեանքը՝ ճիշդ այն կերպով, որ երեւցաւ մարդոյ մէջ ասկէ 20 դար առաջ:

Վերջին տարիներու ընթացքին, այս նիւթին վրայ պատմաբաններու և ձեռնհաս անձերու կողմէ շատ մը փորձական ճառեր գրուած են՝ որոնք կատարելագէտ կը համաձայնին զիտական պատմութեան մեթոտին և կանոնին, ուստի ամփոփ կերպով նկատի առնենք անոնցմէ մէկ երկուքը մեր նպատակին հասնելու համար:

Ա. Բրոֆ. Շմէյտիլ (Shmiedel) իր Բնագատական Պատմութեան մէջ հետեւեալ նուագագոյն կանոնը, այսպէս ըսենք «նուագագոյն հիմը» (minimum basis) կը սահմանէ. «Երբ արտաքին պատմիչը իր առջեւ կը գտնէ պատմական յիշատակագիր մը՝ որ զիւցագնի մը մատուցուած երկրպագութեան վրայ կը խօսի, որուն մասին ուրիշ աղբիւրներէ տեղեկութիւն չի կրնար քաղել, այդ պարագային յիշատակագրին մէջէն կ'առնէ միայն այն մասերը՝ որոնք զիւցագնին մատուցուած երկրպագութեան հետ առնչու-

թիւն չունին՝ եթէ անոնք հաստատուած եղելութիւններ չեն»:

«Նոյն կարեւոր կանոնը և կամ սկզբունքը, կ'աւելցնէ յարգելի Բրոֆ. Է. կրնայ գործածուիլ նաև ապահովարար Աւետարաններուն համար, վասնզի անոնք ալ Յիսուսը պաշտօններուն կողմէ գրուած են»:

Յետոյ Բրոֆ. Է. հետեւեալ կերպով կը շարունակէ իր խօսքը:

«Մենք ալ կը պաշտենք Յիսուս անունով մէկը: Թէ Աւետարաններէն ո՞ր մէկը առաջ գրուեցաւ, մեզ համար կարեւոր չէ, վասնզի որոշ է թէ բերանացի աւանդութիւնը ծնունդ տուաւ գրաւոր Աւետարաններուն և ուսութիւնը ծնունդ տուաւ գրաւոր Աւետարանէն կամ երկուքէն միանգամայն Յիսուսի կեանքին պարզ պատմութիւնը քողիլ՝ որուն ուրիշներն ալ հետեւած են հաւատացեալներու օգուտին համար, այն առնելով, եթէ մեր գտած կէտերը քիչ ալ ըլլան, անոնք կ'երաշխաւորեն ո՛չ միայն իրենց բովանդակութեան ստուգութիւնը, այլ աւելին ալ, վասնզի եթէ այդ պարագային մնացեալ մասերը գտնուած պատմական պարզ իրողութեանց հետ նրբ կարագրով համաձայնին, ուրեմն կասկածէ ազատ կը մընան»:

Ուստի ըստ վերոգրեալ կանոնին, Բրոֆ. Շմէյտիլ կը գտնէ ինը համարներ, զոր կ'անուանէ «Հիմն Սիւններ» որոնցմով կը կազմուի Յիսուսի կեանքը և կ'ապահովուի Անոր պատմական դէմք մը ըլլալը:

Իր ընտրած ինը համարներն են, 1. «Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես.» (Մարկ. Ժ. 18): 2. «Ով որ Որդւոյ Մարդոյ դէմ բան կ'ըսէ պիտի ներուի անոր.» (Մատթ. Ժ. 32): 3. «Կ'ըսէին (Իր ազգականները) թէ ցնորած » (Մարկ. Գ. 20): 4. «Այն օրուան ու ժամուան համար մէկը չի գիտեր, ո՛չ երկինքի մէջ եղող հրեշտակները և

ն'չ ալ որդին» (Մարկ. ԺԳ. 32) : 5. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ գիտ թողուցիր» (Մարկ. ԺԵ. 34) : 6. «Այս ազգին նշան պիտի չարուի» (Մարկ. Ը. 12) : 7. «Աւ չէր կրնար հոն մէկ հրաչք ալ ընել» (Մարկ. Զ. 5) : 8. «Յիսուս իր աշակերտները կըզգուշացնէ փարիսեցոց խմորէն» (Մարկ. Ը. 14-20) : Եւ 9. Մատթ. ԺԱ. 5 բորգ համարը, որ կը ցուցնէ թէ Յովհաննէս Մկրտիչի հարցումին ի պատասխան Յիսուս ինչ լուր զրկեց անոր :

Ինչ որդիւնք ձեռք կը բերենք այս դատուած ինք համարներով .— Թէ Յիսուս՝ 1. մարդ մըն էր որ ամէն կողմ կը պատէր բարիք ընելով և իր շուրջ կը հաւաքէր հետեւողներու խումբ մը : 2. Թէ ներողամիտ գտնուեցաւ զինքը և իր խօսքերը ամբաստանող անձերուն : 3. Թէ իր Հօրը (Աստուծոյ) գերազոյն բարութիւնը ճանչցաւ : 4. Թէ իր ազգականները զինքը իրրեւ մարդ յիմար կարծեցին : 5. Թէ Յիսուս լուր զրկեց իրեն ժամանակակից մարգարէին՝ որուն հարցումին կը թուի թէ դրական պատասխան մը առաւ : 6. Թէ իր աշակերտները փարիսեցիներուն սխալ վարդապետութիւններէն զգուշացուց : 7. Թէ չէր գիտեր «Որդւոյ Մարդոյ» գալստեան ժամը ու թուականը : 8. Թէ իր երկրին մէջ գտնուած անհաւատութեանը վրայ զարմացաւ և վերջապէս 9. Թէ ան ամենէն լքուեցաւ, նոյն իսկ իր երկնաւոր Հօրմէն ալ ինչպէս ինք կարծեց : Այժմ նկատի առէք, խնդրեմ, կա՞յ ասոնց մէջ տղ մը, գաղափար մը, խօսք մը որ իր մէջ առասպելական տարր ունենայ : Նկատի առէք առասպելական բոլոր գրոյցները և գրուածքները ու դուք չպիտի կրնաք երբեք մտածական ասանկ մէթոտով մը պարզ և մարդկային կեանքի մը յստակ պատկերները երեւան բերել : Ինչ կը հետեւի ուրեմն այս պատմական-քննադատական մեթոտով ձեռք բերուած արդիւնքէն .— Թէ Յիսուս իրական դէմք մըն էր՝ որ ապրեցաւ և գործեց և

թէ Աւետարանները վերջապէս արժանահաւատ և ուղիղ լուրեր կուտան Անոր մասին : Եթէ մենք չկրնայինք գտնել ասանկ համարներ Աւետարաններուն մէջ, կասկածելու իրաւունք գուցէ պիտի կրնայինք ունենալ :

Բ. Այժմ տեսնենք թէ ինչ կ'ըսէ Տր. Վան Մանէն, Գերման Աստուածաբանը, մեր ներկայ Աւետարաններուն և Յիսուսի մասին :

Ան կ'ըսէ թէ՛ մեր ներկայ Աւետարանները իրենց հիմունքին ուրիշ նախնական կար բուն (primitive) Աւետարան մը որուն բնագիտը քեւ կորուսած է, սակայն անոր մասերը պահպանուած են մեր ներկայ Աւետարաններուն մէջ : Ուրեմն հարցումը որ անմիջապէս կը ծագի սա է՝ կըրնա՞նք պատմական կամ գիտական որեւէ մեթոտով մեր ներկայ առաջին երեք Համայնացոյց Աւետարաններէն (Synoptic) երեւան բերել անանկ «նախնական» աւետարան մը, որ Բրոք. Շմէտիլի և այս Աւետարաններուն մէջ տեղ գտնուի : Եթէ յաջողինք, այն ատեն մեծագոյն հարցը լուծուած կ'ըլլայ. վստահի պատմաբաններու որդեգրած կանոնին համաձայն, կրնանք Յիսուսի պարզ կենսագրութիւնը այս կերպով ձեռք բերել :

Բրոք. Ֆլինտըրս Բէթրի (Prof. Flinders Petrie) դեռ ասկէ միայն 3 տարի առաջ պատմական կանոններու համաձայն մեթոտ մը գտաւ, որուն բացատրութիւնը կը գտնենք իր «Աւետարաններուն զարգացումը [1910]» անուն գրքին մէջ : Իր մեթոտը սա է. Սիկնոյիքիներուն (Առաջին երեք համայնացոյց Աւետարաններն) մէջէն դուրս կը ձգէ միջանկեալ այն ամէն դէպքերը, որոնք նոյն կարգով իրամիջանկեալ այն ամէն դէպքերը, որ սիկնոյիքիներուն մէջ չունենան : «Ամէն դէպք կամ խօսքեր որ սիկնոյիքիներուն մէջ ալ : «Ամէն դէպք կամ խօսքեր որ սիկնոյիքիներուն մէջ չունենան և» կ'ըսէ ան : Այս պարագային մէջ պիտի մնան միայն այն մասերը, որոնք երեւին մէջ ալ կը գտնուին և



բիստանէութեան) դարձած ըլլալուն համար և ուղիցին զայն սպաննել, ինչո՞ւ չըսին. «Պօղոս. դուն սուտ կը խօսիս, ո՞ւր են Քրիստոսի յարութիւնը տեսնող շատ անձերը, ցոյց տուր մեզի:» Այ, անոնք ասանկ խօսք մը չհամարձակեցան ըսել, որովհետեւ, թէ և թշնամի էին Քրիստոսին ու Քրիստանէութեան, սակայն չեիև կրնար ժխտել ոչ Անոր ապրիլը և ոչ ալ թաղումն ու յարութիւնը՝ որոնք իրապէս անզի ունեցող պատմական գէպքեր էին: Ուրիշ առարկութիւն մը Յիսուսի կատարած բժշկութիւններուն գէժ կարելի է յարուցանել. սակայն այսօրուան հոգեբանական երևոյթները կուգան հաստատել անոնց կարելիութիւնը. արդէն նախապէս ընդարձակօրէն նկատի առինք հրաշքներու հարցը, հոս հարկ չկայ կրկնելու: Եթէ «Նախնական Աւետարանը» և մեր ներկայ Աւետարանները ստացող պատմութիւններ բովանդակէին Յիսուսի կաշկուտեան, Չարչարանքներու և Յարութեան չուրջ, քանի որ Պիղատոս, Աննա և Կայխափա ալ տեսարանի վրայ կ'երեւին, թէ՛ Հռովմայեցի հեղինակաւոր անձեր և թէ՛ Հրեաներ պիտի չարգիլէին զանոնք ըսելով. «Աս ի՞նչ սուտապկական սուտ բաներ է որ կը գրէք ու կը քարոզէք դուք»: Սակայն Անոր մահեկն անկողնայէս վերջ երբ խօսուեցան այս ամէնը ու գրի առնուեցան և ոչ մէկը քանակ մերժել այս իրական գէպքերը, թէ և հակառակութիւն և թշնամութիւն կար Անոր անձին ու վարդապետութեան շուրջը, բայց ԵՐԲԵՅ չժխտուեցան ինչ որ կը խօսուէին, կը պատմուէին և կը գրուէին Անոր մասին: Ի՞նչ պիտի ըսեն ասոր ներկայ դարու առասպելաբանները...:

Յետագայ Աւետարաններուն այս «Նախնական» Աւետարանը կամ «Կորնթ»ը վերջը աւելի ևս կատարելագործուեցաւ ուրիշ մասի մը յաւելումով, որ կը կոչուի Լօկիա՝ Յիսուսի «խօսք» քը և արդի քննադատներուն ծանօթ է Անգլիերէն «Q» գրին անուանով: Այս Լօկիան: (խօսքև-

քը) կ'ամփոփէր իր մէջ «Լերան քարոզ»ը որ Մատթ. Ե. Գլ. 1. համարէն մինչև Է. Գլ. 23րդ համարներուն մէջ կը բովանդակուի: Այս Լօկիան, (Մատթէոսի Բնագիրը) Յիսուսի «խօսքերէն» առնուած նօթերու ամփոփում մըն էր, յետոյ Աւետարանիչները զանոնք իրենց գրութիւններուն մէջ մտցուցին: Յիսուսի այս «խօսքերուն» կամ «Լերան քարոզը»ին, ինչպէս կը կոչուի ան, նմանը երբէք տեսնուած է ո՛րեւէ տեղի և ո՛րեւէ ժամանակի մէջ, ո՛րեւէ անձի կողմէն: Նկատի առնել անոր բարոյական և հոգեւոր նկարագիրը, և տեսնել վերջ թէ, անոնք Յիսուսի մը խօսքերը միայն կրնան ըլլալ ու դարձեալ ժրխակ անոր Հեղինակին պատմականութիւնը, պարզապէս հակառակի կը նշանակէ ճշմարտութեան: Ո՞ր մէկ Ուսուցիչ ըսաւ ասանկ խօսքեր, մանաւանդ ապրեցաւ իր քարոզած կեանքով:

Այժմ տեսնենք թէ ի՞նչ կ'ըսէ Բրոֆ. Բեթրի «Կորնթ» ին կամ «Նախնական» Աւետարանին մասին:

1. Երբ վնասուենք չենք կրնար զանել ո՛րեւէ զաղափար մը կամ պարագայ մը անոր մէջ՝ որ Երուսաղէմի կանխագոյն եկեղեցիին և անոր պաշտօնականներուն սովորութեանց անձանօթ ըլլայ:

2. Երբ նկատի առնենք երկրին աշխարհագրական դիրքը, արդիւնքը աւելի խոր և համոզիչ կ'ըլլայ: Գալիլիան տարածօրէն կը յիշուի: Երուսաղէմէն և Երիքօ՞վէն վեր գէպի հիւսիս գտնուող մէկ տեղոյ մը անտէնը կը արուի՝ Կեսարիայի, ուր կ'ապրէր Փիլիպպոս Աւետարանիչը:

3. «Կորնթ» ին կամ «Նախնական» Աւետարանին կանխագոյն թուականը ապացուցանելու համար կայ ուրիշ փաստ մըն ալ, Յարութեան պատմութիւնն է ան մանրամասնօրէն պատմուած: Այսպէս, Յարութիւնը քարոզուեցաւ չա՛տ կանուխ. այդ մասին տուածին 10 տարիներու



ընթացքին մէջ լիցուն տեղեկութիւններ անշուշտ կային :

4. Վերջապէս Բրոֆ. Բեթրի իր խօսքերը սա կերպով կ'ամփոփէ . « Հաւանականաբար «Կորիզ»ը (Աւետարաններուն) Երուսաղէմի մէջ հաւաքուած էր երբ Գալիլիայի մէջ տակաւին և ո՛չ մէկ գրաւոր բան կար Յիսուսի կեանքին շուրջ : Վերջէն ասոր վրայ աւելցուածները Գալիլիական մանրամասնութիւններով լիցուն են :

« Երբ պատմական իրողութիւնները նկատի կ'առնենք , կը տեսնենք որոշ կերպով աստիճանական զարգացման շարունակութիւնը՝ որ տեղի ունեցաւ իւրաքանչիւր տասնեակ տարիի մէջ և այսպէս կը տեսնենք եկեղեցիին աճումը : Աւետարանները կը պատմեն մեզ 40 թուականէն առաջ տեղի ունեցող դէպքերն ու իրողութիւնները , սակայն քիչ բան կը պատմեն 50-60 թուականէն վերջ պատահող դէպքերու մասին օր . համար չի պատմուիր Հրրահաներու ցրուումը , հեթանոսներու վիճակը և չն :

« Համայնացոյց Աւետարաններուն (սինօփիի) իրարու հետ ունեցած յարաբերութիւնը հաւանականաբար սա է . Մարկոս եւ Ղուկաս երբ Երուսաղէմ կը գտնուէին (54-56 ին Ք . թ .) այնտեղեան յաւելումներ ընել «Կորիզ»ին կամ «Նախնական» Աւետարանին վրայ : Առաջին երրորդ մասը լրացնելէ վերջ Ղուկաս թողուց իր Աւետարանը և զայն լրացուց ուրիշ տեղի մէջ : Մարկոս այն ատեն ստացաւ Մատթէոսի Աւետարանը և լրացուց իրենը . . . »

Այսպէս Բրոֆ. Բեթրի կը ցուցնէ մեզ գիտական եղանակով Աւետարաններու զարգացման պատմութիւնը և երեւան կը հանէ «Կորիզը» ինչ է ասոր պատմական արժէքը . մենք ասով կըստանանք շահ բնական կեանքի մը պատմութիւնը՝ որուն մեջ առաւելակալան եւ ո՛չ մեկ հետք գտնելու կարելի պիտի ըլլայ : Նոր Ուսուցիչ մը երեւան կ'ուզայ իր կանխազոյն կեանքի անշուրթներէն — ինչպէս կը պատահի միշտ Արեւելքի մէջ — և իր պատգամը կը հռչակէ : Իր

զարմանալի անձնաւորութիւնը և իր «մաղնիսական» զօրութիւնը — հանգամանք մը յատուկ բոլոր ազդեցութեան տէր Ուսուցիչներու , — ժողովուրդին ուշադրութիւնը կը գրաւէ և նոյն իսկ հիւանդներու և ախտացեալներու վրայ ա՛նանկ ազդեցութիւն մը կը կատարէ , որ անոնք շուտով մարմնաւոր և հոգեւոր բնական վիճակի մը կը դառնան . այս պարագան կատարկապէս կը համաձայնի ներկայ «Հողերանական բնութեւոյթներուն» որոնք միշտ կը պատահին :» Վերջապէս , ինչպէս կրնանք յուսալ , օրուան պաշտօնական անձերը-քահանաներ և չն . — կը հակառակին այս Մարդուն , Որուն յառաջգիժութիւնը նախանձով և ատելութեամբ կը դիտեն և ահա՛ ասոր համար կը հաշտուի , կը նախատուի , կը դատաւարտուի , կը խաչուի ու կը թաղուի սակայն գերեզմանին կը յաղթէ ու Յորութիւն կ'առնէ : Այս ամէնը կը պատմուի բնական ոճով և անանկ հմայք մը , անանկ պարզութիւն մը կայ պատմութեան վրային մէջ , որ անոնց վստահելի դէպքերու արձանագրութիւն մը ըլլալու հաւանականութիւնը ինքնին կը ներշնչուի ընթացողին մտքին :

Աշխարհիկ պատմութեան մէջ դէմքեր կան , որոնց պատմական ըլլալուն համար այնչափ զօրաւոր փաստեր չկան . սակայն արդեօք ինչո՞ւ այսքան որոշ և յայտնի ապացոյցներէ վերջ , Յիսուսի պատմականութիւնը ժխտելի կ'ուզեն ոմանք , ի՞նչու . . . :

Գ. Այժմ նկատի առնենք «Լօկիան» կամ Մատթէոսի Աւետարանին մէջ գրուած Յիսուսի խօսքերը , որոնք , ինչպէս արկնարկուեցան , կը ճանչցուին «Գ» անունով : Յիսուսի այս «Խօսքեր»ը կ'ապացուցանեն պատմական անձի մը գոյութիւնը՝ թէ անոնք ուրիշներու խօսքերէն հաւաքուած են : Բրոֆ. Ա . Հարնաք կը փաստէ թէ Յիսուս և ո՛չ մէկ դպրոցի հետեւող մըն , էր Ան ազատ էր Քարբոնինիսիւրու դպրոցէն , Եսսենեաններու (essenes) և Յու-

նական փիլիսոփայութենէն :

«Լեւրան քարոզը» ին մէջ կայ միութեան և ներգաշնակութեան խորունկ կապ մը՝ որով անոր մեկ անձի մը կողմէն խօսուած ըլլալը կը յայտնուի : Անոր մէջ կայ հոգեկան խորունկ ճշմարտութիւն՝ որ հոգեւոր կեանքի շրջանակի մէջ ասորովի մը խօսքերն ըլլալ կ'երեւին : Ոմանք նմանութեան եզր մը տեսնել կը ջանան Յիսուսի և բարբոռներու թալմուտական խօսքերուն մէջտեղ : Սակայն միթէ հակառակը պնդել աւելի բանաւոր չէ : Ո՞վ կրնայ վստահաբար ըսել թէ բարբոռներու խօսքերը Յիսուսի խօսքերէն առնուած չէին, քանի որ թալմուտը իր ներկայ լման ձեւով երեւան կաւ Ծրդ դարու ասանները : Սակայն էական խնդիրը աս չէ թէ Յիսուս ի՞նչ ըսաւ այլ թէ ի՞նչպէս ըսաւ : Խօսքի մը արտայայտուելու կերպը, անոր մէջ դրուած կոճակն ալ նկատի առնուելու է, իսկ կեանքը գերազանցապէս բարձր է խօսքէն : Ո՞վ ըսաւ ու փարոզեց Յիսուսի պէս եւ ասորեցաւ Յիսուսի պէս : Կրնա՞յ առասպելական անձ մը արտայայտել «Լեւրան քարոզը» ին, «Անառակ Որդի» առակին և «Բարի Սամարացիին» պատմութեան պէս խօսքեր : Ո՞ր մէկ փիլիսոփայութեան մէջ կը գտնուին բարոյական և հոգեւոր կեանքի-սիրոյ, եղբայրութեան և ներողամտութեան, — մասին այսչափ բարձրագոյն գաղափարականներ :

«Յիսուս պատմական չէ» ըսողները կը հրաւիրենք որ արտադրեն առասպելական կողմնորոշող յիսուս մը որ ՀՍԻՍՍՍՍՍՐԻ ԻՐ ԲՍԱՐՈՅԱԿԱՆ ԿՍՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ, ԻՐ ՀՈԳԵԻՒՈՐ ԿԵԱՆՔԻՆ ԲՍԱՐՁՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՅԻՍՈՒՍԻ-այո՛, յիսուս մը Անոր պէս ու Անոր ջափ թափի, խոնարհ, համակիր, սիրող եւ ազնիւ : Պիտի կրնա՞ն... ԵՐԲԵՔ : Ուրեմն Յիսուսի պատմականութիւնը ասպոցուցուած է ամէն կերպով, կ'ըսենք մենք ալ, Բրոք. Թ. Տորպերնի այս զօրաւոր խօսքերը ազատօրէն գործածելէ վերջ :

ՊՕՂՈՍ ԱՌՍԻԲԵԱԼ ԵՒ ՊՍՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ

Բոլոր քննադատները, առանց բացառութեան չեն ժխտեր Պօղոս առաքեալին պատմականութիւնը. անոնք կ'ընդունին թէ Պօղոս անունով մէկը ապրեցաւ ու քարոզեց Քրիստոնէութիւնը, կ'ընդունին նաեւ անոր գրած թուղթերուն վաւերականութիւնը, սակայն կ'ըսեն թէ՛ Պօղոս պատմական Յիսուսը չէր ճանչար, ուրիշ խօսքով՝ Պօղոս իր թուղթերուն մէջ կը քարոզէ Գաղաթիւսիական Քրիստոսը և ո՛չ թէ պատմական Յիսուսը, թէ ան Քրիստոսը մարմնով չէր ճանչար և ասոր համար յառաջ կը քերեն առաքեալին սա խօսքը. «Ասկէ ետեւ մենք մէկը մորմնով չենք ճանչար, ու թէեւ Քրիստոսը մարմնով ճանչցանք, բայց հիմա ալ այնպէս չենք ճանչար» : Այսպէս դարձեալ առասպելարան դպրոցի աշակերտները կուզեն հաւատացնել մեզ թէ Յիսուս առասպել մըն է և արեւին սակ՝ այս երկրին վրայ, այդ անունով պատմական անձ մը չէ ապրած :

Ուրեմն մենք պիտի քննենք Պօղոսի կեանքը և թուղթերը, հասկնալու համար թէ պատմական Յիսուսը թէ գաղափարական Քրիստոսը կը քարոզէր և ասոր համար պիտի հետեւինք կէտ առ կէտ Տր. Թորպերնի այս մասին գրածներուն :

Հարկ է գիտնալ որ Պօղոս Քրիստոնէութեան դարձաւ 35ին, իսկ այն թուղթերը որ պիտի քննենք, գրուեցան 51-63 ին և երկու մասի կը բաժնուին :

Առաջի մասը կը կազմեն «մենք» կամ «ճամբորդութիւն» կոչուած նոթերը, ինչպէս կ'անուանէ Բրոք, Հարնաք : Քննադատութեան դպրոցի աշակերտները կը վկանան թէ այս նոթերը գրողը Պօղոսի ընկերներէն մէկն էր. յին թէ այս նոթերը կարծիքները կը տարբերին իրար թէ ո՞վ էր այդ ընկերը, կարծիքները կը տարբերին իրար :

մէ : Գործ . Ի . Գր . 4րդ համարին մէջ Պօղոսի ընկերա-  
 ող կարգ մը անուններ կը տրուին սակայն անոնցմէ և  
 ո՛չ մէկը կրնար ըլլալ . վասնզի անոնք Տրովսոզա մնացին :  
 Ոմանք կ'ենթադրեն թէ այդ նօթերու հեղինակը Տիտոսն  
 էր , ուրիշներ ալ թէ Շիղան էր , սակայն Բրոֆ , Հարնա-  
 քի հետ ուրիշներ ալ կ'ընդունին թէ «Ղուկաս» էր , և  
 ասիկա ա՛մէնէն հաւանականն է :

Այժմ տեսնենք թէ Պօղոս իրօք պատմական Յիսուսը  
 չէ՞ր ճանչնար :

Ա . Շիտակ է թէ՛ Առաքեալը իր Թուղթերուն մէջ Յի-  
 սուսի կեանքին մանրամասն կենսագրութիւն չիտար : Արդ-  
 եօք ինչո՞ւ , էտուրրա՞ Բրաս կը պատասխանէ . «Վասնզի  
 կը խօսէր անանկ մարդոց , որոնք արդէն ձանօթ էին Յի-  
 սուսի կենսագրութեան» . ուստի պէտք չտեսաւ կենսա-  
 գրական մանրամասնութեանց : Սակայն նոյն ատեն Պօղոս  
 կ'ընդունի թէ , իրեն և եկեղեցիին համար միայն պատմա-  
 կան Յիսուսը չէր կարեւորը . ուստի իր գլխաւոր ուշա-  
 գրութիւնը կը կեդրոնացնէ Անոր կեանքի արդիւնքին , նը-  
 շանակութեան և գորութեան ո՞րչափ կարեւորութիւն կրնար ու-  
 նենալ . չէ՞ որ Անոր կեանքին արդիւնքն էր Աստուածա-  
 յին ծրագրի հոգեւոր այն մասը՝ որ կարեւոր էր մարդուն  
 փրկութեան և բարձրացումն համար : Անշուշտ առաք-  
 եալ պատմաբան մը կամ կենսագիր մը ըլլալէ աւելի վար-  
 դապետութիւն քարոզող մըն էր . անոր համար կեանքի մը  
 պարզ կենսագրութիւնը հոգեւորապէս ա՛յնչափ մեծ նշա-  
 նակութիւն չունէր : Սակայն ասով մէկտեղ միթէ կը պակ-  
 սին իր Թուղթերէն պատմական Յիսուսի հետքերը : Եթէ  
 զգուշութեամբ քննենք Գործք Առաքելոցի կարգ մը մա-  
 սերը , պիտի հանդիպինք առաքեալին կարգ մը խօսքերուն  
 որոնք օւղղակի կամ անուղղակի ակնարկութիւններ են  
 Յիսուսի պատմականութեան : Քննենք այս մասերը :

1. Առաքեալը Թեսաղոնիկէի մէջ քարոզած ատեն  
 (Գործ ժէ . 3) կ'ըսէ թէ իր քարոզած Բրիստոսը նոյնն է  
 Յիսուս հետ , որ խաչուեցաւ և ծանօթ էր Թեսաղոնիկեցի-  
 ներուն : Եթէ Թեսաղոնիկեցիները պատմական Յիսուսը  
 չճանչնային , առաքեալը կրնա՞ր ըսել թէ այդ Յիսուսը՝ Բը-  
 րիստոսն էր :

2. Նմանապէս Կորնթոսի մէջ (ԺԸ . 4-5) Պօղոս քա-  
 րոզեց և հաստատեց թէ Յիսուսը՝ Բրիստոսն է , որուն կըս-  
 պատէին Հրեաները . հետեւաբար առաքեալը կը հաւա-  
 տար պատմական Յիսուսին՝ որ զազափարական Բրիս-  
 տոսը չէր կրնար ըլլալ : Այդ պարագային երբ Հրեաները  
 Գաղլոսն՝ Աքայիայի բղեչխին՝ գիմեցին , ատենէն վարն-  
 տուեցան , վասնզի Բղեչխը օրէնքի վերաբերեալ բանե-  
 րուն միջամտել չէր ուզեր , կրօնապէս անտարբեր էր :

3. Գործ . ԺԸ . 24րդ համարին մէջ կը հանդիպինք  
 Ապօղոսի անունին , որ նախ Յովճաննէսի քարոզութեան  
 հետեւած էր , և վերջը Ակիւղասի և Պրիսկիլայի միջո-  
 ցաւ-որոնք հելլենացեալ Հրեաներ էին և Բրիստոսը կը  
 քարոզէին — ընդունեց թէ Յիսուսը՝ Բրիստոսն էր , և  
 սկսաւ քարոզել զԱյն իր պերճաբան ոճով :

4. Առաքեալին Երուսաղէմի «Բերդի»ն սանդուխ-  
 ներուն վրայէն խօսած ուղերձն ալ անուղղակի կերպով  
 զօրաւոր ակնարկութիւն մըն էր պատմական Յիսուսի մա-  
 զօրաւոր ակնարկութիւն և կերպով խօսեցաւ «խաչուած» Յի-  
 սուսի վրայ : Երեւակայեցէք անգամ մը՝ Պօղոս մեծ բազ-  
 մաբան մը առջեւ կանգնած կը խօսի «խաչուած» Յի-  
 սուսի վրայ , երբ խաչեղութիւնը յոյ առասպել մը ըլլար .  
 կամ կես-պատմական բան մը , այդ մեծ բազմութիւնը ան-  
 միջապէս պիտի յոռեցնէր զինքն եւ պաշտօնական անձեր  
 պիտի չըսէին , «ի՞նչ կ'ըսես , Պօղոս , ե՞րբ ասանկ բան տե-  
 ղի ունեցաւ» : Անոնց լուրջութիւնը բացարձակ ապացոյց մը՝  
 չէ՞ , թէ մօտէն ծանօթ էին եղելութեան կամ վստահ էին

ատանկ բան մը պատահած ըլլալուն :

Ուրեմն Գործք Առաքելոցի նշանակուած համարներու քննութենէն կուգանք նա որոշ եզրակացութեան , թէ այս բաները գրուելէն և խօսուելէն 30 տարիներ առաջ , երեսօղէմի և շրջականերուն մէջ կ'ապրէր Մարգ մը Նազովրեցի Յիսուս անունով , թէ այս Մարգը մահուան դատապարտուած էր և խաչուած և որ աւելին է , այս նոյն Մարգն էր , Պօղոսի և ուրիշներու համադրումով , Մեսիան որուն աշխարհ կ'ըստասէր :

Բ. Այժմ նկատի առնենք Պօղոս առաքելալի Թուղթերէն չորսին մէջ գտնուող այն մասերը , որոնց մէջ կը խօսի Քրիստոսի վրայ , որ պատմական Յիսուսը ըլլալով , դեռ քիչ ժամանակ առաջ ապրած էր մարդոց մէջ :

1. Գաղ . Ա . 1 ին մէջ կ'ըսէ . «Աստուած յարոյց զԱյն ( = Յիսուսը ) մուեցնելէն» : Առասպելական դպրոցի աշուկերաները կ'առարկեն թէ ասիկա լսի ակնարկութիւն մըն է Արեւ-աստուծոյ կամ բուսական-ողիններու յարութեան : Ասիկա երեւակայական ենթադրութիւն մըն է պարզապէս . եթէ բաղդատենք այս համարը ուրիշ պարագաներու հետ , կը տեսնենք որ պատմական եզրութեան մը արձանագրութիւնն է որ տեղի ունեցեր էր միայն մեկ անգամ գրբուելէն 20-30 տարիներ առաջ , մինչդեռ արեւ-աստուծոներու յարութիւնը (??) կը կարծուէր թէ ա'մէն ամարի տեղի կ'ունենար , քանի որ ասով բնութեան վերադարձնումին կ'ակնարկուէր : Իրապէս մարդիկ որչա'մ տարօրինակ հաշիւներու մէջ կը մոլորին :

2. Պօղոս Գաղ . Ե . 4 ին մէջ կ'ըսէ . «Աստուած զբրկեց իր Որդին ուր կեկիկե մը ծնալ» : Զարմանալի բան , կնիկէ ծնած մէկը գաղափարական կ'ըլլա՞ . ո՞ւր մնաց Պօղոսի գաղափարական Քրիստոսը : Համարը պարզ ու որոշ չէ , առասպելական ինչ բան ունի իր մէջ :

3. Ահա՛ ուրիշ համար մըն ալ . «Ես միաքս դրի

ձեր մէջ ուրիշ բան մը չգիտնալ , բայց միայն Յիսուս Քրիստոսը ու Ան ալ խաչը ելած» : Եթէ բաղդատենք այս համարը «Անոնք փառաց Տէրը խաչեցին» խօսքին հետ , յայտնապէս կը տեսնենք որ առաքելալը այս խօսքերով , Յիսուսի և ոչ թէ գաղափարական Քրիստոսի կ'ակնարկէ :

4. Ա . Կոր . ԺԱ . 23 ի մէջ կը կարդանք . «Տէր Յիսուս իր մասնուած գիշերը հաց առաւ» : Ինչպէս կը տեսնուի այս համարը պարզ ակնարկութիւն մըն է երեսօղէմի վերնատան մէջ տեղի ունեցող ընթրիքին և կատարկապէս կը համաձայնի Աւետարաններու պատմութեան հետ :

5 .) Դարձեալ Ա . Կոր . ԺԵ . 3-8 համարները պարզ և որոշ ակնարկութիւններ են պատմական Յիսուսի մասին . «Յիսուս մեռաւ . . . թաղուեցաւ . . . յարութիւն առաւ երրորդ օրը . . . տեսնուեցաւ Կեփասէն . . . տասերկու քէն . . . մօտաւորապէս 500է աւելի եղբայրներէ . . . ևւին . . .» :

Դեռ կարելի էր ուրիշ մէջերումներ ալ ընել իր Թուղթերէն , սակայն յառաջընթացները տրդէն կը բաւեն ցուցնելու համար , թէ Պօղոս կը ճանչնար պատմական Յիսուսը :

Սակայն մենք կը պարտաւորուինք ուրիշ հարցի մըն ալ պատասխանել , վասնզի կարգ մը քննադատներ կ'առարկեն թէ Պօղոսի քարոզութիւնը Աւետարանի քարոզութենէն տարբեր էր . ուրեմն «Յիսուսի՞ թէ ուրիշ Աւետարանի մը քարոզիչն էր ան» :

Միայն մէկ երկու օրինակներ կը բաւեն Պօղոսի քարոզութեան և Աւետարանի քարոզութեան մէջ սերտ աւելնչութիւնը երեւան բերելու համար :

1. Ինչ կ'ըսէ Պօղոս Գաղ . Ե . 14 ին մէջ . «Բոլոր օրէնքը աս մէկ խօսքին մէջ կը բովանդակուի , թէ քու ընկերք պիտես քու անձիդ պէս» : Երբ բաղդատենք

Ղուկ. Ժ. 25-37 և Մատթ. Ե. 43 ին հետ ի՞նչ կը հե-  
տևելի. — թէ Պօղոս ալ Սէր կը քարոզէ՝ ինչպէս որ Աւե-  
տարաններն ալ :

2. Հռովմ. ԺԲ. 16 ին մէջ առաքելաբար խոնարհու-  
թիւն կը քարոզէ. լաւ. Մատթ. Ե. 5ի մէջ ալ խոնարհ-  
ներուն երանութիւն կը արուի :

3. Հռովմ. Բ. 13ին մէջ Պօղոս կ'ըսէ. «Չէ թէ լը-  
սողները պիտի փրկուին՝ այլ կատարողները» : Նոյն բանը  
կը քարոզուի Մատթ. Է. 21ի մէջ .

4. Պօղոս կ'ըսէ. «Նեղութիւններու մէջ կը պար-  
ծինք», Հռոմ. Ե. 3ին մէջ. չէ՞ որ Յիսուս կամ Աւե-  
տարաններն ալ նոյնը կը քարոզեն :

5. Կին արձակելու մասին Պօղոսի խօսքերը, որոնք  
կը գտնուին Հռով. Է. 3ին մէջ, կատարելապէս կը հա-  
մաձայնին Յիսուսինին հետ :

6. Պօղոս օրէնքի մասին կ'ըսէ. «Յիսուս է օրէնքին  
վախճանը արդարութեան համար (Հռ. Ժ. 4.) : Յիսուս  
ալ ըսաւ. «Ես չեկայ աւերելու, հապա կատարելու (Մատթ.  
Ե. 17) :

7. Ողորմութեան մասին Պօղոս կ'ըսէ. «Ան որ կ'ո-  
ղորմի յօժարութեամբ». Աւետարանը կ'ըսէ. «Չեր ողոր-  
մութիւնը մարդոց առջեւ չընէք.» (Մատթ. 9. 1) :

Վերոգրեալ համարները կը բաւեն ցուցնելու թէ Պօ-  
ղոսի և Յիսուսի քարոզութիւնը նոյնն էր, կամ աւելի  
ուզելի պիտի ըլլայ բնի թէ, Պօղոս Յիսուսի Աւետարանին  
հետեւող և զայն նոյնութեամբ քարոզող հաւատացեալ մըն էր :

Սակայն քննադատը հոս ալ առարկութիւն մը կը  
հանէ մէջտեղ և կ'ըսէ. «Պօղոս ի՞նչպէս և ուրի՞ց սորվե-  
ցաւ Յիսուսի վարդապետութիւնը կամ Անոր Աւետարանը» :

Պատասխանենք ուրիմն :

Պօղոս ինք անձամբ կը խոստովանի Դամասկոսի  
ճամբուն վրայ պատահած փոփոխութիւնը՝ իր կեանքին

մէջ, որ ասին հոգեւորապէս բարձրագոյն կեանքի մը  
հասաւ : Ժխտե՞նք ստիկա : Ասանկ հոգեկան կեանքի բա-  
րեշքումներ ամէն օր և հարիւրաւորներով չէ՞ն կատար-  
ուիր : Հօգեբանութիւնը թող վկայէ : Այս «դարձ»էն վերջ  
Արարիա գնաց, յետոյ Դամասկոս և անցաւ Երուսաղէմ,  
ուր 15 օր կեցաւ Պետրոսի և Յովհաննէսի հետ անշուշտ  
այս միջոցին ան կատարելապէս սորվեցաւ Յիսուսի կեան-  
քին պատմութիւնը : Ըստ Գաղ. Բ. 11ին, Պօղոս Անտի-  
ոք գնաց, ուր ժողով կար և Պետրոս ալ ներկայ էր :  
Այսպէս ան միշտ առաքելոց հետ անսակցութիւններ և  
սերտ յարաբերութիւն ունենալով, սորվեցաւ Յիսուսի կա-  
տարեալ խօսքերն ու կեանքը : Կարելի՞ էր որ Յիսուսը հա-  
յաժող Սոզոսը Պօղոսի փոխուէր՝ երբ Անոր պատմականու-  
թեան հաւատար և իր ծանօթութիւնը ուղղակի առաք-  
եալներէն և ազնաւորներէն չտանար : Անշուշտ ան մը-  
տերիմ յարաբերութիւն ունեցաւ Երուսաղէմի մէջ Տեառն  
եղբայր կոչուող Յակոբոսին հետ ալ՝ որմէ ստացաւ իր ծա-  
նօթութիւնները պատմական Յիսուսի մասին :

Այսպէս սրբազան առաքելային՝ Պօղոսի վկայութիւ-  
նը կուգայ զօրեղապէս ապահովել Յիսուսի պատմակա-  
նութիւնը : Ո՛չ իր պատմականութիւնը կասկածի տակ է  
և ոչ ալ իր Թուղթերուն վաւերականութիւնը կը ժխտուի,  
և թէեւ քննադատներէն մէկ քանինքը չեն կրնար կամ  
չեն ուզեր գտնել անոր Թուղթերուն մէջ պատմական Յի-  
սուսը, սակայն անա փաստերը կուգան անժխտելիօրէն ա-  
պացուցանել, թէ Պօղոսի «Դադափարական Գրիստոսը»  
«Պատմական Յիսուսն» է : Ան կ'ըսէ. «Գրիստմ թէ որու  
եմ հաւատացիր» : Տարակոյսի հետք մը իսկ չի գտնուիր  
ասոր մէջ :

Ամիսիները այժմ մեր թուած ներքին ապացոյցները  
զոր յառաջ բերինք այս Ա. մասին մէջ՝ հաստատելու հա-  
մար Յիսուսի պատմական դէմք մը ըլլալը :

1. Ունինք Աւետարաններուն անյեղլի վկայութիւնը՝ որուն հեղինակները ա. չխարուեցան, ք. չխարեցին, այլ գ. ճշմարտութեան վկայեցին: Աւետարաններու հարազատութեան մասին՝ ունինք ա. Բնագրի քննադատութեան վկայութիւնը. ք. Հին ձեռագիրներու վկայութիւնը. գ. Եկեղեցական հայրերու վկայութիւնը. դ. Անոնց Ա. դարու մէջ գրուած ըլլալու վկայութիւնը. ե. Վերջապէս անոնց ներքին վկայութիւնը: Նոյն իսկ Աւետարաններուն գիտական-քննադատական վերլուծումը երեւան կը բերէ Պատմական Յիսուսի կեանքին ուրուագիծը:

2. Ունինք Պօղոս առաքեալին զօրաւոր վկայութիւնը՝ Սնոր պատմականութեան մասին:

Այժմ անցնինք մեր գրքի Բ. մասին և Արտաքին ապացոյցներով ալ ջանանք հաստատել Յիսուսի պատմականութիւնը:



Մ Ա Ս Ն Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ՝ ԱՐՏԱՔԻՆ

Գ.Լ. Գ.

ՀՐԵԱՅ ՄԵԾ ՊԱՏՄԱԲԱՆ ՅՈՎՍԵՓՈՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Եռսուֆ Պէն Մաթթա (Joseph Ben Matthai) կամ Հռովմէական անունով Փլարիանոս Յովսեփոս՝ Հրեայ հոչակաւոր պատմաբանը, ծնաւ ՅՏԻՆ (Բ. Թ.) Երուսաղէմի մէջ Գայրոս Կեսար կամ Կալիգուլա կայսեր թագաւորութեան Ա. տարին: Իր հայրը Երուսաղէմի Քահանայական նշանաւոր ընտանիքի մը անդամներէն՝ իսկ մայրն ալ Յովնաթան (Jonathan) Քահանայագետին սերունդէն էր: Իր պատանեկան թարմ հասակին մէջ զօրաւոր դաստիարակութիւն ստանալու պատահութիւն ունենալով, հետեւեցաւ թէ՛ Հրէական Օրէնքին և թէ՛ Հրուովմէական կամ Հէլլենական ուսումներու, որով իր ժամանակակիցներուն մէջ կարկառուն դէմք մը հանդիսացաւ: Մանաւորապէս Հրէական Օրէնքի մէջ զարմանալի ընդունակութիւն և զարգացում ցոյց տուաւ այնպէս որ, երբ դեռ 14 տարեկան էր, Օրէնքի դժուար հասկնալի և խրթին հարցերուն մասին միշտ իրեն հետ կը խորհրդակցէին, ինչպէս որ կը հաստատէ իր գրութիւններուն մէջ:

Երբ տասնեւից տարեկան եղաւ, իր ժամանակի փիլիսոփայական զանազան դպրոցներու տեսութիւններուն ալ ծանօթացաւ: Յետոյ իմացական այս կրթութեան վըրայ աւելցուց նաև միսթիքական հրահանգութիւն ալ՝ նշանաւոր Էսսէնեանի (Essene) մը՝ Բանիոսի (Baneus) առաջնորդութեամբ: Ասկէ վերջ Երուսաղէմ դարձաւ ուր

իր 19 տարեկան հասակին մէջ Փարիսեցոց ազանդին յարեցաւ: Իր կեանքին վերջին օրերը անցուց Հոովմի արքունիքին մէջ, ուր ապրեցաւ մինչև Բ. դարու սկիզբը և զանազան գործեր հեղինակեց:

Ուրեմն տեսնենք թէ այս հուշակոթոր պատմարանը ինչ կ'ըսէ Յիսուսի մասին իր հեղինակութիւններուն մէջ. ունի՞ արդեօք ուղղակի կամ անուղղակի ակնարկութիւն մը՝ որ ծառայէ ապացուցանել Յիսուսի պատմականութիւնը: Հետեւինք իրեն ակնարկութիւններուն:

Ա. Իր Հնախօսութիւնք (Antiquities) գրքին Հատուած ԺԸ. Գլուխ Գ. Յին մէջ կը կարգանք.

«Այս ատեն Յիսուս անունով իմաստուն մարդ մը երեւցաւ. (եթէ իրօք կրնայ մարդ կոչուիլ, վաւերի հրաշքներ կը գործէր և ուսուցիչ էր անանկ մարդոց, որոնք ճշմարտութիւնը ուրիշութեամբ կ'ընդունէին),<sup>(1)</sup> և շատ Հրեաներ իրեն քաշեց (նաև Յոյներէն ալ շատերը: Աս էր Քրիստոսը):<sup>(2)</sup>

«Երբ Պիղատոս մեր գլխաւոր մարդոց ամբաստանութեան վրայ զանիկա խաչուելու դատապարտեց, նախապէս Զինքը սիրովները ետ չդարձան: (Վասնզի անոնց նորէն կենդանի երեւցաւ երրորդ օրը, ինչպէս որ սուրբ Մարգարէները մարգարէացիք էին ասիկա և ուրիշ շատ մը հրաշայիքներ՝ անոր մասին):<sup>(3)</sup>

«Մինչև այսօր Քրիստոսնեաներու ազանդը՝ որ Անոր անունով կը կոչուի, գոյութիւն ունի»:

Վերոգրեալ տողերը առաջին ակնարկով բանաւոր և վճռական կը թուին. սակայն անոնց հարազատութեան մասին լուրջ առարկութիւններ կան: Բրոֆ. Տրիւս և իրեն հետեւողները կ'ըսեն թէ ամբողջ հասուածը բնագրին վրայ աւելցուած է Քրիստոսեաց կղերականներու ձեռքով:

(1) Քննադատները փականելի մէջ առնուածները կ'ընդունին թէ վերջէն ներմուծուած են:

սակայն ուրիշ քննադատներ ալ, որ համար Տօպուզ, (Daubuz) Շօթաէլ (F. Schoedel) և դեռ վերջին ատեններս Ֆ, Գօլ (F. Bole) կ'ընդունին վերոգրեալ տողերուն հարազատութիւնը՝ անդին դեռ կան ուրիշներ ալ, որոնք Միւլլրի (Müller) և Բէյնախի (Reinach) հետ կը պնդեն թէ, փականելի մէջ առնուածները միայն վերջը աւելցուած են, իսկ մնացեալները բնագրին հարազատ մասը կը կազմեն: Եթէ այս վերջին տեսութիւնը ընդունինք, որ ինքնին բանաւոր կը թուի, այն ատեն մեծ պատմարանին վկայութիւնը կ'ունենանք Յիսուսի Պատմականութեան մասին: Սակայն ամէն պարագայի մէջ հասուածին հարազատութիւնը ապացուցանել դիւրին գործ չէ:

Ուստի լուրջ և կարեւոր հարցը որ այս պարագային կը ծագի, սա է. «Ինչպէս կ'ըլլայ որ Յովսեփոսի նման կարող պատմարան մը՝ որ ամէն բան մանրամասնօրէն պատմելու սովորութիւնը ունէր, և նոյն ատեն Հրեաներու նախկին և ժամանակակից ամբողջ պատմութեան, ծանօթ էր և իր ղիտողութենէն և ո՛չ մէկ կարեւոր բան կը վրիպեցնէր, ինչպէս կը յայտնուի իր գրութիւններէն, Յիսուսի մասին երբեք որեւէ յիշատակութիւն կամ ակնարկութիւն չընէր:»

Այս հարցին պատասխանը տանք, յառաջ բերելով Տր. Թօպուզնի փաստերը:

1. Պեֆ Է յիշենի քե, թէ և այս պարագան շատ զարմանալի թուի մեզ. Յիսուս Քրիստոսի անձը եւ դիւրի Յովսեփոսի ժամանակակից աշխարհին հաւատ անյնչափ մեծ ու կարեւոր չէր թուէ՝ որչափ Ան կը թուի այսօրուան մեր աշխարհին հաւատ:

Յիսուս իր ժամանակակիցներու մեծամասնութեան համար յինական անչուք անկիւնէ մը յառաջ եկող փոքրիկ խումբի մը ազանդապետը կը կարծուէր: Անոր ան-

ձը և խօսքերը սխալ հասկցուեցան, և ասոր համար անարգուեցաւ. անա այս պատճառաւ ժամանակակից ուսեալ մարդիկ և պատմաբաններ սխալ ներկայացուցին Յիսուան ու իր խօսքերը: Հռովմի մէջ Բրիտտոսի և Բրիտտոնեաներու մասին արտառուց տարածայնութիւններ կային 80 ական թուականի ասեմները: Թէ Յովսեփոսի անձնական զազախարը Յիսուսի վրայ ինչ էր, այս մասին քննադատները տարակարծիք են. Ռընան և ուրիշներ կ'ըսեն թէ ան միայն մերժեց Յիսուսի Մեսիա ըլլալը. ասդին քննադատ մը կ'ըսէ թէ ան մերժեց Սաչելութիւնը, իսկ անդին ուրիշ մըն ալ կը պնդէ թէ՝ ան ընդունեց այդ պատմական եղիութիւնը: Ամէն պարագայի մէջ սակայն, կ'երևի թէ մեծ պատմաբանը այս խնդիրներու մասին զինքը բոլորովին անտարբեր ներկայացուց:

2. Պեթ Ե յիշեմք Յովսեփոսի Փարիսեցի մը ըլլալը: Անշուշտ ինք այդ աղանդաւորներուն մտաւոր և բարոյական կեանքին որոշ չափով հաղորդ էր: Փարիսեցիներուն Յիսուսի դէմ ունեցած թշնամական անարգ ոգիին գոյութիւնը ամէնուն յայտնի է: Եթէ Յովսեփոս Յիսուսի մասին ակնարկութիւն ընելով զԱյն Մեսիա ներկայացնէր, անշուշտ կամ զինքը արդարացնելու էր Փարիսեցիներուն առջեւ և կամ դատապարտուելու էր: Փարիսեցի եղող, Փարիսեցի ոգի կրող անձ մը, կարելի՞ բան էր որ վկայէր Յիսուսի Մեսիա ըլլալուն:

3. Յովսեփոս իր «Հնախօսութիւն»ը գրած ժամանակ Հռովմի պարսիկ պատուախաղ հիւրն էր: Եստ արդէկ. այդ ատեն Հռովմի մէջ չա՛տ քիչ թուով Բրիտտոնեաներ կային՝ որոնք զաղանի կերպով երկրպագութիւն կը մատուցանէին Բրիտտոսի, ուստի ուշադրութիւն տալ կ'արժէ՛ր անոնց, քանի որ մանաւանդ անոնց մասին աննպաստ լուրեր ալ գոյութիւն ունէին: Դարձեալ ինք քաղաքական յայտնի պաշտօնեայ մըն էր, ուրեմն իր

չա՛նը կը պահանջէր որ լուութիւն պահէր. ինք իր պատմութիւնը ուսեալ Յոյներու և Հռովմայեցիներու համար գրեց, որոնք գրեթէ բան մը չէին գիտեր և հոգ ալ չէին ընել գիտնալ Յիսուսի մասին որեւէ բան. ուրեմն ինչո՞ւ պիտի գրէր Անոր մասին, մանաւանդ երբ իր հայրենակիցներուն և Փարիսեցիներուն թշնամական դիրքն ալ նկատի առնելու խնդիր մըն էր:

Սակայն եթէ քննենք Յովսեփոսի նկարագիրն ու կեանքը, այն ատեն երբեք չպիտի զարմանանք թէ ինչո՞ւ ուղղակի բան մը չգրեց Յիսուսի մասին: Եուրըր (Schüller) կ'ըսէ «... Հրեայ քահանան եղաւ գրականութեան սիրահար Յոյն մը»: Անա իր նկարագրին մէկ ուրիշ դրուագն ալ: Երուսաղէմի պաշարումէն երեք տարի առաջ, Հռովմայեցի Վեսպասիանոս զօրապետին սիրտը շահիլ ուզելով (քաղաքական պաշտօն մը ձեռք ձրգելու համար)... մարգարէացաւ թէ օր մը կայսր պիտի ըլլայ և այս մարգարէութիւնը իրեն յաջողութիւն, պատիւ ու պաշտօն բերաւ: Աւելին կայ. Երուսաղէմի պաշարման ատեն երբ ինք քաղաքին մէջ կը գտնուէր միայն իր անձին ազատութիւնը փնտռեց և Տիտոսի յաղթական բանակին հետ Հռովմ գնաց, թողով իր հայրենակիցները զուլումի և արիւնի մէջ: Վեսպասիանոս շնորհեց անոր իր ընտանեկան անունը՝ Փլարիանոս, Հռովմի քաղաքացի կոչուիլ ու բարձրագոյն պատիւը ընծայեց անոր և առաւ զայն կայսրական պալատին մէջ: Ու խորհիլ թէ, այսչափ խորամանկ Հրեայ մը՝ որ նոյնիսկ պաշտելի Երուսաղէմին քար ու քանդ եղած պահուն, և իր ազգակիցներուն արիւնը գետի պէս հոսած ատեն, միայն իր անձնական ապահովութիւնն ու շահը կը մտածէր, այո՛, ատանկ աննկարագիր անձ, մը պէ՛տք էր որ ուղակի կերպով վկայէր Յիսուսի Մեսիա ըլլալուն և իր պատմական մէկ քանի էջերը նուիրէր այդ նպատակին, որպէսզի



Տենք՝ քսաներորդ դարու լուսամիտ(?) դաւակներս՝ կարենայինք հաւատալ Անոր պատմականութեանը՝ ասանկ ենթադրութիւն մը մեր սխալ հաշիւներու մէջ դեգերիլը չափացուցանէր արդեօք: Լ՛ուռ մնալ, ահա՛ Յովսեփոսի քաղաքականութիւնը, քանի որ իր անձնական շահը այդ միայն կը պահանջէր:

Արդեօք ուղիղ չէ՞ մեծ պատմաբանին թուրթիւնը վերագրել նաև իր արձամարտօնքին, որ կը ամօքէր Քրիստոնեաներու հանգէպ և որոնց կարեւորութիւն սալ չէր ուզեր: Թուրք պատմագիրներ, որոնք 600 տարիէ ի վեր Օսմ. պատմութիւնը կը գրեն, չեն գիշանիլ ուէ Քրիստոնեայ ժողովուրդի մասին ակնարկութիւն ընել իրենց գրութիւններուն մէջ: Սակայն անոնց չիշելը երբեք չի կրնար ժխտել Քրիստոնեայ հաւատքներու՝ Հայերու, Յոյներու և այլն, գոյութիւնը այս երկրին մէջ: Ասանկ ենթադրութիւն մը ընել բանաւոր է անշուշտ:

Բ. Եւ սակայն կայ երկրորդ Հատուած մը որ թէև կարճ՝ բայց զօրաւոր ու վաւերական է և նոյն գրքին՝ «Հնախօտըթիւնք» ին ժԸ. Հատուածի Ե. գլուխ 2ին մէջ կը գտնուի և Յիսուսի ժամանակակից պատմական երկու անձերու մասին կը խօսի, որոնց յիշատակութիւնը Աւետարաններուն մէջ ալ կը գտնուի: Ահա՛ այդ Հատուածը.

«Այժմ Հրեաներէն մէկ քանիները խորհնցան թէ Հերովդէսի բանակին կործանումը Աստուծոյ կողմէն էր, և այդ բանը չա՛տ արդար հատուցում մըն էր իրեն՝ Յովհաննէս Մկրտիչին բրածին փոխարէն: Վասնզի սպաննեց զայն, որ բարի մարդ մըն էր և կը պատուիրէր Հրեաներուն որ առաքինի ըլլան թէ իրարու հետ ուղիղ ապրելու և թէ զԱստուած պաշտելու համար, և այսպէս մկրտուելու գան. ատոր համար լուացուիլը (ջրով) ընդունելի կ'երեւէր ան որոջ թէ մեղքերու քաւութեան համար, այլ մարմինին մաքրութեան համար ենթադրելով որ հոգին

նախատէս արդարութեան միջոցաւ մաքրուած էր»:

Այս Հատուածը որոջ և վաւերական ակնարկութիւն մըն է Յովհաննէս Մկրտիչի անձին և պաշտօնին մասին: Գրքմ (Kerm) կ'ըսէ. «Եզական և անճշտի ապացոյց մը՝ Աւետարաններու հարազատութեան մասին»: Աւասպկական դպրոցի աշակերտները ինչ տեսակ փաստեր(?) առաջ պիտի բերեն հակառակը պնդելու համար, քանի որ կը տեսնենք թէ՛ Աւետարանիչները Յովհ. Մկրտիչի, Անանիայի, Պիղատոսի, Կալիափայի պէս նշանաւոր պատմական դէմքեր ալ կը ներմուծեն առասպկական համարուած գրութիւններու մէջ: Ըսէ՛ք, խնդրեմ, առասպկական ո՞ր մէկ պատմութեան մէջ պատմական դէմքեր ալ կը գտնուին:

Յովսեփոսի վերոգրեալ Հատուածը թէև իր մասնաւոր գծերուն մէջ քիչ թէ շատ կը տարբերի Աւետարանիչներու պատմութեանէն, սակայն իր ընդհանուր առուժով բոլորովին կը համաձայնի Աւետարաններու պատմութեան հետ: Քնականաբար ամէն պատմիչ իր դիտելու՝ ձեւը և պատմակերպը ունի. երկու անձեր միեւնոյն դէպքը նոյնիակ իրենց աչքով տեսնելէ վերջ, միթէ միեւնոյն ոճով և միևնոյն կերպով կը պատմեն և եթէ անոնց գրութիւնները իրարու հետ բաղդատութեան գրուին, մինչև անգամ տարբերութիւններ ալ երեւան չեն գար: Ուրեմն զամ տարբերութիւններ որ կ'ապացուցուի մեր ամէնօրեայ փորձառութեամբ, պատշաճ չէ՞ յարմորապէս գործածել նաև Աւետարաններու մասին և բսել թէ Յովսեփոսի և Աւետարանիչներու մէջտեղ գտնուած պատմութեան տարբերութիւնը բնաւ չժխտելու մէկին կամ միւսին հարազատութիւնը:

Գ. Երրորդ զօրաւոր վկայութիւն մը, նոյն գրքին ի. Գլուխ Թ. Հատուած 1ը, ո՛չ միայն Յիսուսի անունը կը բովանդակէ՝ այլ նաև Յիսուսի եղբոր՝ Յակոբոսի ա-

նունն ալ : Այս Հատուածին Ա. մասը կը պատմէ թէ Կե-  
սար՝ Փեստոսի մահէն վերջ, Ալպինոսը (Albinus) Հրէաս-  
տան զրկից իրբեւ կառավարիչ, որ ատեն մեծ քահանայա-  
պետը Յովսէփի (Joseph) պաշտօնանկ ըլլալով . Անանիա  
անոր անզը անցաւ : Յովսէփոս կ'ըսէ թէ այս անձը «ըը-  
նաւորութեամբ յանդուգն ու լալիրչ էր ևւ Սալուէկեցի-  
ներու աղանդին կը պատկանէր» :

Անանիայի իշխանութեան գլուխ անցնելը յարմար  
պատեհութիւն մըն էր իր կարգ մը ագորէն մտքերուն  
գործադրութեանը համար : «Փեստոս (Festus) այս միջո-  
ցին մեռած էր, կը շարունակէ Յովսէփոս, և անոր յա-  
ջորդած էր Ալպինոս, ասոր համար ան հաւաքեց դատա-  
ւորներու Սենեարիոնը՝ որուն առջեւ հանեց Յիսուսի՝ (որ  
Քրիստոս կը կոչուէր) եղբայրը՝ Յակոբոսը ևւ ուրիշներ : Եւ  
կըր անոնց մասին ամբաստանութիւն ըրաւ թէ Օրէնքը  
կտորոզներ են, զանոնք ձեռք սուլաւ քարկոծուելու հա-  
մար : Սակայն բուն քաղաքացիները՝ որոնք Օրէնքին  
բռնաբարումին պատճառաւ անհանգիստ էին, այս բանը  
չսիրեցին : Այսպէս անոնք լուր զրկեցին թագաւորին ևւ  
փափաք յայանեցին որ Անանիային հրաման զրկէ՝ բան մը  
չգործելու համար, վասնզի իր ըրած գործը արդարանա-  
լի չէր» :

Հատուածին մնացեալ մասը Անանիայի պաշտօնան-  
կութիւնը կը պատմէ :

Յակոբոս «Տեստիկըսոր» մահը Նոր Կտակարանին  
մէջ չի յիշուիր, որուն մէջ ինք անչուք դիրք մը միայն  
ունի : Տարակոյս չկայ թէ անիկա Անանիայի ստիպումով  
Հրեայ Ձէլընդներու (= Նախանձայոյզ . Zealet) ձեռքով  
սպաննուեցաւ 63 (Բ. Թ.) ին, ինչպէս կը պատմէ Յով-  
սէփոս :

Ո՞վ է այս Յակոբոսը որ Յիսուսի եղբայրը կը կոչ-  
ուի և ո՞վ է այս Յիսուսը որ Քրիստոս կ'անուանուի Յով-

սէփոսի կողմէն . ասոնք ալ արդեօք առասպելական ան-  
ձեր են : Կարելի՞ է երեւակայել որ Յովսէփոս Հռոմի մէջ  
առասպել մը չինել ուզէր սա անսակ խօսքեր մը գը-  
րելով . «Յիսուսը որ Քրիստոս կը կոչուէր» և դարձեալ  
«Յակոբոսը՝ Յիսուսի եղբայրը» : Եւ ինչո՞ւ համար, երբ  
մանաւանդ ուրիշ պատմական գէմքեր են որ Յիսուսի և  
Յակոբոսի հետ տեսարանին վրայ կ'ուզան, այսինքն Ա-  
նանիան, Ալպինոսը և Ագրիպասը : Մէկ բացատրութիւն  
կարելի է յատաջ բերել, այսինքն ուրանա՞լ այս համարին  
ալ հարադատութիւնը, վասնզի այդ է առասպելաբաններուն  
հաճելի և սիրելի գործը, այսինքն՝ առասպելականացնել  
ա՛մէն բան, որ Յիսուսի շուրջ գրուած է, այո՛, ա՛մէն  
բան . . . :

Ի՞նչ կը հետեւի մեծ պատմաբանին՝ Յովսէփոսի այս  
3 հատուածներէն, զոր ներկայացուցինք : Երեւ մերժենի՞ ա-  
ռաջիկը իբր անհարազատ — թող թէ շատ մը քննադատ-  
ներ կը սնդեան թէ հարազատ է — վերջին երկու հասուած-  
ները կողակն ցախցախից հարուած մը սալ առասպելա-  
բաններու և նրադրութեանց՝ որով որանալ կ'ուզեն Յիսու-  
սի պատմականութիւնը, ու հաստատեն՝

1. Յիսուսի պատմական դեմք մը ըլլալը ևւ 2. Աւե-  
սարաններու ևւ հարազատութիւնը :

Գ. Ե.

## ՀՈՌՎՄՍՅԵՅԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ՎԿՍՅՈՒԹԻԻՆ

### 1. ՏԱԿԻՏՈՍ

Ի՞նչ է Յիսուսի ժամանակակից ևւ առաքելական դա-  
րու մէջ ապ ող հեղինակներու վկայութիւնը Յիսուսի  
մասին . անոնք լսեցին ևւ գրեցին ո՛րեւէ բան Յիսուսի վը-  
րայ : Մեծ քննադատներէն Տր. Վայս գիտել կուտայ թէ  
«Տակիրտութիւն ևւ Աւեգիւնիտէն առաջ ապրող պատմիչնե-

րուն գրութիւնները ամբողջապէս կորսուած են » : Կրնանք վստահ ըլլալ թէ անոնց հեղինակութիւնները ուղղակի կամ անուղղակի առատ ակնարկութիւններ կը բովանդակէի Յիսուսի մասին : Սակայն ա՛սով մէկտեղ, երեք նշանաւոր և ճշգրիտ պատմաբաններու գրութիւններէն ունինք կարգ մը հատուածներ, որոնք կուգան վճռականորէն ապացուցանել, հակառակ առասպելաբաններու ջանքերուն, Յիսուսի պատմականութիւնը : Ուրիմն քննենք այս երեք հռչակաւոր պատմիչներու գրութեանց ա՛յն մասերը, որոնք կ'ակնարկեն Յիսուսի պատմականութեան :

Գայիոս Կուռնելիոս Տակիտոս, Հռովմայեցի նշանաւոր պատմաբանը, հաւանականաբար ծնած է 52-54 ին (Ք. թ. ), և մեռած է 120 ին : Փակագիծ մը բանալ և միջանկեալ դիտողութիւն մը ընել կ'ուզենք հոս : Յիսուսը առասպելականացնել աշխատողները Անոր ծննդեան թուականին անորոշութիւնը՝ դեկտ. 25ը թէ Յուլ. 6 ը, փաստ բռնելով, կ'ուզեն ժխտել Անոր պատմականութիւնը : Սակայն ահա՛ նշանաւոր պատմիչ մը՝ որու մասին տեղեկութիւն կարելի է գտնել բոլոր Համայնագիտաբաններու և Հռովմէական պատմութիւններու մէջ, բայց ասով մէկտեղ, ո՛չ ծննդեան և ո՛չ ալ մահուան թուականը որոշ է : Յիսուսի Ծննդեան օրը անորոշ է, այսինքն չենք գիտեր թէ ո՞ր օր և օրուան ո՞ր ժամուն ծնաւ Ան. սակայն փափաքելի էր գիտնալ թէ, առասպելաբանները իրենց նամակները, իրենց ծննդեան թուականը որոշելու համար ի՞նչ թուական կը գործածեն : Քրիստոնեայ աշխարհին գործածած թուականէն տարբեր թուական մը կը գործածեն արդիօք, ո՛չ ապաքէն քրիստոնէական թուականը՝ որ պատմական մեծ դէպքի մը անջնջելի ապացոյցն է : Եթէ մէկու մը ծննդեան և աւելցնենք, մահուան թուականին անորոշութիւնը ձեռք ունենալով, կրնան ժխտել անոր պատմականութիւնը, թող ժխտեն Տակիտոսի աշխարհ

գալը. գիտեմ, պիտի ըսեն, Տակիտոս գրաւոր յիշատակագիր թողուցիր է. շա՛տ աղէկ. Յիսուս աղկէ ա՛ւելի մեծ բան մը թողուցիր է աշխարհին — իր կեանքը և ահա 20 դարեր վկայ կը կանգնին իր կեանքին և կ'ուզեն հետեւիլ Անոր : Այս ասղերը գրողին ծննդեան թուականը անորոշ է, իր մօրը հաշիւով, վերջին Ռուսական և Թրքական պատերազմին գաղարկէն յետոյ յաջորդ ամառը ծնած ըլլալու է, այսինքն հաւանականաբար 1878ի ամառը : Ուրիմն ըստ առասպելաբաններու ենթադրութեան, ապագայի մէջ իմ գոյութիւնս կրնայ կասկածի ենթարկուիլ, չէ՞ . . . :

Սակայն անցնինք մեր բեկիքին :

Տակիտոսի կարողութիւնը իրբեւ պատմաբան, անժխտելի է, դէպքերը և եղիւթութիւնները իրենց իսկական գոյնով կը ներկայացնէ : Չափազանցութիւններէ կը խորշի : Իր «Տարեգրութիւններուն» (Annals) մէջ կրտէ թէ ինք բարձրագոյն կամ ալնիւ շարժառիթէ մղեալ գրեց իր պատմութիւնը : Քանի որ ինք գիւանագէտ և հիւպատոս էր, դատական արձանագրութիւններու և նահանգային տեղեկագիրներու ծանօթանալու ա՛մէն տեսակ դիւրութիւններ ունէր : Երբ ինչ տարեկան տղայ մըն էր, Հրեւովմի մեծ հրդեհը պատահեցաւ և ուստի ինք յոտակ և որոշ կերպով կրնար յիշել զայն և անոր բոլոր մանրամասնութիւնները :

Ահա՛ Տակիտոսի հատուածը որուն մէջ ան Հռովմի հրդեհին մասին (Յ. Տ. 64) կը խօսի :

«Այսպէս ներոն կամ զրոյցը խափոնելու համար իր տեղը յանցաւոր դբաւ և կատարեալ անգթութեամբ պատժեց այն մարդիկը, զորոնք հասարակ ժողովուրդը կատէր իրենց բազմոյն ոճիրներուն համար : Ակոնիֆ քրիստոնեայ կ'անուանեին զակոնիֆ : 1. Քրիստոս որևէ առևուած եր այս անունը, մեռցուած եր Տիբերիոսի իշխանութեան ատկ, փո-

խանորդ Պոնտացի Պիղատոսի ձեռամբ . 2 . Եւ ապախանիչ աւելորդապաշտութիւնը ասե՛նուակ մը հասնար զապուեցաւ . 3 . Եւ յետոյ երեւցաւ ոչ միայն Հրեասանի մեջ, ուր առաջին անգամ յառաջ եկաւ այս յարիճը, այլ նաեւ Հռովմի մեջ, ուր ամէն տեսակ սպանութիւններ և ազտոտ ապականութիւններ կը կեդրոնանան և նորաձեւութիւն կ'ըլլան : Առաջին անգամ ոմանք ձերբակալուեցան և խոստովանիլ բռնադատուեցան, և յետոյ անոնց տուած տեղեկութեան վրայ, 4 . մեծ բազմութիւն մը դատապարտուեցաւ ո՛չ այնչափ հրձիգութեան ոճիրին համար, որչափ մարդկային ցեղին հանդէպ իրենց տաճած ասելութեան համար : 5 . Եւ անոնք ոչ միայն մեռցուեցան, այլ նախաախինքով մեռցուեցան . անոնց կենդանիներու մորթեր կը հազդնէին, շուներէ բղքտուելու համար, կամ խաչ կը հանուէին, կրակով այրուելու համար, և երբ ցորեկուան լոյսը մարէր՝ իբրև գիշերուան լոյս վառուելու համար» :

Տակիտոսի այս հատուածը որոշ և անփոսելի կերպով Քրիստոնէութեան Հիմնադրին պատմական գոյութիւնը կ'ապահովէ՝ որուն մէջ կ'ըսուի թէ, 1 . Տիբերիոսի իշխանութեան օրով Հռովմայեցի փոխանորդ մը կար Պոնտացի Պիղատոս անունով : 2 . Թէ այս անձին միջոցաւ Քրիստոս մեռցուեցաւ : 3 . Թէ Քրիստոս էր Քրիստոնեաներուն Հիմնադիրը : 4 . Թէ Քրիստոնէութիւնը Հրէաստանի մէջ ծագում առաւ : 5 . Թէ շուտով մինչև Հռովմ տարածուեցաւ և վերջապէս 6 . Թէ Հռովմի մէջ նորադարձներու մեծ մը բազմութիւն կար :

Քննադատօրէն նկատի առնենք Տակիտոսի այս հատուածը

Կը տեսնենք որ Տակիտոս՝ Քրիստոս (Christus) քաւը անձնական անուն մը կը նկատէ և ո՛չ թէ անձնական կամ մակդիր : Ասիկա արդարանալի սխալ մըն է Հռովմայեցի պատմիչի մը համար : Ուրիշ պատմաբաններ ալ այս նոյն

սխալը գործեր են : Քրիստոնէութիւնը «չարիք» (նախապաշարում) կոչողի մը համար, Քրիստոս անձնականը լրր անձնական անուն մը գործածել ներկի չէ . . . :

Տեսնենք ի՞նչ կ'ըսեն քննադատներ հատուածին մասին :

Ա . Հատուածին ոճը և Լատինականութիւնը Տակիտոսին յատուկ է :

Բ . Երկրորդ դարուն մէջ չկայ ծանօթ ուեէ եկեղեցական, որուն Լատիներէնի հմտութիւնը ստուգուի և այսպէս ենթադրար ըսուի թէ, ան աւելցուց այս հատուածը Տակիտոսի բնագրին մէջ :

Գ . Հասուածը արձանարհակ էր քոյն կը ժայթի Քրիստոսի և Քրիստոնեութեան դիմ, երբ Քրիստոնեայ կղերի մը ձեռքը մտցուած ըլլար, տաճարաւախն է խորհրդի անձնական անարգանքի պիտի խօսէր իր սիրելի Քրիստոսին և իր հետեւած կրօնիկն վրայ :

Ուրեմն իրաւունքի կշիռը մեր կողմն է . ճշմարտութիւնը չթաղուիր : Կրնա՞նք թաղել արեւին ճառագայթը . . . :

Ուստի արտաքին պատմիչներէն ունինք Տակիտոսի վկայութիւնը Յիսուսի պատմականութեան մասին :

**ԳԱՅԻՈՍ ՍՈՒԻԴԻՆԻՈՍ**  
(Caius Suetinius Tranquillus)

Տակիտոսի ժամանակակից այս մեծանուն պատմաբանը՝ ծնաւ 70ին (Ք. թ .) : Նախապէս փաստաբան էր . վերջէն Ադրիանոս (Hadrian) կայսեր անձնական քարտուղարութեան պաշտօնին հասաւ, ուստի մօտէն ճշգրիտ լուրեր կը ստանար նշանաւոր դէպքերու և անցքերու մասին : Տակիտոսի պէս ինք ևս պատեհութիւն ունեցաւ Կալիգուլա և Ներոն կայսրերու ժամանակակից բոլոր նշանաւոր անձերու հետ տեսակցելու :

Տեաննք թէ ի՞նչ ակնարկութիւններ կրնանք գտնել իր գրութեանց մէջ Յիսուսի մասին: Իր Կողոզասի Վարջը (Life of Claudius) գործին ժ.Չ. Գլուխին մէջ ակնարկութիւն կ'ընէ «Քրիստոս» (Christus) անուն մէկու մը, զոր Հրեայ խռովարար մը կը նկատէ և կը կարծէ թէ կ'ապրէր... Հռովմի մէջ:

Դարձեալ «Ներոնի Վարջը» (Life of Nero) գործին ժ.Չ. Գլուխին մէջ կ'ըսէ. «Քրիստոնեաները պատժուեցան չար և նոր նախապաշարումի տէր անձեր ըլլալուն համար»: Աս վկայութիւնը կը համաձայնի Տակիտոսինին հետ:

Վերոգրեալ հատուածներուն մէջ երկու ուշագրաւ կէտեր կան. առաջինն է «Christus» բառը. պատմիչը որով կ'ակնարկէ այս բառով: Բրոֆ. Թօրպլըն 'ըսէ. «Հեղինակը Յիսուս ըսել կ'ուզէ. վասնզի ա. եթէ հասարակ խռովարար Հրեայի մը ակնարկէր այդ բառով, այդ պարագային չլիտի գրէր լոկ Քրիստոս (Christus), այլ Քրիստոս կոչուած (Christo quidam): Ք. Christus արգաստէ Քրիստոս կը նշանակէ, վասնզի երբեք որեւէ փաստ կամ ապացոյց չկայ թէ Քրիստոս անունով մէկը իբրեւ խռովարար ապրեցաւ Հռովմի կամ նոյն իսկ Իտալիոյ մէջ»:

Երկրորդ ուշագրաւ կէտը Հռովմայեցի պատմաբանին զՔրիստոս մինչև Հռովմ փոխադրելն է: Ասիկա զարմանալի թուելու չէ. վասնզի, ա. ինք ստոյգ տեղեկութիւն բնաւ չունէր Քրիստոսի և Քրիստոնէութեան վրայ. Ք. Քրիստոսի և Քրիստոնէութեան անունը կը սփռուի յիշեց ո՛չ թէ զանոնք ներկայացնելու համար՝ այլ որովհետև անոնք յարաբերութիւն կ'ունենան իր պատմելիք նիւթին հետ:

Տակիտոսի և Սուեղինիոսի հատուածները կ'աւնուելն ո՛չ թէ Յիսուսի աշխարհ եկած ըլլալուն իրողութիւնը ա-

պացուցանելու համար, այլ ցուցնելու թէ այդ իրողութիւնը արձանագրուած եւ ընդունուած էր. այսինքն այն պահուն երբ այս հեղինակները կ'ապրէին, արդէն Յիսուսի աշխարհ եկած ըլլալուն խնդիրը անվիճելի դէպքերու կարգը դատուած էր, միայն թէ Հռովմայեցի հեղինակները ստոյգ և որոշ տեղեկութիւն չունէին Քրիստոսի և Քրիստոնէութեան մասին, ընդհակառակը անոնց դէմ նախապաշարուած էին և ասիկա զարմանալի չէ. քանի որ քսաներորդ լուսաւորեալ դարուն մէջ իսկ նախապաշարեալ անձեր՝ քիչ թիւ մը չէ որ կը ներկայացնեն...:

### 3. ԿՐՏՍԵՐ ՊԼԻՆԻՍՍ

(Caius C. Lecundus)

Պլինիոս ծնաւ 61 թուականին և 103-105ին Տրայիանոս (Trajan) կայսեր կողմէ Բիւթանիոյ և Պոնտոսի կուսակալ կարգուեցաւ: Իր «Տրայիանոսի վրայ ներքողեան» մը գիրքը շա՛տ նշանաւոր է: Իր կուսակալութեան միջոցին ստիպուեցաւ ստոյգ տեղեկութիւններ քաղել քրիստոնեաներու վրայ և զանոնք հաղորդել կայսեր: Իր տասը գրքերու բաժնուած նամակներու հաւաքածոյին տասներորդ գրքին իննսունը եօթերորդն է հետագայ հատուածը.

«Իմ սովորութիւնս է, Տէր կայսր, ձեզի տեղեկացնել այն բոլոր հարցերը, որոնց մասին տարակոյս ունիմ: Ո՞վ կրնայ զիս աւելի աղէկ առաջնորդել՝ երբ շուարած վիճակ մը ունիմ. կամ զիս լուսաւորել, երբ տգիտութեան մէջ եմ: Քրիստոնեաներու մասին եղած խուզարկութեանց երբեք մասնակցած չեմ, այդ պատճառով չեմ գիտեր թէ սովորաբար պատժուած կամ խուզարկուած ոճիրը ի՞նչ է և կամ թէ ի՞նչ թոյլտուութիւն կ'ըլլայ: Այսպէս քիչ անորոշութիւն չեմ ունեցած թէ տարիքի մա-

սին զանազանութիւն կա՞յ, կամ թէ ամէնէն տկար յան-  
 ցաւորներուն հետ ալ ամէնէն զօրաւորներո՞ւն պէս պէտք  
 է վարուիլ, թէ զվճարողներու ներում կը շնորհո՞ւնի, կամ  
 թէ ամէն անոնք որ քրիստոնեայ եղած են, բան մը չեն  
 շահիր այդպէս ըլլալէ զաղբկով, թէ պարզ անունը՝ ա-  
 ոանց գաղտնի ոճիրներու՝ պատիժ կը հրաւիրէ՞, կամ թէ  
 գաղտնի ոճիրները որ անունին հետ կապ ալ ունին: Նոյն  
 ատեն անա այս ընթացքն է որ ես բունը եմ առջեւս քը-  
 րիստոնեայ ամբաստանուածներուն հանդէպ: (6) Ես ի-  
 րենց կը հարցնեմ թէ քրիստոնեայ են, և եթէ խոստո-  
 վանին՝ անոնց երկրորդ կամ երրորդ անգամ կը հարցնեմ  
 պատիժի սպառնալիքներով: Եթէ անոնք յամառին խոս-  
 տովանիլ՝ զանոնք մեռցնել կը հրաւայեմ, որովհետեւ  
 վատահ եմ թէ անոնց խոստովանութիւնը ինչ որ ալ ըլ-  
 լայ, ամէն պարագայի մէջ, յամառութիւնը եւ անկողն-  
 անդի կամախորտութիւնը պատիժի արժանի են: Ուրիշներ  
 կային նոյն յիմարութեան ենթակայ, բայց քանի որ ա-  
 նոնք(7) Հռովմայեցի քաղաքացիներ են՝ Հռովմ գրկուե-  
 լու համար նշանակելի զանոնք...: Անոնց մասին որ ը-  
 սին թէ իրենք ո՛չ Քրիստոնեայ են ո՛չ ալ եղած են՝ յար-  
 մար դատեցի անպարտ արձակել, որովհետեւ անոնք իմ  
 հրամանիս վրայ ազօթք մը կրկնեցին աստուածներու  
 ուղղուած, և խուսկով ու գինիով մաղթանքներ ըրին  
 ձեր արձանին, զոր այս նպատակով դատարան բերել  
 սուած էի աստուածներու արձաններուն հետ և նոյն ա-  
 տեն անիծեցին (8) Քրիստոսը. (9) (Կ'ըսուի) թէ իրապէս  
 Քրիստոնեայ եղողներուն այս բաներէն և ո՛չ մէկը ընել  
 տալ կարելի չէ: Ուրիշներ՝ որոնց անունները արուած էին  
 տեղեկատուներու կողմէ, ըսին թէ իրենք Քրիստոնեայ է-  
 րին և յետոյ ուրացան, բացատրելով թէ եղած էին բայց  
 յետոյ ձգած էին՝ ոմանք երեք, ոմանց շատ մը, և ոմանք  
 մինչև քսան տարիներ առաջ: Այս բոլորն ալ ո՛չ միայն

ձեր և աստուածներու արձանին երկրպագութիւն ըրին՝  
 այլ նաև անէծք կարգացին Քրիստոսի: Պնդեցին թէ ի-  
 րենց սխալը կամ յանցանքը սաչափ եղած էր, (10) թէ ի-  
 րենց սովորութիւնն էր որոշեալ որ մը արեւածագէն առաջ  
 հաւաքուիլ եւ կարգով երգ մը երգել Քրիստոսի՝ (11) իբրև  
 Աստուծոյ, և թէ իրենք ինքզինքնին կը կապէին ոչ թէ  
 ոճիրի մը համար, այլ գողութիւն, աւազակութիւն,  
 կամ շնութիւն չընելու համար, խոստմնազանց չըլլալու  
 համար, և իրենց յանձնուած բան մը՝ երբ հարցուի՝ չու-  
 րանալու համար:

«Այս կատարելէ ետքը անոնց սովորութիւնն էր բաժ-  
 նուելի ու նորէն միանալ կերակուր ուտելու համար, բայց  
 սովորական ու անպիտան կերակուր, և զայս խոյ (Կ'ըսեն  
 անոնք) զաղբած էին ընել իմ հրամանագիրէս ետքը, ո-  
 թով ձեր հրամաններուն համեմատ արգելած էի ակումբ-  
 ներու գոյութիւնը: Այս մասին աւելի կարեւոր նկատեցի  
 երկու սպասուհիներէ՝ որոնք միևիպարե(=սարկաւապուհի)  
 կը կոչուէին, (12) չարչարելով ստուգել թէ այդ տեղե-  
 կութիւնը ո՛րչափ ճշմարիտ էր, բայց չար ու յանդուգն  
 աւելորդապաշտութենէ՝ զատ բան մը չգտայ: Այս պատ-  
 ճառով ինդիրը յետաձգեցի և փութացի ձեզի խորհուրդ  
 հարցնելու...: Ամէն տարիքէ, ամէն աստիճանէ, մանա-  
 ւանդ երկու սեռէ շատեր ներկայ ու ապագայ վտանգի  
 կ'ենթարկուին: (13) Այդ աւելորդապաշտութեան վարակու-  
 մը քախանցած է ոչ միայն խաղախերու մեջ, այլ նաև  
 գիւղերու եւ գիւղակներու մեջ, բայց նորէն ալ կարելի կը  
 թուի զայն կասեցնել ու չակել»:

Կայսրը ի պատասխան այս նամակին, կը հրամայէ որ  
 եթէ Քրիստոնեաներուն յամառութիւնը հաստատուի,  
 այսինքն եթէ թագաւորին խուսկ ծխել չուզեն, պատ-  
 ժուին, սակայն պատժուելու համար հետապնդում պէտք  
 չէ կատարուի անոնց հանդէպ:

Պլինիոսի տեղեկագրին կամ նամակին էն ուշագրաւ կէտերը որոնք են . ա . թէ ինք հեթանոս աղբիւրէ լսած էր որ Քրիստոնեաները , ո՛չ Հռովմի աստուածները կը ճանչնային և ոչ ալ կայսեր խունկ կը ծխէին և հակառակ ամէն տեսակ ստիպումի և սպառնալիքներու , չէին ուրանար իրենց Քրիստոսը . . . յամառութեամբ : ք . թէ անոնք ամէն առտու և իրիկուն ժողովներ կ'ունենային , որ ասոն նախ փառաբանութիւն կ'երգէին Քրիստոսի՝ իբրեւ Աստուծոյ , սուրբ երգում կամ ուխտ կ'ընէին և անկէ վերջ ճաշի կը նստէին :

Ինչո՞ւ Պլինիոս Քրիստոնեաները նախապաշարեալ կը կոչէ . որովհետեւ Հռովմի աստուածները չէին ճանչնար և կայսեր խունկ չէին ծխեր և ուստի կասկածեցաւ թէ անոնք կայսեր դէմ պիտի ելլէին , ասոր համար տեղեկագրեց թէ անոնք քաղաքական թաղուն նպատակներ ունէին , ինչպէս կը յայտնուի իր նամակներուն ոճէն :

Ուշագրաւ կէտ մը կայ Պլինիոսի նամակին մէջ . ան կ'ըսէ «Քրիստոնեայք փառաբանութեան երգեր կ'երգեն Քրիստոսի իբրեւ Աստուծոյ : «Իբրեւ» բառը յայտնի կերպով կը ցուցնէ որ Քրիստոնեաները կը հաւատային Յիսուսի կատարեալ մարդկութեանը և հետեւաբար պատմական դէմք մը ըլլալուն :

\* \* Այսպէս ուրեմն՝ երեք Հռովմայեցի պատմիչներ Տակիտոս , Սուեղինիոս և Պլինիոս միաբան կը վկայեն , — թէ եւ անգլիտակցաբար — թէ Յիսուս անունով Մէկը՝ որ Քրիստոս կը կոչուէր , աշխարհ եկած էր դեռ քիչ առաջ : Նպասակաւոր չե իրենց վիպադրիւնը : Ընդհակառակը . ինչպէս նախապէս ակնարկեցինք , անոնք շա՛տ աննպաստ կերպով կը խօսին Քրիստոսի և Անոր կրօնքին մասին և կը խօսին պարզապէս իրենց կազմած գաղափարներու վրայ յենելով և պարագաներէ ստիպեալ : Հատուածներուն բովանդակած արհամարհական մեծ և որոշ

չափը , զոր կ'արտայայտուի Քրիստոնեաներուն դէմ , չապացուցաներ թէ անոնք բնագրին զուտ մասը կը կազմեն և վերջէն ներմուծուած չեն : Իսկ եթէ Քրիստոնեայ կղերականներ ներմուծեցին այդ հատուածները , ինչպէս կ'երեւակային տուտակարանները , ինչո՞ւ յարգական և գովաբանական ոճով չխօսեցան իրենց կեանքին , Քրիստոսին և Քրիստոնէութեան վրայ . ո՞վ իր կրօնքը «նախապաշարեալ» , անոր հետեւողները «մոլեւանդ» , «չար» «յամառ» և այլն կը կոչէ : Զարմանալի բան , ուրանալու համար որեւէ ճշմարտութիւն , մարդիկ ամէն տեսակ երեւակայութիւններու և ենթադրութիւններու կը դիմեն առանց իրերուն խորը թափանցելու և ամէն պարագաները նկատի ունենալու և աւելի զարմանալի չէ՞ որ անա՛ստանի անձերու (իմա՛ դպրոցականներու) հետեւողներ տլ կը գանուին :

«Ով որ լսելու ականջ ունի թող լսէ» :

Գ. Լ. Զ.

ՀՐԻՍԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԸ

Թալմուտը՝ Հրէական կանխագոյն բերանացի աւանդութիւններու և զրոյցներու հաւաքածոյ մը , եթէ ո՛չ ուղղակի , զոնեւ անուղղակի կերպով մեծ ծառայութիւն կը մատուցանէ քննադատութեան գործին և Յիսուսի կեանքին պատկանող կարգ մը խնդիրներու վրայ կողմնակի լոյս մը կը սփռէ : Նիւթին մանելէ առաջ , մեր ընթերցողներուն ուշադրութեանը կը յանձնենք սա երկու կէտերը . Ա . Թալմուտը աւանդութիւններու հաւաքածոյ մըն է , անոր մէջ Յիսուսի և Անոր կեանքին մասին գտնուող կարգ մը խնդիրները Հրեաներու Մեթիւսի մասին ունեցած կանխակալ կարծիքներուն արտացոլացումն է միայն , և ուստի Յիսուսի իրական կեանքի պատկերացումը կա-

րկի չէ գտնել անոր սողերուն մէջ, և, Բ, Բարբիները՝ որոնք Յիսուսի և Գրիստոնէութեան դէմ ունեցած թշնամութիւնը ակնհաս է, նպաստաւոր սխալ տեղեկութիւններով կամ աւանդութիւններով լեցուցին Թաւմուտի այն կարգ մը էջերը՝ որոնք Յիսուսի շուրջ կը դառնան, որպէսզի այս կերպով պարզապէս նսեմացնէին, և եթէ կարելի ըլլար, ջնջէին Անոր անունն ու համբաւը: Ուրեմն հպանցիկ ակնարկ մը միայն նեանք բարունիներու գրականութեան վրայ, տեսնելու համար թէ կրնանք գտնել անոր մէջ պատմական Յիսուսի մը հետքը:

1. Յիսուսի ցեղաբանական հաշիւը. «Միշնայ»ի (Mishna) մէջ սա ակնարկութիւնը կը գտնուի. «Սիմէոն Պէն Ազզաի (Simeon Ben Azzai) ըսած էր. ևս Երուսաղէմի մէջ ցեղաբանութիւններու գիրք մը գտայ, որուն մէջ գրուած էր թէ՛ Այսինչ Այսինչեանը (So and so) ամուսնացած կնոջ մը անհարազատ զաւակն էր»: Այս նախադասութիւնը նախապէս անորոջ կը թուի, սակայն զայն հասկնալ դիւրին է: Սիմէոն Պէն Ազզաի Հրեայ բարբի մըն էր, որ Ա. դարու վերջերը կ'ապրէր և հռչակաւոր Բարբի Ազիպայի յաջորդ սերունդին կը պատկանէր: Ո՞վ է «Այս ինչ Այսինչեանը» որուն կ'ակնարկուի. պարզապէս Յիսուսն է: Բարբիները իրենց մէջ գաղանի և հեզնական ածականներ կը գործածէին, երբ Յիսուսի վրայ կը խօսէին, իրենց այս թշնամական ընթացքին պատճառը յայտնի է արդէն:

Վերոգրեալ հատուածը, թէև անարդ և ստոր զըպարտութիւն մըն է պարզապէս, սակայն քննադատութեան գործին համար՝ չա՛տ կարեւոր է, ահա՛ պատճառը. Սիմէոն Պէն Ազզաի Երուսաղէմի տաճարը կը մանէ և հոն կը գտնէ ցեղաբանութեան գիրք մը, որուն մէջ կը հանդիպի Յիսուսի անունին ալ, որուն համար կ'ըսուի թէ «ամուսնացած կնոջ մը անհարազատ զաւակն էր»: Սի-

մէոն Պէն Ազզաիի՝ Երուսաղէմի տաճարը երթալով (70-ական թուականէն առաջ) ցեղաբանական հաշիւներով հետաքրքրուելը՝ շատ քնական էր. Յովսեփոս կը պատմէ թէ ամէն Հրեայ այդ միջոցին ցեղաբանական հաշիւներու շա՛տ մեծ կարեւորութիւն կուտար, ստուգելու համար թէ ինք ո՞ր մէկ նախահայրէն, Աբրահամէն, Գաբրիէն թէ ուրիշ նշանաւոր նախահայրէ մը սերած էր:

Այսպէս ուրեմն, Բարբին՝ Յիսուսի անունը կը դրանէ Երուսաղէմի տաճարին պաշտօնական տոմարին մէջ. սակայն ի՞նչ կ'ըսուի Անոր համար. «Թէ ամուսնացած կնոջ մը անհարազատ զաւակն էր»: Ի՞նչ, Յիսուս ամուսնացած կնոջ մը անհարազատ զաւակը՝ կարելի՞ բան է... անշուշտ այս պիտի ըլլար ո՛րեք ընթերցողի բացագանչութիւնը: Ի՞նչ բացատրութիւն տալ պէտք է: Վեր. Տր. Թորպըրնի հետ կը համաձայնին բոլոր քննադատներ, ըսելու թէ՛ ինչ որ բոլորովին բանաւոր է խորհիլ, քանանադատարին ձեռքով կամ անոր հրամանով կատարուեցաւ այս աւերարկից արքայդոնքիւնը՝ որով եղծուեցան Յիսուսի հարազատ ժօր՝ Մարիամի և իրեն ամուսին համարուող Յովսէփի անունները՝ որոնք նախապէս օրինաւոր կերպով արձանադրուած էին. և այս կերպով մեղաւոր գոյն մը առին Յիսուսի ծննդեան պարագային: Պատճառը. արդէն յայտնի է, զԱյն Սաչը հանկ տուգներուն համար ասանկ չարափոխութիւն ո՛ւնէ միայն մեզք չէր, այլ զուցէ առաքինութիւն ալ կը սեպուէր, քանի որ ասով «Օրէնքին թշնամի և Հրէական ազգին թշնամի» եղողին անունը կը ջանալին անպատուել և ջնջել: Իսկ թէ երբ կատարուեցան այս չարափոխութիւնը. Բրօֆ. Թորպըրն կը պատասխանէ. «Երբ Մատթէոսի և Դուկասի Աւետարանները գրուեցան, որոնք Յիսուսի ցեղաբանական հաշիւներն ալ առին, քանանաները ուղեցին զԱյն անպատուել և արգելք ըլլալ Անոր անունին տարածուելուն, և ուստի այս ստոր միջոցին դիմեցին, և



նոյն ատեն բերանացի կերպով ալ ժողովուրդին մէջ բեր-  
 նէ բերան տարածեցին այս ստայօք լուրը . այս է մէկ պա-  
 տասխանը : Իսկ միւս պատասխանն է թէ այս չարափո-  
 խուծիւնը աւելի շուտ կատարուեցաւ . այսինքն Յիսուս  
 սի Մահէն և Յարութենէն քիչ վերջ, կրբ տեսան թէ Անոր  
 հետեւողները սկսան շատնալ և Հրեաներէն շատեր զԱյն  
 դաւանեցան» : Ուրեմն այս պարագան կ'ապացուցանէ թէ՛  
 Յիսուսի անունը Իր ծննդեան ատենը օրինաւորապէս ար-  
 ձանադրուեցաւ Երուսաղէմի տաճարին մէջ, սակայն յի-  
 տոյ քահայանապետը ինք իր ձեռքով չարափոխեց զայն  
 և կամ չարափոխել տուաւ : Անտրամաբանակա՞ն է այս  
 ենթադրութիւնը . ո՞վ կրնայ բացարձակապէս ժխտել,  
 քանի որ ամէն պարագայի մէջ Յիսուսի անունին արձա-  
 նագրութիւնը՝ Տաճարին տոմարին մէջ, կը հաստատուի  
 Բաբելին վկայութեամբ և Թալմուտական աւանդութեամբ :  
 Թալմուտի բոլոր պատմութիւնները՝ թէեւ անպատուարե-  
 րանգներով և այլանդակ բացատրութիւններով կը ներ-  
 կայանան, սակայն ամէն պարագայի մէջ, պատմական կո-  
 ռիզ մը կը բովանդակեն : Հետեւինք այդ աւանդութիւն-  
 ներուն :

2. Եզրիպտոս վայելչորս պարագան . Աւետարանները  
 կ'ըսեն թէ՛ Յիսուս Մանուկը Եզրիպտոս տարուեցաւ Հե-  
 բովդէսի թշնամութենէն ազատելու համար . իսկ Թալ-  
 մուտ ուրիշ պատճառի կը վերագրէ Անոր փախուստը և  
 կ'ըսէ թէ, Յիսուս հոն սորվեցաւ մոզական արհեստը՝ ու-  
 բով կատարեց կարգ մը հրաշագործութիւններ : Թալմուտի  
 այս չարափոխուած պատմութիւնն ալ կը հաստատէ թէ՛  
 Աւետարաններուն հարազատութիւնը և թէ՛ Յիսուսի պատ-  
 մականութիւնը :

3. Աշակերտները ընտրելու պարագան . ըստ Թալմու-  
 տի, Յիսուս միայն հինգ աշակերտներ ընտրեց . ահաւա-  
 սիկ անոնց անունները՝ ինքնին չա՛տ հետաքրքրական : 1 .

Մաթթի (Մատթէոս) . 2 . Նաքա, (Նիկողոմոս?), 3 . Նե-  
 ցէր, 4 . Պոնա և 5 . Թոդահ (Թադէոս?) :

4 . Հրաշագործութեան պարագան . Թէ Յիսուսի և թէ  
 աշակերտներուն հրաշքներ կատարած ըլլալուն հետքերն  
 ալ կը նշմարուին Հրէական աւանդութեան մէջ : Յառաջ  
 բերենք օրինակ մը որ չա՛տ հետաքրքրական է, քանի  
 որ աւանդութիւնը կը ջանայ ժխտել աշակերտներուն հը-  
 բաշքներ գործելու կարողութիւնը : «Բարբի Եզրիպտոս  
 Տամայի որդին, օձէ մը խայթուեցաւ և ահա մարդ մը՝  
 Յակորոս անունով եկաւ որ զայն բժշկէ Յիսուսի անու-  
 նով . . . : Բայց բարբի Իսամայէլ անոր արտօնութիւն չտու-  
 աւ ընելով . «Այդ բանը քեզի չի թոյլատրուիր, որդիդ Տա-  
 մայի» : Անիկա պատասխանեց . «Թո՛ղ տուր և ես քեզի  
 դէմ իշխանութիւն պիտի բանեցնեմ թէ ատիկա օրինա-  
 ւոր է» : Սակայն անիկա իր մտենէն առաջ չկրցաւ իշ-  
 խանութիւն ցոյց տալ : Եւ ի՞նչ էր այդ իշխանութիւնը—  
 «մարդ ի՞նչ որ քնէ անոր մէջ պիտի մնայ, բայց ըսուած  
 չէ թէ անոր մէջ պիտի մնանի» :

Ահա՛ ուրիշ օրինակ մըն ալ Միսրաշէն, որ Փող . Ժ .  
 Գլուխ 5 ի վրայ շինուած է . «Եօչուա Պէն Լեւիի որդին իր  
 կոկորդին մէջ բան մը ունէր : Ան գնաց եւ բերաւ Պէն  
 Բանտերայի (= Յիսուսի) մարդոցմէն (աշակերտներէն) մէ-  
 կը իր կլլածը դուրս հանել տալու համար : Եօչուա հար-  
 կը իր կլլածը դուրս հանել տալու համար» . անիկա  
 ցուց անոր . «Ի՞նչ պիտի բան հանելու համար» . անիկա  
 պատասխանեց . «Յայտնի համար մը յայտնի մարդու մը (Յի-  
 սուսի) անունով» : Անիկա պատասխանեց . «Աւելի աղէկ  
 պիտի ըլլար անոր համար, որ զայն թաղեր՝ քան թէ ա-  
 տանի համար մը վրան կարգար» :

Թօրէսօդիի մէջ յիմարական հրաշագործութիւններու  
 պատմութիւնները կը վերագրուին Յիսուսի . օր . համար,  
 Ան կաւէ շինուած ճնճղուկներու վրայ խօսքեր մը կ'ը-  
 սէ և ահա . . . անոնք կը կենդանանան ու թռչին : Ջը-

բաղաճքի քար մը կը դնէ ծովուն վրայ և երբ վրան կը նստի... կը աատանի. (Գուցէ թեկադրուած Մատթ. ԺԼ. 6ի համարէն) և դեռ ասոնց նման ուրիշ արտառոց հրաշքներ:

Վերոգրեալ պատմութիւնները՝ որոնք Յիսուսի կանխագոյն (=պատանեկական) կեանքին կը վերաբերին, իբր օրինակ կրբաւեն անշուշտ, ցոյց տալու համար թէ պատանական խօսքեր ու դէպքեր կը վերագրուէին Յիսուս անունով անձի մը, որ իրապէս ապրած էր, և միշտ կը յիշուէր ժողովուրդի և անոր ուսուցիչներէն: Այժմ տեսնենք թէ ինչ կ'ըսէ բարբինքու գրականութիւնը՝ Յիսուսի վերջին օրերու մասին:

5. Յիսուսի դասապարտքեան պարագան. Թօլէսոդի կը պատմէ թէ ի՞նչպէս Յիսուս Սինակոկին առջև հանուեցաւ, ուր Ան կապուեցաւ «Տապանակի ձողերուն և գլխուն վրայ դրուեցաւ փուշէ պսակ»: Սակայն հաւատուրացնիքը զԱյն ազատեցին և Ան փախաւ... Անախոք և յետոյ Բաղարջակերաց տօնին օրը՝ Երուսաղէմ վերադարձաւ իշու մը վրայ նստած: Ասկէ վերջ իր աշակերտներէն մէկը Կաիզա (պարտիզպան) անունով, մասնեց զԱյն և «իմաստուն մարդոց» ձեռքով ձերբակալուեցաւ:

Ան այս պատմութեան թալմուտական տարբեր մէկ ձեւն ալ. «Բաղարջակերաց տօնի շաբաթ օրը (Յիսուս) կախուեցաւ: Այս բոլոր մինչև 40 օրուայ ճամբայ հետուն տարածուեցաւ, մինչ ան աղաղակեց. (Յիսուս) կախուելու կը տարուի, վասնզի վճուկութիւն ըրած է, Իսրայէլը մոլորցուցեր է, և զանոնք Եհովայէն օտարացուցեր է: Ով որ կրնայ զԱնիկա արդարացնելու փաստ յառաջ բերել, թող դայ և այդ մասին տեղեկութիւն տայ»: Սակայն զԱնիկա արդարացնելու միջոց չգտնուեցաւ և ասոր համար անիկա Բաղարջակերաց տօնին շաբաթ օրը կախուեցաւ: Ուլլա<sup>(1)</sup> (Ulla) ըսած է. «Կը խորհի՞ս սակայն թէ

(1). Պաղեստինցի բարբի մը որ Դ. դարու Ա. քառորդին մէջ կ'ապրէր:

Անիկա կը սպականէր անանկներու, որոնց համար արդարացնելու փաստ փնտռուելու է: Ան շատ մեծ հրապուրիչ մըն էր և Ամենակարողը Անոր համար ըսած էր՝ քու աչքքդ Անոր չինայէ, ո՛չ ալ Անոր վրայ գութ ունենաս. (Բ. Օր. ԺԳ. 8): Սակայն Յիսուսի պարագան քիչ մը տարբեր էր, վասնզի իր անզը զօրաւոր եղողներուն մօտն էր<sup>(2)</sup>:

Զարմանալի է որ վերոգրեալ հատուածին մէջ Պիղատոսի անունը չերեւիր, և ո՛չ ալ բան մը կ'ըսուի Հոռոմէական դատավարութեան մասին: Այս պարագան Հրեաներու հարատ և ազգայնամոլ հոգիին կարկի է վերագրուել, վասնզի Կ'երեւի թէ չուզեցին իրենց քաղաքական անկարողութիւնը ցոյց տալ, ինչպէս իրաւամբ զիտել կ'ուտայ Տր. Թօլպրին:

6. Խաչերութեան պարագան. «Թօլէսոդի» մէջ Աւետարաններուն Սաչելութեան պատմութիւնը խնդկատակօրէն չարափոխուած ձևով մը կը ներկայանայ. ամփոփուածը տանք: Յիսուսի ձերբակալուած ժամանակ «Հաւատուրացնիքը սկսան ողբալ, սակայն զայն աղատել չէին կրնար»: Իր մահուան դատապարտուելուն ժամանակն էր «Ուրբաթ կամ բաղարջակերաց և Շաբաթին հանգստեան առջի օրը»: Յետոյ կը շարունակուի պատմութիւնը սապէս. «Երբ անոնք պիտի կախէին զայն ձառի մը (Heez) վրայ, կտորեցաւ, վասնզի «անունը» անոր հետ էր: Վերջը—քանի որ ոչ մէկ ծառ կարող պիտի ըլլար զանիկա կրել—կաղանքի մը կորը փորձեցին որ չկտորեցաւ: Ըստ աւանդութեան, Յիսուս նախապէս գիտնալով որ զինքը «ժառէ» մը պիտի կախէին, բոլոր ծառերուն վրայ «անունը» տրտասանած էր, որպէսզի երբ զինքը որեւէ ծառի վրայ կախելու հանէին, կտորէ: Ասոր համար երբ

(2). Գերման քննադատներէն մէկը (Daible) կը կարծէ թէ «զօրաւոր եղողներուն մօտն էր» խօսքը կ'ակնարկէ Պիղատոսի և Հոռոմէացիներուն:

կախուեցաւ . . . կաղամբի մը կոթին վրայ, չկտորեցաւ որովհետեւ բանջարեղէն էր: Ու աւանդութիւնը կը շարունակէ ըսել. այսպէս Անոր մարմինը մնաց «մինչեւ յետ միջօրէի աղօթքի ժամանակը» որ բոլորովին կը համաձայնի Աւետարանի յառաջ բերած ժամանակին: Վերջապէս մարմինը վար կ'առնուի, որովհետեւ «ամբողջ գիշերը ծառին վրայ մնալու չէր»:

7. Թաղան պատմութիւնը բոլորովին տարբեր է. «Անոնք թաղեցին զայն, կ'ըսէ հեղինակը, շաբաթին առաջին օրը»: Իր աշակերտները ողբ կ'ընեն: Յետոյ այնոր յարութեան լուրը կը տարածուի ամէն կողմ: Սակայն թագուհիին պահանջումին վրայ Անոր մարմինը կը փնտռուի, որոջ ժամանակի մը մէջ անպատճառ գտնուելու էր: Ողբ մը կ'ըսկի Իսրայէլի մէջ: Վերջապէս «ծերունի» Բարբի մը յառաջ կուգայ և կ'ըսէ թէ ինք զԱնիկա գերեզմանէն հանելով ուրիշ գերեզման մը փորած էր գետի մը ափին մօտ և այնոր մարմինը հոն դնելէ վերջ. ջուրը վրան կապած էր: Ասոր վրայ Հրեաներ կ'երթան Յիսուսի մարմինը կը գտնեն և գայն Երուսաղէմ փողոցներուն մէջէն . . . չուաններով քաշելով կը բերեն թագուհիին առջեւ ու կ'ըսեն. «Ահա՛ անիկա որ երկինք համբարձեր էր»: Թագուհին այս բանը տեսնելով «կը ծաղրէ հաւատաւորացները» որոնք կը փախչին «երեքը Արարատ լեռը, երեքը Հայաստան, երեքը Հռոմ և ուրիշներ ուրիշ կողմ և ժողովուրդը կը մոլորցնեն»: Յետոյ հեղինակը կ'աւելցնէ ուրախութեամբ. «Մակայն ուր ո՞ր անոնք գացին, Աստուծոյ դատաստանն ալ հետեւին գնաց և սպաննուցան»: ,

Ուշիմ ընթերցողը այս անհամ պատմութեան և Աւետարաններու պատմութեան մէջ նմանութեան կամ համաձայնութեան կէտեր պիտի նշմարէ: Զգուշաւոր վերլուծում մը այս աւանդութիւններուն մէջէն երեւան

պիտի բերէ պատմական «կորիզը» որ պատմական եղեշտքեան մը արդիւնքը կրնայ ըլլայ: Թաղմուտական պատմութիւնները ուղղակի Աւետարաններէն չեն քաղուած. ասիկա յայտնի է: Ուստի տրամաբանական է խորհիջ թէ այն կէտերը որ հասարակ են թէ՛ աւանդութեան եւ թէ Աւետարաններուն, առկուած են պատմական եղեշտքիւններէ կամ պատմական անձի մը կեանքէն: Թէ ինչո՞ւ Թաղմուտական պատմութիւնները այսչափ խելաթիւրուած վիճակով կը ներկայացուին, բացատրեցինք արդէն: Այսպէս Հրեայ Բարբիները կ'առնեն պատմական Յիսուսի պատմական կեանքին զէպքերը- Յեղաբանութիւն, Ծնունդ Եգիպտոս փախչիլը, Հրաշքները, Դատապարտուիլը, Խաչելութիւնը եւն. — կամ այդ զէպքերուն կորիզը և կը դարբնեն Անոնց շուրջ ծաղրելի զրոյցներ. ինչ կը ցուցնէ ասիկա. թէ Յիսուս անուկով մեկը ապրած ու գործած էր իրենց մէջ:

Զօրաւոր փաստ մը նոյնիսկ Հրեաներէն: ՔՄԱՆ ԴԱՐԵՐՈՒ ԵՐԿԱՐԱՄԵԱՅ ՇՐՁԱՆԻՆ ՄԷՁ ԵՒ Ո՛Ձ ՄԷԿ ՀՐԵԱՅ ՐԱԲԲԻ, ՀԵՂԻՆՍԿ ԿՍՄ ՈՒՍՈՒՅԻՉ, ԺԽՏԵՐ Է ՅԻՍՈՒՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՉ ՄԸ ԸԼԼԱԼԸ: Անոնք հակառակեր են Յիսուսի ու Քրիստոնէութեան, բայց ԵՐԲԵՔ չեն ըսած Քրիստոնէաներուն. «Իուք սուտ կը խօսիք, ձեր Յիսուսը առասպել մըն էր, Ան մեր կրկրին Պաղեստինի մէջ չէ ապրած եւն.» ընդհակառակը անոնք կ'ըսեն՝ «Ձեր Յիսուսը մեր սպասած ճշմարիտ Մեսիան չէր, ուստի մենք չենք հաւատար Անոր, մեր ուզած Մեսիան պիտի գայ», ու դեռ կ'ըսպասեն խելճերը: Ո՛չ, անոնք չեն ուրանար Յիսուսի աշխարհ եկած ըլլալը, ուստի չեն ըսեր թէ Յիսուս առասպելական է, ինչպէս կ'ըսէ քրեաներորդ զարու . . . իմաստութիւնը (?):



ՄԱՍՆ Ք.

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐԸ



Գ.Լ. Է.

«ՔՐԻՍՏՈՍ ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ԴԻՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐԴԻԻՒՆՔՆ ԷՐ»

Վերջին տասնեակ մը տարիներու ընթացքին մէջ «առասպելաբաններու» դպրոց մը սակզծ ուեցաւ, որուն հետեւողները հեթանոս աստուածութիւններու մէջ գոյութիւն ունեցող արեւ-աստուածներու և Աւետարաններու Քրիստոսի մէջտեղ նմանութեան եզրեր գտնելով, կը ջանան քննադատօրէն(?) ապացուցանել թէ՛ Քրիստոսի մատուցուած պաշտամունքը զարգացած կամ ծնունդ առած է հետզհետէ, աստիճանաբար, արեւ-աստուածներու Մէս-պաշտամունքներէն: Մասնաւորաբար այդ դպրոցին ներկայացուցիչներէն Բրոֆ. Տրիւս և Բոպըրթալն կ'ուզեն պատմական Յիսուսը Բաբելոնական արեւ-աստուածներու հետ նոյնացնել և այսպէս ուրանալ Անոր աշխարհ եկած ըլլալը: Թէ՛ ի՞նչ կերպով, բազդատութեան ի՞նչ եզրերով կը հասնին իրենց նպատակին և ի՞նչպէս կ'առասպելականացնեն զԱյն, այս մասին թող խօսի միզ նշանաւոր հեղինակութիւն մը՝ որուն գրութիւնը թարգմանաբար կը ղեննք հոս:

«Քրիստոսի Բաբելոնական արեւ-աստուածներու հետ նմանութիւնը հաստատելու համար հինգ գլխաւոր կէտեր յառաջ կը բերուին: Քրիստոս՝ Աւետարաններու մէջ կը ներկայացուի 1. «Աստուծոյ Որդի»: 2. «Յաղթող»: 3. «Հրաշագործ»: 4. «Յաղթող Մահու և Կենսատու» և 5. «Թա-

գաւոր թագաւորաց և Տէր Տէրանց»: Այս տեսութիւններու աղբիւրները ծագում առին, կ'ըսուի, այլեպէս տեղերէ, որ համար, Հրէականութենէ (Judaism), Հեղինականութենէ, Միթրայականութենէ, Յունա-Եգիպտական կրօնքէն, Զրադաշտականութենէ և նոյնիսկ Պուտտայականութենէ: Այս գանազան կրօնքներէն Քրիստոսի շուրջ կազմուող տեսութիւնները աստիճանաբար զարգացան և ուստի հետզհետէ՝ ժամանակի ընթացքէ մը վերջ կազմուեցաւ Քրիստոս առասպելը:

«Բաբելոնական դիցաբանութեան արեւ-աստուածներուն և Աւետարաններու Քրիստոսին մէջտեղ գտնուած նմանութեան եզրերը՝ ըստ Բրոֆ. Յիմմըրնի, հետեւեալներն են. 1. Քրիստոս կ'ընդունուի անդրաշխարհեան, երկնային և աստուածային էակ մը որ նոյն ատեն աշխարհի լալ Արարիչն է: 2. Քրիստոսի հրաշքով աշխարհ եկած ըլլալու պարագան, նոր ծնած Մանուկին տրուած պատիւը և կրած հալածանքը: 3. Այն գաղափարը թէ Քրիստոս աշխարհի Փրկիչն է և Անոր յարմար ժամանակի մէջ յայտնուիլը: 4. Այն տեսութիւնը թէ Քրիստոս իր Հօրմէն զրկուած է: 5. Քրիստոսի Մահուան և Զարգարանքի վարդապետական կողմը՝ անշատ պատմական իրողութիւններէ: 6. Այն գաղափարը թէ Քրիստոս զԺոխքը (Hades) իջնելով այնտեղի հոգիներուն ալ քարոզեց: 7. Քրիստոսի մեռելներէն Յարութիւն առնելը: 8. Քառասուն օր յետոյ Համբառնալը: 9. Քրիստոսի փառքին վարդապետութիւնը, այսինքն Աստուծոյ աջ կողմը նրստելով Հօրը հետ թագաւորելը: 10. Քրիստոսի վերստին Քալսեան վարդապետութիւնը և 11. Քրիստոսի իր Հարսին (եկեղեցիին) հետ ամուսնանալը նոր ժամանակի մը մէջ, նոր երկինքի ատեն և նոր երկրի վրայ:

«Մինչ Բրոֆ. Յիմմըրն այս գաղափարը մեծ ըզգուշութեամբ միայն կը յայտարարէ, անդին ուրիշ մը՝

Բրոֆ . Եէնսէն (Jensen), Մարպուրկ համալսարանէն, կը սնդէ թէ Քրիստոսի շուրջ դարբնուած ամբողջ պատմութիւնը Բաբելոնական զիցարանութենէն առնուած է : Իր գրքին բովանդակութիւնը, ինչպէս ինք անձամբ կը վկայէ, կը բաղկանայ միայն սա խօսքերէն թէ՛ Աւետարաններուն ամբողջ պատմութիւնը առասպելական պատմութիւններէ առնուած է և թէ չկայ բանաւոր որեւէ պատճառ մը խորհելու համար, որ անոնց մէջ պատմական Յիսուսի մը վրայ գրուած բաներ կան : Յիսուս առասպելը Իսրայէլական Կիլկէմիշ (Gilgamish) առասպել մըն է . իրբեւ Կիլկէմիշ առասպել, Յիսուս առասպելը ուրիշ շատ մը առասպելներու՝ մասնաւորաբար Հին Կրտակարանի առասպելներուն հետ քոյր-առասպել մը կը ներկայանայ : Իր եզրակացութեան մէջ Բրոֆ . Եէնսէն կը գրէ . «Նազովրեցի Յիսուս՝ որուն Աստուծոյ Որդի և Փրկիչ ըլլալուն Քրիստոնէութիւնը մօտաւորապէս կրկու հազար տարիներէ ի վեր կը հաւատայ և նկատուած է նոյնիսկ մեր ժամանակակից մեծագոյն յառաջադէմ գրագրողականներու շատերուն կողմէ իրբեւ բարի և մեծ մարդ մը, որ ապրեցաւ և մեռաւ գաղափարական և բարոյական կեանքի գերագոյն օրինակ մը հանդիսանալով, ահա այս Յիսուսը երկրի վրայ երբեք սպրած չէ և ո՛չ ալ մեռած է, վասնզի Անիկա Իսրայէլական Կիլկէմիշէ մը տարբերութիւն չունի : Մենք գերազանցապէս զարգացած դարու մը գաւառներս, մենք որ անցեալ նախապաշարու մեներու վրայ կը նայինք զգուշաւոր փոխառով մը, ուրեմն մենք մեր կանթոյրիկներուն և եկեղեցիներուն, ժողովարաններուն և դպրոցներուն, պալատներուն և հիւղակներուն մէջ Բաբելոնական աստուածութիւն մը կը պաշտենք» : Կար ժամանակ մը, որ ատեն Ս . գրքի համարներուն վրայ եղած քննադատական վերլուծումը յանդուգն էր, սակայն Բրոֆ . Եէնսէնի գիրքը յիմարական է :

Ահա՛ պատճառը թէ ինչո՞ւ ակնարկեցի իր գրքին : Կ'ուզեմ ցուցնել թէ Ս . Գրքին մէջ գտնուած Քրիստոնէական ամէն բաները արամաբանական եղանակով Բաբելոնական առասպելներու հետ բաղդատութեան դնելը՝ որուն կը հետեւին Գերման դպրոցի կարգ մը աշակերտները՝ անհեթեթ ենթադրութիւններու և արտաւանգ եզրակացութեանց կ'առաջնորդէ :

«ԹէՈՏՈՐ ԲՈՉԵՎԵԼԹԻ ԱՌԱՍՊԵԼԸ»

«Ներեցէք, որ Գերման դպրոցի առասպելաբաններու այս մեթոտը, այսինքն՝ Քրիստոս Բաբելոնական և այլ առասպելներու արեւ-աստուածներու հետ բաղդատելով արամաբանօրէն(?) զԱյն առասպելականացնելու մեթոտը հս ալ գործածեմ և ներկայ դարու մեծ դէմքերէն մէկը առասպելականացնեմ : Ենթադրեցէք թէ Լօրա Մաքօլէյի (Macaolay) հուշակաւոր Նոր Զելանտացին, որ հեղինակին կողմէ Լոնտոնի կամուրջին վրայ առանձնութեան մէջանդ կանգնած կը ներկայացուի, որուն վրայէն կ'ուզէ Ս . Պօղոսի աւերակները ուրուագծել, քանի մը դարեր վերջ Ամերիկայի ազգային գրատունը այցելելով կը գտնէ հոն գրականութեան մեծ դէպ մը՝ 20 բորդ դարու առաջին կէսին արդիւնքը : Եւ ահա մեր Նոր Զելանտացի դպրոցականը քիչ վերջ կը հրատարակէ իր առաջին ուսումնասիրական գիրքը, որուն մէջ կ'ըսէ թէ ամերիկական մեծ ազգին զուլիք, որ կ'ապրէր քսաներորդ դարու սկիզբը, կը կարծուէր թէ զօրաւոր և ազդեցիկ մարդ մըն էր թէոտոր Բոզելվելթ անունով, սակայն անիկա պատմական գէմք մը չէր՝ այլ Ամերիկեան ազգին մէջ տիրող միտումներուն և առասպելական գաղափարներուն անձնաւորումն էր : Ու այս դպրոցականը Բոզելվելթը առասպելական անձ մը ներկայացնելու համար իր փաստերը

առաջ կը բերէ ըսելով .

«Այս առասպելական հերոսը ընդհանրապէս կը ներկայացուի մեծ գաւազանով մը<sup>(1)</sup> : Այս առասպելական նմանութիւնը Յոյներէն և Հռովմայեցիներէն փոխ առնուած է և Արամազդի կայծր կը ներկայացնէ : Ան լայն եզերք ունեցող գլխարկով , և զոյգ մը ակնոցներով<sup>(2)</sup> կը պատկերացուի . այս առասպելական պատկերն ալ հին առասպելէ (Norse) մը փոխ առնուած է և հին Տւետոննէրու Ուոտընը (woden) կը ներկայացնէ , որ կը ջանայ թանձրը մառախուղի ամպերը ճեղքել՝ որոնք իր զուշը կը ծածկեն : Շատ մը ուրիշ պատկերներ առասպելական այս զւեցազնին ասորեր յատկութիւնները երեւան կը բերեն . ան մերթ կը ժպտի և մերթ իր ակառները կը ցուցնէ . ան ալ շատ շահեկան պատկեր մըն է և Ափրիկէի ազդեցութեան զօրութիւնը կը ցուցնէ՝ որմէ կ'երեւի թէ Ամերիկեան քաղաքակրթութիւնը մեծ քան առաւ : Այս առասպելական անձին շուրջ շատ մը հակասական պատմութիւններ կը պատմուին : Օր . համար , կ'ըսուի թէ մեծ որսորդ մըն էր . նաև վարպետ ձի հեծնող մը և ասով մէկտեղ շատ մը հմտալից զրքերու հեղինակ և զպրօցական : Ան կ'ապրէր լեռներու մէջ , դաշտերու վրայ և մեծ քաղաքի մը մէջ<sup>(2)</sup> : Կը հաստատուի թէ պատկերազմներու կ'առաջնորդէր և նոյն ատէն խաղաղութեան դատին ջերմ պաշտպան էր , անանկ որ երկու կողմի պատերազմիկ ազգեր անոր կը դիմէին հաշտութիւն գոյացնելու համար : Յայտնի է թէ այս ամեն ըսուածները Ամերիկայի քաղաքակրթութեան զարգացման զանազան աստիճանները կը ցուցնեն . այս ամէնը կ'անձնաւորուի Ռոզելիլթ-առասպելին մէջ : Այսպէս 20րդ դարու Ամերի-

(1) Նախագահ Րոզելիլթ մեծ գաւազան մը կը գործածէ , լայն եզերքով զիտարկ կը դնէ և ակնոցներով կը զարդարէ իր աչքերը :

(2) Րոզելիլթ կատարած ճամբորդութիւններուն կ'ակնարկուի —

կայցիք կը սիրէին որսորդութիւն ընել , ձի հեծնել և պատերազմիլ , սակայն երբ քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանին հասան՝ սկսան ուսանիլ , գրքեր հեղինակել և խաղաղութեամբ ապրիլ և այս ամէնը՝ որոնք տեղի ունեցան ժամանակի մը երկար ընթացքին մէջ , գործածուեցան այս ազգային հերոսին պատկերը ուրուագծելու համար : Տակաւին անոր կեանքին շուրջ եզոզ քանի մը առասպելական գիծերը չենք կրցած ստուգել . Օր . համար , անիկա յաճախ կը ներկայացուի արջի մը ձևով կամ արջերու ընկերակցութեան մէջ<sup>(1)</sup> : Ժամանակ մը այս «Թէտի» (Teddy) կոչուող արջերը գրեթէ ամէն տուներու մօտերը կային և կ'երեւի թէ անոնք նոյնիսկ աղայոց կողմէն ալ կը պաշտպանուէին : Տարակոյս չկայ թէ այս ալ աստեղագիտական գաղափարի մը ծնունդն ըլլալու է :

«Սակայն առասպելական այս պատմութիւնը ապացուցանող երկու պատճառներ կան . 1. Ամերիկեան ազգը 20րդ դարու սկիզբը մեծ դժուարութեամբ հաղիւ ազատուած էր վճուկութեան և կախարդութեան գաղափարէն : Բախտ բանալու , դիւթութեան , վճուկութեան և բժժանքներու հետքեր և ձեւեր կարելի է գտնել այդ ժամանակի օրաթերթերու սիւնալիներուն մէջ : Նոյն իսկ այս հերոսն ալ՝ Րոզելիլթ կը թուի թէ մոլի էր այս տեսակ կախարդական արհեստի , որ . համար , երբ ուզէր մէկը իր ազդեցութեան ենթարկել , անոր ձեռքէն կը բրուներ և քանի մը հմայիչ խօսքեր կ'ընէր : 2. Միւս վճուկան փաստը նոյնիսկ այս դիւցազնին անունն է . Թէտտոր անունը առնուած է ժողովուրդի մը լեզուէն , որ Եւրոպայի հարաւային մասը կը ներկայացնէ և կը նշանակէ «Աստուծոյ պարզեւ» : Իսկ Րոզելիլթ առնուած է ուրիշ ժողովուրդի մը լեզուէն , որ Եւրոպայի հիւսիսային մասը կը ներկայացնէ

(1) Րոզելիլթ շատ արջեր կ'որսայ :

և կը նշանակէ «Վարդենիներու դաշտեր» : Ռւրեմն կը հետեւի թէ այս դիւցազնը երկու Եւրոպական ազգերու միութիւնը կ'անձնաւորէ , որոնք նախնի Ամերիկեան քաղաքակրթութեան հիմը դրին կամ անոր ծնունդ տուին : Այդ ազգերն էին Հուսթիսիայի և Տիւստոնեան ցեղերը . ուստի 20րդ դարու Ամերիկացիք երեւակայեցին թէ մարդ մը՝ որ իր մէջ նկարագրի այս ամէն զարմանալի հանգամանքները կամ յատկանիշները ունէր , պէտք էր անհրաժեշտօրէն ըլլար հրաշալի «Պարգեւ Աստուծոյ» , և զիս անք խորհեցան թէ մէկը որ իրենց գաղափարականները կ'անձնաւորէր , իրապէս լեցուն իշխանութիւն ունէր , ուստի իրենց երկիրը պիտի փոխուէր «Վարդերու Դաշտի մը» :

«Այս բացատրութիւնները գիտական են : Անտարակոյս շատ մը մեքենայ քաղաքագէտ անձեր և թրջարներու գլխաւորներ , չափազանց պիտի ուրախանային ձերք ատու մը կանուխ լսելին թէ . . . Բողբոլիթ առասպելական դէմք մըն է : Սակայն անշուշտ ան առասպելական դէմք մը չէ : Անիկա ապրող իրականութիւն մը և մեր ազգային կեանքին մէջ սոսկալի ոյժ մըն է : Այսպէս ե նաև Յիսուս Քրիստոս» :

Այժմ նկատի առնենք թէ ինչեր կ'ըսեն առասպելաբանները Յիսուսի կեանքին յարակից պարագաները , դէմքերն ու դէպքերը առասպելականացնելու համար , նոյն առան տալով մեր պատասխանը : Հետեւեալ հատուածներուն ամբողջ պատրաստութիւնը կը պարտինք Տր. Թօրպըրնի :

1. ԵՐԵՔ ՄԱՐԻԱՄԱՆԵՐԸ  
Myrrha, Maia, և Maya

Մարիամ (Mary) անունին երեք տարբեր ձեւերը կան .  
1. Ատոնիսի (Adonis) մայրը Միրհա (Myrrha) : 2. Յոյ-

ներու պատգամաւոր աստուծոյն Հերմէսի (Hermes) մայրը Մաիա (Maia) և Յ. Կոյամայի կամ Պուտայի մայրը Մայա (Maya) : Այս երեք անունները , ինչպէս կը տեսնուի մտաւոր նմանաձայնութիւն մը ունին Յիսուսի մօր՝ Մարիամ անունին հետ : Ուրտի այ առակ լուարուք . առասպելաբանները այս բառերու նմանաձայնութենէն կ'եզրակացնեն (?) թէ . Ա. Mary , Myrrha , Maia , Maya . նոյն առասպելական անունն են կամ միեւնոյն առասպելական անունին տարբեր ձեւերն են . ուստի , Բ. Յիսուս , Ատոնիս , Հէրմէս և Պուտա անուններն այ առասպելական փրկիչ — աստուծոյ մը տարբեր ձեւերն են , որուն համար կ'ըսուի թէ բնութեան աստուածուհիէն (Մարիամէն) ծնած է :

Վերոգրիւիլէն աւելի ալանգակ ենթադրութիւն մը կ'ըլլայ . . . Եթէ այս չորս անուններուն մէջ իրական նրմանութիւն մը և կամ յարաբերութիւն մը կայ , այդ առաջային նոյնութիւնը խորունկ նշանակութիւն մը ունենալու է . օր . համար , պէտք է որ ստուգաբանական սերտ առնչութիւն մը գտնուի այդ անուններուն մէջ , որով նոյն առասպելական գաղափարը յառաջ դայ իւրաքանչիւր անունէն : Ուրեմն քննենք այս չորս անունները ստուգաբանօրէն և տեսնենք թէ իրապէս անոնց մէջ գաղափարի նոյնութիւն կայ :

Նախ առնենք Հրէական անունը՝ Մարիամ : Տր. Քուք կ'ըսէ . «Մարիամ բառը կը նշանակէ «աղփամբը»<sup>(1)</sup> և կամ «գէրը» , և վերջին նշանակութիւնը աւելի հաւանական ու բնական կը թուի , վասնզի զիրութիւնը՝ ըստ Սեմական գաղափարի , գեղեցկութեան հոմանիչ է» :

Առնենք Միրհա (Չմուռս) անունը : Ասիկա տարբեր մէկ ձեւն է Միւր՝ Արաբական բառին , որ ծառ մըն է և

(1) Թուոց ժի. 1-5ի պատմութենէն առնուած է այս գաղափարը : Մովսէսի քոյրը Մարիամ ազոտամբեցաւ եր եղբոր գէմ :

բալասանական հիւթ կ'արտադրէ : Միրհա , կը պատմէ առասպելը , անբնական մեղք մը գործեց , որուն վրայ հայրը հալածեց զինքը և սպաննել ուզեց : Սակայն Միրհա աստուածներուն դիմելով խնդրեց որ զինքը անտեսանելի ընեն : Աստուածները զթացին անոր վրայ և մըշտադալար մրտենիի փոխեցին : Ինը ամիս վերջ ծառը բացուեցաւ և անկէ ծնաւ . . . Ատօնիս (Adonis) :

Առններ այս անգամ Մաիա (Maia կամ Maias) անունը : Այս բառին առաջին վանկն է «Մա» . յայտնի է որ փոքր տղաք փոխանակ իրենց մօրը ամբողջ անունը «Մամա» բառը արտասանելու՝ կ'ըսեն ,միայն «Մա» : Ուրեմն Մաևա կը նշանակէ մէկը որ կը ծնի՝ կամ յառաջ կը բերէ) :

Վերջապէս , Մանսքրիա լեզուի մէջ ալ կայ «մա» (ma) մասնիկը , որ կը նշանակէ «մէկը որ յառաջ կը բերէ» , կամ «կ'արտադրէ» , և Մաիա կը նշանակ «պատրանք» և փոխաբերաբար կը գործածուի նրեթական տիեզերքը ցուցնելու համար :

Ինչպէս կը տեսնուի , այս չորս անունները Մարիամ , Միրհա , Մաիա և Մայա , «աստուածութիւն» չեն նշանակիր : «Յառաջ բերող» կամ «ծնանող» բառը բնականաբար կրնայ գործածուիլ ամէն կնոջ համար : Ուրեմն աստուգարանական վերլուծումը կ'ուզայ ապացուցանել անոնց տարբեր նշանակութիւնը . Արիական , Եւրոպական արմատ բառերուն մէջ ոեւէ առնչութիւն չկայ նշանակութեան տեսակետով : Հետեւաբար անոնք իրարմէ բոլորովին տարբեր անուններ են :

Առասպելաբաններու մէկ ուրիշ առարկութիւնը յառաջ բերենք : Անոնք կ'ըսեն թէ Աւետարաններու երեք Մարիամները առասպելական դէմքեր են , ծիսական ողբի մը մէջ դեր կատարող դէմքեր : Իրենց փափաք . յառաջ կը բերեն Ատօնիսի պարագան . կիներ ողբ ըրին Ատօնի-

սի վրայ և որովհետեւ , ըստ իրենց ենթադրութեան , Յիսուս և Ատօնիս նոյնն են , և կամ Յիսուս առասպելը Ատօնիս առասպելէն առնուած է , ասոր համար Աւետարանիչները ողբացող կիներ տեսարանի վրայ բերին Յիսուս առասպելին կատարեալ պատկերը ներկայացնելու համար : Պարտապարհաբանութիւն չէ՞ աս : Մեր ամէնուորեայ կեանքին մէջ չե՞նք տեսնուի թէ ամբողջ աշխարհի վրայ կիներն են միայն որ մեռնող սիրելիներու վրայ ողբ կ'ընեն : Եթէ առասպելական Ատօնիսի վրայ ողբացող առասպելական կիներ կը ներկայացուին և պատմական Յիսուսի վրայ ալ ողբ ընող բարեպաշտ կիներու կը հանգելիւնք Աւետարաններու մէջ , ասկէ կը հետեւի թէ այս վերջիններն ալ առասպելական են : Առաքինի կիներու Յիսուսի վրայ կատարած ողբն ու լացը բնական չէ՞ր միթէ , քանի որ Ան միջոց եղած էր իրենց բարոյական և հողեւոր կեանքի բարձրացումին համար :

Առասպելաբաններու ենթադրեալ և արտառոց հաշիւները հիմնովին ջախջախելու համար յառաջ կը բերենք հետագայ կէտերն եւս :

Ա. Մարիամ անունը Հրէից մէջ հասարակ բան մըն էր : Մովսէսի քոյրը Մարիամ կը կոչուէր : Նոր Կտակարանի մէջ եւս վեց տարբեր Մարիամներու անունները կը յիշուին ու դիտելի է որ անոնցմէ և ոչ մէկը ողբացողի դեր կը կատարէ :

Բ. Քրիստոնէական Ա. դարու մէջ տարեկան ողբ — ծէսերու սովորութեան հետքն իսկ չկար Քրիստոնեաներուն մէջ : Այդ մասին գրականութեան մէջ ոեւէ ակնարկութիւն չի գտնուիր : Ատօնիսի և Ոսիրիսի վրայ կատարուած ողբարարողութիւնները տարուէ տարի կը կրկնուէին , մինչդեռ կիներ Յիսուսի վրայ միայն մեկ անգամ ողբացին :

Գ. Ողբերու մէջ եղող տարբերութիւնը նկատելի է :



Հեթանոս ծէսերու մէջ տեղի ունեցող տարեկան ողբերը պարզապէս թատերական և մեքենական էին. կարելի է բաղդատութեան զննել զանոնք Յիսուսի վրայ լացող Երուսաղէմի աղջիկներուն ողբերուն հետ, որոնք իրական և ոչ թէ կեղծ վիշտի արդիւնք էին :

Դ. Ուրիշ տարբերութիւն մը. Ոսիրիսի յօշոտուած մարմինը պիտի գտնուէր Իսիսի (Isis) կողմէն, իսկ Ատոնիսինն ալ կրնարու միջոցաւ : Սակայն Յիսուսի մարմինը ո՛չ կրնար և ոչ ալ աշակերտները գտան գերեզմանին մէջ : Պէտք չէ մոռնալ ամէն պարագայի մէջ թէ Ոսիրիս և Ատոնիս առասպելներ են և հետեւարար առասպելական աստուածներու առասպելական մարմիններն են որ կը ինտուելին . . . :

Ե. Աւելին կայ. հեթանոսական և ոչ մէկ ծէս կամ պաշտամունք իր մէջ հոգեւոր ճարտիկնի ըմբռնուած ունէր : Հեթանոս աստուածը իր վերստին ծննդեամբ (ոչ թէ Յարութեամբ) ամէն տարի կ'երեւնար, ինչպէս կը կարծուէր իր առաջուայ նիւթական հանգամանքով, որ. համար, արեւը իր չրջանէն վերջ, բուսականութիւնը ծնունդ առնելէ վերջ, դարձեալ նոյն հանգամանքով կ'երեւին, մինչդեռ Յիսուսի Յարութեան մարմինը Քրիստոսնականներու կողմէն երբեք նիւթական չի նկատուիր : Հեթանոսական ծէսերը թէ իրենց ընդհանուր և թէ մասնաւոր գիծերուն մէջ բոլորովին տարբեր են Քրիստոսնութեան գաղափարականէն :

Եզրակացութիւնը պարզ է միտք ունեցողին համար :

## 2. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Առասպելաբան դպրոցի աշակերտները կ'ըսեն թէ աստուած-մանուկներու ծնունդը՝ իրենց մայրերու «ճամբորդութեան» միջոցին, հասարակ է ամէն ժամանակի և

ամէն կրօնքի. որ. համար, Հագար իր ճամբորդութեան ատեն ծնաւ Իսրայէլը. Վետով (Latona) Ապոլոնը (Apollo). Մայա՝ (Maya) Պուտտան (Buddha) եւ ընդ ընտրի Յիսուսի ծննդեան պատմութիւնն ալ առասպելական հեթանոս մանուկ-աստուածներու ծննդեան պատմութիւններու նըմանութեամբ յերիւրուած է : Ուրեմն տեսնենք թէ կա՞ն նմանութեան եղբեր :

Առնենք Վետովի և Ապոլոնի պարագան : Ի՞նչ կ'ըսէ առասպելը. Վետով Դիոսի (Zeus) տիկինն էր և Հերայի (Here) նախանձի առարկան, ուստի վերջինը հալածեց զայն յղութեան միջոցին : Վետով վերջապէս իր փախուստի միջոցին ապաւէն գտաւ կղզիի մը (Ortygia) վրայ ուր ծնաւ Ապոլոնը : Ըսէք, ինչքեմ, ասիկա ճամբորդութեան մը միջոցին տեղի ունեցող ծննդեան մը կը նմանի : Քրիշնայի պարագան թէև ճամբորդութիւն մը կ'ենթադրէ, սակայն վերջին բնագիւրներու մէջ պատմութեան ձևը տարբեր կերպով կը ներկայանայ, և միւս կողմէն՝ կան դպրոցականներ ալ, որոնք հակառակը կը պնդեն, այսինքն, կ'ըսեն թէ՝ Քրիշնայի ծննդեան պատմութիւնը Յիսուսի Ծննդեան պարագային հետեւողութեամբ հիւսուած է, քրիստոսնական թուականէն 200 տարի վերջ :

Սակայն առասպելաբանները միայն տաով չեն գոհանար : Անոնք Յիսուսի ծննդեան պարագային յարակից ուրիշ մանրամասնութիւններն անգամ իրենց երեւակայութեան թռիչ տալով, բաղդատութեան կը զնն առասպելական աստուածներու շուրջ յերիւրուած այլեւայլ պարագաներու հետ, որպէսզի ասով կարենան ապացուցանել Մնոր առասպելականութիւնը : Այդպէս որ. համար, կ'ըսուի թէ, «Բեթլեհէմի այրը անյիշատակ ժամանակներէ ի վեր պաշտամունքի առարկայ եղած էր Թամուզի պաշտամունքին (Cult of Tamuz) և և ոնիմոսի ատեն» :

հէլը

Այս ենթադրութիւնը սպառնացանել կարելի չէ: Շիտակ է թէ Հերոնիմոս ատանկ պաշտամունքի մը կ'ախարհկէ իր գրութեան մէջ, սակայն այս այրին «անյիշատակ ժամանակներէ ի վեր» պաշտամունքի առարկայ եղած ըլլալուն մասին ուէ ստոյգ տեղեկութիւն կը պակսի, վասնզի յայտնի է թէ Եգրասէ վերջ կռապաշտութիւնը վերցուեցաւ Յուդայի երկրէն:

Դարձեալ, առասպելաբանները կ'ըսեն թէ, մանուկ-Յիսուսի խանձարուչներու մէջ փաթթուած ըլլալու պարզան այ Անոր պատմութեան արեւ-աստուածներու հետեղութեամբ հիւսուած ըլլալը կ'ապացուցանէ: Այս ենթադրութիւնը ծրծաղելի չէ, քանի որ ծանօթ է արդէն, թէ ամէն երախայ, ըստ արեւելքի սովորութեան, խանձարուրի մէջ կը փաթթուի: Սակայն իրենց այս մտացածին հաշիւն այ ջուրը կ'իջնայ, երբոր նկատի առնենք թէ Բագոսի օրօրանը ուռիէ ձիւզերէ հիւսուած էր, ուստի անոր մէջ դրուած մանկիկ-աստուածը մտորի մէջ չէր որ կը պառկէր, մինչդեռ Յիսուս մանուկը պարզապէս մտորին մէջ դրուեցաւ:

Ուրիշ առարկութիւն մըն ալ ծննդեան թուականին դէմ է: Կ'ըսուի թէ Յիսուսի ծնունդը կը կատարուի անանկ օր մը, որ արեւ-աստուծոյ ծննդեան տարեդարձի տօնախմբութեան օրուան կը հանդիպի: Այս թուականը Դեկտ. 25էն անմիջապէս վերջը կուգայ՝ որ ատեն Զըմեռնային Արեւադարձը տեղի կ'ունենայ: Եւ ուստի, կ'ըսեն, ասիկա կը հաստատէ Յիսուս-առասպելին արեւ-աստուածներու հետ ունեցած նմանութիւնը

Յայտնի է թէ Աւետարանիչները Յիսուսի ծննդեան թուականին օրը չեն տար որոշ կերպով: Սակայն Ղուկասի Աւետարանին ծննդեան պատմութենէն կ'ենթադրուի թէ առաջինդարու Քրիստոնեաները Զմեռնային Արեւադարձի ժամանակները չէին կատարեր Անոր Ծննդեան Տօնը,

վասնզի, Զմեռնային Արեւադարձը Դեկտ. ամսոյ մէջ տեղի կ'ունենայ, որ ատեն Հրէաստան անձրեւային կ'ըլլայ, և ուստի ո՛չ հօտեր և ո՛չ ալ հովիւներ կրնային գիշերը քացօթեայ տեղ Բեթլեհէմի դաշտերուն մէջ մնալ: Ղուկ. Ա. 5 համարէն որ «Արիաթարի կարգ»ին վրայ կը խօսի, կարգ մը քննադատներ կը հետեւցնեն, թէ Ա. դարու Քրիստոնեաները Հոկտ. ամիսը կ'ընդունէին իրրեւ թուական Յիսուսի ծննդեան: Սակայն ասիկա ստոյգ չէ: Ա. դարէն վերջ Յիսուսի Ծննդեան տօնին օրը միշտ փոփոխութիւններու ենթարկուեցաւ, այնպէս որ Ծնունդի տօնը կը պատահէր Մարտ, Սեպտ. Դեկտ. Յունվ. և ուրիշ ամիսներու մէջ, վասնզի եկեղեցիներու կամ եկեղեցւոյ հայրերու կարծիքները իրարու հետ համաձայն չէին: Սակայն վերջապէս ՅՃԹ թուականէն յետոյ, Յուլիանոս Ա. Պապը՝ Ծննդեան տօնը Դեկտ. 25ին որոշեց ատարել, որուն պաշտօնապէս հետեւեցան Քրիստոնեայ բոլոր եկեղեցիները: Ուրեմն հարցումը սա է. Ինչո՞ւ Դեկտեմբեր 25ին որոշեցին: Պատճառը սա է, որովհետեւ Կայսրութեան մէջ և ամէն կողմեր այդ օրը արեւ-աստուածներու նուիրուած էր, և Յիսուսի Ծննդեան տօնն ալ որոշեցին որ այդ օրը ըլլայ. և ասիկա ո՛չ թէ անոր համար որ Յիսուս ալ արեւ-աստուած առասպել մըն էր, այլ ակնու հաւես, որ այս փոյտխորքեանք հեքսակուսակաւ արեւ-աստուածներու նուիրակալ սեպուած այդ օրը արագորձեիկն, նուիրագորձեիկն Յիսուսի Ծննդեան solis Ս. յիշատակովը, եւ այս կերպով հեքսակուսակաւ Քրիստոնեաներու դարձը դիւրացուեր: Այս գրութիւնը սովորական կանոն եղաւ բոլոր Քրիստոնեայ հայրերուն քով, օրհամար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Վարդապետի հեթանոսական տօնը Այլակերպութեան տօնին հետ միացուց. նաև ասարդի տօնին յաջորդեց Աստուածածնի Վերափոխումը եւ ին: Բացարձակապէս յայտնի և ստոյգ է որ Ա. դարու

մէջ Յիսուսի Ծննդեան օրը երբեք չէր նոյնացուեր արեւ-  
աստուծոյ Ծննդեան օրուան հետ, որ Չմեռնային-Արեւա-  
դարձին կը հետեւէր անմիջապէս:

Վերջացնելու համար այս հատուածը, պէտք է յի-  
շենք հովիւներուն պարագան ալ:

Կ'ըսուի թէ հովիւներու պատմութիւնը Քրիշնայի  
առասպելէն առնուած է. սակայն այս ենթադրութիւնը  
բոլորովին անտեղի է. վասնզի Քրիշնայի շուրջ հիւսուած  
առասպելը Քրիստոնէական թուականէն վերջ կատարե-  
լագործուած է: Ըստ Ուէպըր (Weber) և Լասսէնի (Lassen),  
Քրիստոնէութեան կանխագոյն թուականին մէջ երեք Պը-  
րահմաններ Արեւելքի մէջ գտնուող Քրիստոնեայ հասա-  
բակութեան մը այցելութիւն տուին և երբ իրենց երկիրը  
վերագարձան, Քրիշնայի արարողութիւնը աւելի ևս կա-  
տարեւագործեցին. ուստի այս պարագային աւելի արա-  
մարանական չէ՞ ենթադրել թէ Քրիշնա-առասպելի մէջ  
գտնուող հովիւներու պատմութիւնը փոխ առնուած է  
պատմական Յիսուսին այցելութիւն տուող հովիւներու  
պարագայէն: Տարբերութեան ուշագրաւ կէտ մը անա-  
երկու պատմութեանց մէջտեղ. Յիսուս մանուկին ծնած  
ատենը հովիւներն են որ կ'այցելին անձամբ, մինչդեռ  
Քրիշնայի պարագային մէջ հայրն է որ իր զաւակը կը  
տանի անոնցմէ մէկուն:

Հերմէսի և Ապողոնի ծննդեան պարագաներուն մէջ  
ալ հովիւներ տեսարանի վրայ կ'ուզան. ասիկա շատ բը-  
նական է, քանի որ արեւելքի ժողովուրդը միշտ խաչ-  
նարածութեամբ զբաղած է ու կըզբաղի, և հետեւաբար,  
ամէն նշանաւոր ծննդեան պարագայի մէջ, հովիւները  
ուղղակի կամ անուղղակի դեր մը կ'ունենան. սակայն  
այս պարագան միթէ կ'ապացուցանէ՞ թէ անոնք՝ այ-  
սինքն մանկիկ-աստուածները մէկ ազբուրէ միայն ծը-  
նունդ առած են. պատմական Յիսուսը ի՞նչ յարաբերու-

թիւն կրնայ ունենալ այս արեւ-աստուածներուն հետ, ո-  
րոնք զուտ առասպելներ են: Նոյն դէպքերը կրնան պա-  
տահիլ գործնական կեանքի մէջ ալ, և այս շատ բնական  
է, վասնզի ամէնքս ալ միեւնոյն ցեղէն ենք, նոյն միջա-  
վայրի ազդեցութեան տակ ենք, նոյն արեւի տակ կ'ապ-  
րինք: Նկատի առէք անգամ մը Յիսուսի ծննդեան պատ-  
մութիւնը. որչա՛փ բնական ու տարզ է, արեւ-աստու-  
ծոյ ծնունդը թէ՛ նպատակի և թէ՛ պատմականերայի կող-  
մէ Յիսուսինէն բոլորովին կը տարբերի: Աւելի բացատը-  
րութեան հարկ չկայ:

3. Մ Կ Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Տեսնենք թէ ի՞նչ կ'ըսէ Բրոֆ. Տրիւս այս մասին.  
«Երբայեցերէն լեզուի մէջ «հոգի» (ruarch) բառը իգա-  
կան սեռի կը պատկանի: Ասոր իբր հետեւանք (Naasenes)  
Նասսէնիները և կանխագոյն դարու Քրիստոնեաները Ս.  
Հոգին Յիսուսի մայրը կը նկատէին: Իրենց տեսութեան  
համաձայն Յիսուս Աստուծոյ Որդի եղաւ մկրտուած ժա-  
մանակը՝ որ ատեն Ս. Հոգին վրան իջաւ: Աւետարան-  
ներու պատմութիւնը կ'ըսէ թէ, երբ Յիսուս Յորդանան  
գետին մէջ կը մկրտուէր, վերէն ձայն մը սա խօսքերը  
ըսաւ. «Դուն ես իմ սիրելի որդիս որուն հաճեցայ»: Սա-  
կայն ուրիշ ձևաազիր մը, գործ չորրորդ դարու, այս հա-  
մարը Բ. Սաղմոս Նրդ համարին պէս կը ներկայացնէ.  
«Դուն ես իմ սիրելի որդիս, այսօր ես քեզ ծնայ»: Յի-  
սուսի Աստուծոյ ծնած ըլլալը երկինքէն Ս. Հոգին ա-  
զաւակերպ Սնոր վրայ իջնելու ձևովը կը ներկայացուի,  
վասնզի ասիկա (=աղանչին) սուրբ թուշուն կը սեպուէր,  
խորհրդանշան մերձաւոր Ասիայի Մայր-աստուածուհիին»:

Հոգի բառը Երբայեցերէնի մէջ իգական ըլլալուն  
համար, չիտակ է թէ Նասսէնիները Ս. Հոգին Աստուծոյ

իզական լրացուցիչ մէկ մասը կը նկատէին և այս կերպով զուցէ կը ջանային Եբրայեցիներու և Քրիստոնեաներու Աստուծոյ մասին ունեցած գաղափարները հիթանոններու և Գնոստիկեան աղանդաւորներու՝ որոնք միշտ Աստուածային Երկուութիւնը (Dualism) կ'ընդունէին, գաղափարին մօտեցնել: Սակայն կանխազոյն դարու Քրիստոնեաները բացառութիւն կը կազմեն. անոնք երբեք Ս. Հոգին Յիսուսի մայրը չեն նկատեր: Կը տեսնենք սրտակի կերպով, թէ աւետարանիչները մարդկային մայր մը՝ Մարիամը, կը ներկայացնեն մայր՝ Յիսուսի: Ուստի այդ գաղափարը՝ թէ Ս. Հոգին Յիսուսի մայրն էր, Գրնոստիկեան աղանդաւորներու յատուկ էր, որոնք Էոն (Aeon) Քրիստոսին կը հաւատային:

Առաջին երեք Համայնացոյց Աւետարաններուն Յիսուսի Այլակերպութեան և Մկրտութեան մասին արտաստուած գաղափարները կը ցուցնեն թէ անոնք աստուածայի հոգածութեան մասնաւոր ապահովիչ ապացոյցներ էին մէկ կողմէն Յիսուսի համար, որ Անոր Հայրական խնամքին և օգնութեանը պէտք ունէր թէ իր կեանքին մէջ և թէ մահուան ատեն, և միւս կողմէն յայտարար նշան մըն էր մարդկութեան ուղղուած, ցուցնելու համար թէ Անոր աստուածային հեղինակութիւն և զօրութիւն շնորհուած էր:

Գալով Դուկասու Աւետարանին մէկ ձևազրի դոյութեանը, որուն մէջ քիչ մը տարբեր կերպով գրուած է Յիսուսի Մկրտութեան ատեն երկինքէն եկած ձայնը՝ «Այսօր ես քեզ ճնայ», հաւանական է որ Էպիոնեան (Ebionite) և Գնոստիկեան աղանդաւորներու գործն է, քանի որ անոնք կը հաւատային թէ Յիսուս իր Մկրտութեան ժամանակ Աստուծոյ Որդի եղաւ, իսկ անկէ առաջ հասարակ մարդ մըն էր: Այս տեսութիւնը կ'ընդունին Եկեղեցւոյ նախկին Հայրերէն՝ Յուստինոս, Կղեմէս Աղեք-

սանդրացին և դեռ ուրիշներ:

Մէկ երկու բացատրութիւն տանք աղանիի մասին: Թէև այս թուշուր Փոքր Ասիոյ մէջ մայր-աստուածուհի Աստարդէն (Astart) կը նկատուէր, սակայն Հրեաները անոր աստուածային յատկութիւն չէին վերագրեր, քանի որ զայն Աստուծոյ սղջակէզ կը մատուցանէին և կը յանդիմանէին Սամարացիները աղանին պաշտելուն համար, որոնց չաստուծայն դէմքը աղանիի կերպարանքով կը ներկայացուէր: Աղանին Հին Կտակարանին մէջ կը ներկայացուի իբրև խորհրդանշան՝ Անմեղութեան, Սրբութեան և Մաքրութեան, կէս-նուիրական կը նկատուէր թէև, սակայն, աստուածային և անձնաւորեալ յատկութիւն չէր վերագրուեր անոր:

Այս բացատրութիւններէն կը հետեւի թէ առասպելաբանները պարզապէս երեւակայութեան լաբիւրինթոսին մէջ կը մուրրին:

4. ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի փորձութեան պատմութիւնը՝ որուն մարդկային փորձառութեան համաձայն ըլլալը անփոփոխօրէն կ'ապացուցուի, արդէն ծանօթ է բոլոր քրիստոնեաներուն: Սակայն առասպելաբան դպրոցի աշակերտները Յիսուսը անպատճառ առասպելականացնելու ահաւոր ակտէն կարծես վարակուած ըլլալով, Յիսուսի փորձութեան և Պուտոյի փորձութեան պատմութիւններուն մէջ ալ մօտաւոր նմանութիւններ կը գտնեն կ'ըսեն թէ Յիսուսի կեանքին շուրջ զարբնուած այս պատմութիւնն ալ Պուտոյականութիւնէն առնուած է:

Սակայն երբ նկատի առնենք երկու պատմութիւններուն գրական ձևը և փորձութիւններու շարժառիթը, անոնց մէջ գտնուած մեծ ու ակնբեր տարբերութիւնը

բացայայտորէն երեւան կուգայ: Պուտտայական փորձութեան մէջ ո՛չ վսեմութիւն կայ և ոչ ալ բնականութիւն: Յիսուս կը փորձուի պարզապէս հետեւեալ երեք պատճառներով. Ա. Հրա՛շք գործելու էր թէ Աստուծոյ կամքը կատարելու էր: Բ. Երկրաւոր թագաւոր կամ Հրեաներուն ուղած և սպասած Մեսիա՛ն ըլլալու էր թէ երկնաւոր Մեսիա կամ հոգեւոր թագաւոր և Գ. Ինք իրապէս պիտի կրնա՞ր ի գլուխ հանել այն գործը՝ որուն համար կանչուած ըլլալուն գիտակցութիւնը ունէր: Պուտտայի փորձութեան պատմութիւնը կ'ամփոփէ՞ իր մէջ այս հոգեւոր յատկութիւնները երբե՛ք: Հասկա եթէ հաշուի տանենք կարգ մը բանիմաց և հաշակաւոր դպրոցականներու ենթադրութիւնը, այսինքն Պուտտայի փորձութեան պատմութեանը քրիստոնէական թուականէն վերջ կատարելագործուած ըլլա՞լը. այս պարագային իրաւունքի նօտարը որո՞ւ կողմ կը հակի, մե՞ր թէ առասպելաբաններուն . . . :

Ոմանք ալ Յիսուսի փորձութեան և Հոովմայեցոց Արամազդի փորձութեան պատմութեանը մէջ նմանութիւններ տեսնել կ'ուզեն: Մտիկ ըրէք թէ Արամազդ ինչպէս կը փորձուի: Բէն (սատանան) Արամազդը լերան մը գագաթը կը հանէ և հոն բազին մը կառուցանելով զո՞ կը մատուցանէ: Այս առասպելական պատմութեան մէջ Բէն մարդկային ստոր և անասնական կիրքերը կը ներկայացնէ և բոլորովին տարբեր է սատանային: Դարձեալ Արամազդ չի փորձուիր, մինչդեռ Յիսուս կը փորձուի: Ուրիշ տարբերութիւն մը եւս. Արամազդ այս պատմութեան մէջ իբր աստուած կը ներկայացուի, մինչդեռ Յիսուս իբր մարդ կը փորձուի: Երկուքին մէջ ալ փորձութեան պատմութիւն մը կայ, սակայն որչա՞փ կը տարբերին անոնք իրարմէ:

Առասպելաբաններու այս բոլոր անտրամաբանական

ենթադրութիւնները միակողմանի տեսութեան արդիւնք չե՞ն միթէ . . . :

5. ՏՄՍՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Լսեցէ՛ք առասպելաբաններուն խորհրդածութիւնները (?) 12 թիւի մասին և իրենց հանած եզրակացութիւնը:

Կ'ըսեն թէ 12ը նուիրագործուած թիւ մըն էր Իսրայէլի և հին ազգերու մէջ: Յակոբ 12 որդի ունէր: 12 որդիները 12 ցեղեր կը ներկայացնէին: Յետո՛ւ խոստացեալ Քանանը մտնելու ատեն 12 ներկայացուցիչներ ունէր: Ահարոնին 12 քահանաներ կ'ընկերանային: Վերջապէս արեւը իր տարեկան շրջանին մէջ 12 կենդանակերպիներու մէջէն կ'անցնի: Եզրակացութիւնը՝ քանի որ 12 թիւը նուիրագործուած է, կ'ըսեն, ուստի Յիսուսի 12 աշակերաններ ունենալը, Յետո՛ւի առասպելական պատմութեան (նկատելի է որ Յետուն ալ պատմական անձ չեն ընդունիր) մէջ, 12 օգնականներուն օրինակէն տուած է: Յետո՛ւ (արեւ-աստուած) 12 օգնականներ ունէր, ուրեմն Յիսուս ալ (արեւ-աստուած (?) 12 օգնականներ ունենալու էր: Բայց այս ենթադրական հաշիւով չեն զոհանար ու կ'ըսեն. 12 աշակերտները որոնք Ընթրիքի Սեղանը շրջապատած կը ներկայացունին Աւետարանի տում-պատմութեան մէջ, պարզապէս Ահարոն քահանային ընկերացող 12 առասպելական քահանաներու՝ (կը տեսնէ՞ք անոնք Հին Կտակարանի անձերն ու դէպքերն ալ կ'առասպելականացնեն) որոնք Քահանայապետին հետ Բաղարջակերաց սեղանին շուրջ կը բազմէին, օրինակէն անուամբ են, ուստի առասպելական են և դեռ աւելի առաջ իրթալով կ'ըսեն թէ, Յիսուսի իր աշակերտներով միասին Գալիլէայի մէջ պտտիլը՝ արեւին 12 Զօգիակոմներու կամ կենդանակեր-

պերու մէջէն կատարած տարեկան անցքը կը ցուցնէ . . . :  
Ու իմաստութիւնը արդարացաւ իր խորթ զաւակ-  
ներէն . . . :

Տանք մեր պատասխանը ամփոփ կերպով :

Ա. Քանի որ Յիսուս նախ Իսրայէլի համար եկածէր  
աշխարհ, ինչպէս Ինք ըսաւ, բնականաբար 12 աշակերտ-  
ներ ընտրելու էր, համաձայն Իսրայէլի 12 ցեղերուն՝ ու-  
րոնցմէ երկուքը կորսուած էին : 12 թիւը ոչ թէ առաս-  
պելական էր՝ այլ պատմական : Կարելի՞ է ժխտել Իսրա-  
յէլի 12 ցեղերուն գոյութիւնը :

Բ. Արեւելքի բոլոր նախկին մեծ ուսուցիչները, ա-  
ռանց բացառութեան, ունեցան իրենց աշակերտները . օր .  
համար, Պղատոն և Պուտոս . Յիսուս ալ իբրև Արեւել-  
եան Ուսուցիչ, ունեցաւ իր աշակերտները, ասիկա բնա-  
կան բան մը չէր : Ուսուցիչ մը իր աշակերտները ունե-  
նայու էր, զանոնք հրահանգելու և զաստիարակելու հա-  
մար :

Գ. Առասպելաբաններու նոյն խնդիրն Կտակարանի  
անձերն ու զէմքերը առասպելականացնելը հիւանդ դա-  
տողութեան արդիւնք է պարզապէս : Ի՞նչ փաստեր ու-  
նին . . . : Ոչինչ, բացի իրենց քմածին երեւակայութենէն :  
Որովհետև Յիսուս 12 աշակերտներով Գալիլիայի մէջ կը  
պտտի եղեր, ասիկա կը խորհրդանշէ արեւին 12 Զօդի-  
ակոսներու մէջէն կատարած անցքը . ըսելիք կա՞յ այս  
տրամաբանութեան (?) : Երեւակայութիւնն երեւակայու-  
թեանց . . . : Շատ դիւրին և կարելի է այս կերպով առաս-  
պելականացնել ա՛մէն բան, ուրանալ ամէն ճշմարտութիւն  
և առասպելաբանները գուցէ վաղը միւս օր կլլեն և ա-  
ռասպելականացնեն . . . իրենց անձերն ալ :

### 6. ԵՐՈՒՍՍԱՂԷՄ ՄՈՒՏՔԸ

Կը պատմուի թէ Բագոս (Dionysos) երբ յիմարացած  
վիճակի մէջ Հերայէն կը հայածուէր, իր փախուստի միջո-  
ցին երկու էջերու հանդիպեցաւ և անոնց վրայ հեծնելով  
ճահիճէ մը անցաւ յետոյ տաճար մը (Dobana), ժամանե-  
լէ վերջ զգաստացաւ : Կ'ենթադրուի թէ այս պատմու-  
թիւնը կը խորհրդանշէ արեւին անցքը և Զէնիթին վրայ  
բարձրանալը, որ տեղի կ'ունենայ Յունիս ամսոյ մէջ :

Ուստի, պատրաստ եղէք այս անգամ լսելու առաս-  
պելաբաններու ուրիշ ենթադրական մէկ հաշիւն ալ . քա-  
նի որ Աւետարաններու մէջ կ'ըսուի թէ Յիսուս երկու  
էջերու վրայ նստած Երուսաղէմ մտաւ, ասիկա պարզա-  
պէս(?) կը ներկայացնէ արեւ-աստուած Յիսուսին Իր զօ-  
րութեան և փառքի գագաթնակէտը հասնելը : Աւելի որոշ  
կերպով լուսաբանենք այս կէտը .

Զօդիակոսի կամ Կենդանակերպի նշանները և մոդո-  
րակային Համաստեղութիւնները, որոնց մէջէն արեւին  
տարեկան երեւութական անցքը տեղի կ'ունենայ, անանկ  
կը հանդիպի որ իրարու զուգընթաց կ'ուզան : Եթէ ըն-  
դունինք այս բներեւոյթը իբր «Գիշերահաւասարի կան-  
խում», արեւը ամէն յաջորդ տարի մը կը մտնէ իր (Գար-  
նան գիշերահաւասարի ատեն) երեւութական ճամբան աստ-  
ղերու մէջէն՝ քիչ մը տարբեր կէտի վրայէն : Նախապէս  
երբ պատմութիւնը դեռ նոր կ'ըսկսէր, արեւին գարնան  
մէջ (Մարտ 21) հասարակածը անցած ճամբան կը նշա-  
նակուէր Յուլ Համաստեղութենէն : Այս հաշիւին համաձայն  
Յիսուսի ժամանակ, արեւը մտած էր Սոյ համաստեղու-  
թեան մէջ և Զօդիակեան Սեցգետինի նշանը կը ցուցնէր ա-  
րեւին զիրքը ամառնային արեւադարձի ատեն, Յունիս 21  
ին : Այն խումբ մը աստղերէն, որոնք Սեցգետին Համաս-  
տեղութիւնը կը կազմեն, Յոյներուն համար երկուքը նըշա-

նուսուր էին — «երկու» : Ասոր համար Ամառնային Արեւա-  
դարձի ժամանակ՝ որ ատեն արեւը իր բարձրագոյն դիր-  
քին վրայ կը գտնուի, փոխաբերաբար կրնայ բուռի թէ՛  
Բագոս «երկու էշեր»ու վրայ հեծած է, և այս բներեւոյթը  
կրնայ վերագրուիլ ամառնային խնջոյքի մը՝ որ նմանա-  
պէս կրնայ յայտնել երկնային պատգամ մը փոխաբերա-  
կան և խորհրդանշական բացատրութեամբ : Հետեւաբար  
(?), կ'ըսեն աւետարանները, արեւ-աստուած Յիսուսի  
Երուսաղէմ մուտքը կը ցուցնէ արեւին փառքը կամ իր  
զենիթին վրայ բարձրանալը և յն . . . :

Սակայն այս աստղագիտական բներեւոյթը ինչ տե-  
սակէտով կը համաձայնի Յիսուսի Երուսաղէմ մուտքին  
հետ : Անշուշտ կրնայ բուռի թէ Յիսուս ալ իր ժողովրդա-  
կանութեան և ազգեցութեան զենիթը բարձրացաւ այդ  
ատեն : Բայց ժամանակի խնդիրը . Յիսուսի յաղթական  
մուտքն Երուսաղէմ, պատահեցաւ Պատեքի տօնէն ճիշդ ա-  
ռաջ՝ այսինքն երբ Գարնանային Արեւադարձ էր ո՛չ թէ  
Ամառնային : Երե Յիսուսի մուտքն Երուսաղէմ, իրապէս  
արեգակնային բներեւոյթ մը կը ներկայացնէ՝ պէտք էր որ  
գիշերանաւասարի աստեւ պատահէր : Կատարելապէս յայտնի  
է թէ՛ Աւետարանիչները ասով չեն պատմեր արեւին Զօդի-  
ակոսի նշաններուն մէջ անցնելու բներեւոյթը՝ պատկերալից  
և փոխաբերական պատմութեան մը տարազով, այլ կ'ակ-  
նարկեն իրական և պատմական դէպքի մը . վստահի այդ  
պարագային պէտք էր որ անոնք դէպքին Յիսուսի մասէն  
մէկ տարի առաջ ամառնային-արեւադարձի ատեն պատա-  
հած ըլլալը նկարագրէին :

Տարբերութեան ուրիշ կէտ մը ևս : Յիսուս Երուսա-  
ղէմ մտաւ ո՛չ թէ երկու՝ այլ մէկ էշի վրայ նստած : Ա-  
սիկա հաստատելու համար նկատի առնենք Ս . Գրքի մէկ  
քանի համարները : Զաք . մարգարէութեան Ժ . Գլ . Գրդ  
համարը այսպէս կ'ըսէ . «Ահա՛ քու թագաւորդ կ'ուզայ

իշու վրայ հեծած և (նոյն իսկ \*) իշու ձապի աւանակի վրայ» :  
Երրայեցերէն բնագիրը չըսեր «իշու վրայ և իշու ձագի» այլ  
«իշու վրայ՝ նոյն իսկ իշու ձագի» վրայ : Սակայն կատար-  
ուած թարգմանութիւնները փոխանակ «նոյն իսկ»ի «և»  
կ'ըսեն . ահա ա՛սկէ յառաջ կ'ուզայ բուն շփոթութիւնը :  
Այժմ նկատի առնենք Աւետարաններու պատմութիւնը :  
(Մարկ . ԺԱ . 7 ի մէջ կը կարդանք «Եւ աւանակը Յի-  
ուսի բերին ու անոր վրայ իրենց հանդերձները դրին ու  
նստաւ անոր վրայ :» Ինչպէս կը տեսնուի միայն մեկ էշ  
կը բերուի) :

Ղուկաս քիչ մը տարբեր ձեւով կ'ըսէ . «Եւ զանկա  
Յիսուսի բերին և իրենց հանդերձները աւանակին վրա  
ձգելով Յիսուսը հեծցուցին» . (ԺԹ . 35) : Ուրեմն Էսա  
Ղուկասի ալ, միայն մեկ էշ կը բերուի :

Իսկ Յովհաննէս աւետարանիչ ա՛ւելի պարզ և որոշ  
կերպով կ'ըսէ . «Եւ Յիսուս աւանակ մը գտնելով անոր  
վրայ նստաւ, ինչպէս որ գրուած է՝

«Մի՛ վախնար ո՛վ Սիօնի աղջիկ,  
Ահա՛ քու թագաւորդ կ'ուզայ  
Իշու աւանակի վրայ նստած» :

Ուրեմն երեք աւետարանիչները կատարելապէս հաս-  
կցած էին Զաքարիայի մարգարէութեան նշանակութիւնը :  
Մատթէոս միայն բացառաբար կ'ըսէ . «Էշ մը և աւանակ  
մը» որովհետեւ ինք փոխանակ մարգարէութեան խօսքին  
մէջ գտնուող շաղկապը «նոյն իսկ» կարդալու «և» կար-  
գաց, որով յառաջ եկաւ իր պատմութեան քիչ մը տար-  
բերութիւնը :

Հետեւաբար Յիսուսի յաղթական մուտքը Երուսա-  
ղէմ, պատմական դէպք մըն է և ո՛չ թէ աստղագիտական  
բներեւոյթի մը նկարագրութիւնը : Պատմութիւնը պարզ  
և բնական է : Արեւելքի մէջ իշու վրայ նստիլը սովորա-  
կան է և իշխանավայել : Յիսուս ժողովուրդէն կը սիրուէր ,

(\*) Բուն բնագիրը կ'ըսէ «նոյն իսկ» . թէեւ հայերէնի մէջ չկայ

քանի որ հասարակ ժողովուրդին վարդապետան էր, ո՛ւստի իր մուսքը Երուսաղէմ, կատարեց իշու վրայ նստած. ասիկա՝ բնական բան չէր:

7. ԽՍՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Տեսնենք թէ ի՞նչ կ'ըսեն Բոսորթիսըն և Տրիւս, առապելաբան դպրոցի երկու մեծագոյն ներկայացուցիչները, այս նիւթին վրայ:

Առաջինը կ'ըսէ թէ, Յիսուսի Խաչելութեան պատմութեան մէջ Թալմուտական Յիսուսի մը՝ որ Պասեքի իրիկուն մը Պննտացի Պիլատոսի ժամանակէն մէկ դար կամ աւելի առաջ մահուան դատապարտուեցաւ, հետքը կը նշմարուի և յետոյ կը շարունակէ. «Պրոմէթէոս (Prometheus) և Հերակլէս (Herakles) հեթանոսական երկու գրիւտար փրկիչ-աստուածներն էին, որոնք ծաղրական թագով կը ներկայացուէին: Ըստ Աթենիւսի՝ (Atheneus) երրորդ կամ չորրորդ դարու հեղինակ մը, Արամաղդ դատապարտեց Պրոմէթէոսը, որ ի յիշատակ իր գերութեանէ ազատուելուն, ողբիէ պսակ և երկաթէ մատանի մը կրէ... ուստի Պրոմէթէոսի հետեւողները փուշէ պսակ կը կրէին»:

«Դարձեալ, Հերակլէս Պրոմէթէոսը տանջող արծիւը սպաննելէ վերջ, Հեսթիանիսի խնձորները վնասուելու ելաւ. սակայն Պրոմէթէոսի ազդարարութեան վրայ, Աթլասը (Atlas) զրկեց զանոնք վնասուելու համար և անոր բացակայութեան ատեն, ինք անոր պաշտօնը ստանձնեց: Յետոյ կրկին Պրոմէթէոսի թեշաղրութեան վրայ, Երակլէս Աթլասէն վաշրկեանական ազատութիւն մը խնդրեց և առաջին օր երկինքը իր վրայ կրէ ու ինք իրեն համար ուռիէ պսակ մը հիւսեց և այսպէս Աթլաս դատապարտուեցաւ միշտ երկինքը իր վրայ կրելու, մինչդեռ ինք սը-

ասիլ արժանացաւ»:

Մր. Բոսորթիսըն Յիսուսի Խաչելութիւնը իրական չի նկատեր. կ'ըսէ թէ, արդէն քրիստոնէական Ա. դարէն շատ առաջ խաչը իբր խորհրդանշան կը գործածուէր. օր. համար, կ'ըսէ թէ՝ Մեքսիքոյի մէջ «նուիրական ծառը» խաչի վերածուած էր, որուն վրայ փրկիչ-աստուծոյ մը ուռհայտէ շինուած մարմինը զետեղելէ վերջ, վար կ'առնէին և ծիսական պաշտամունքէ վերջ կ'ուտէին:

Իսկ Յիսուսի թաղման և Յարութեան մասին կ'ըսէ. «Ամէն սարակոյտէ վեր է թէ ասոնք ամէն ինչ գրութիւններու մէջ հասարակ եղող առաւօտեան ծէսերու կատարելագործեալ ձեւերն են» և կը շարունակէ. «Ըսպաննուած Ոսիրիսի մարմինը ողբերով վնասուցին և երբ պատրաստուած պատկերը դանուեցաւ, կ'երեւի թէ տակաւին անոր վրայ ոլբ լրին, և յետոյ ուրախութիւն յայտնեցին: Արարողութեան կարգը ինչ որ ալ եղած ըլլայ, ասիկա որոշ է թէ սպաննուած Ոսիրիսի պատկերին թաղումը անոր մէկ կարեւոր մասը կը կազմէր: Այս ամէնէն զատ, յայտնի է թէ Միթհրայի (Mithra) պաշտամունքը (cult) Աւեստարանին առասպելի հիմը կը կազմէ: Այդ ծէս-պաշտամունքի ատեն ժայռէ աստուծոյ քարէ պատկերը դազաղի մը վրայ կը դրուէր և յ տոյ ոլբ կը կատարուէր. ասկէ վերջ զայն քարէ գերեզմանի մէջ կը զետեղէին և վրան եկեղեցական ծէսերով ուրախութիւն կ'ընէին»:

Այժմ քննենք թէ ինչ կ'ըսէ Բոսթ. Տրիւս. «...Եգիպտոսի մէջ Ոսիրիսի (Osiris) շարչարանքը, մահը և յարութիւնը և Հորոսի (Horus) ծնունդը, Եղիւսի (Eleusis) մէջ Դեմետրի (Demeter) համար եղած վնասատու քները և ողբերը և Իսքըսի (Iacshus) ծնունդը, Սիսիօսի մէջ Ատրաստի (Adrastus) հեղութիւնները որ զինքը վար իր հօրը Հերակլէսին (Hercules) թաղման փայտակոյտին վը-



բայ նետեց... ահա այս ամէնը տօնական շքեղ տեսարաններու և թատերական ներկայացումներու ասոն կը տօնուէին: Զանց կ'ընենք խօսիլ Միթրասի (Mythras), Ատիսի (Attis) և Ատօնիսի (Adonis) մահուան և յարութեան ի յիշատակ կատարուած տօնախմբութեանց մասին: Անշուշտ Մատթ.ի Աւետարանին Ի-ԻԸ գլուխներն, բացի վերջի գլուխին 11-15 համարներէն, որոնց մէջ իրարու կը յաջորդեն Ընթրիքի, Գեթսեմանիի, Մատնութեան, Չարչարանքի, Պետրոսի ուրացութեան, Խաչելութեան, Թաղման և Յարութեան տեսարանները, այս ամէնը ընթերցողին մտքին վրայ ներկայացումի տպաւորութիւնը կը թողուն: Աւետարանի վերջին մասն ալ շատ աղէկ կը յարմարի այս մտքին. վասնզի Յիսուսի վերջին խօսքերը և յորդորները՝ զոր իր ժողովուրդին կ'ուզէ, տալիս մը խիստ մէկ յարմար վախճանը ցոյց կ'ուտան»:

Վերջապէս Բրոֆ. Տրիւս կ'ըսէ. «Աւետարանը իր սկզբնաւորութեան մէջ Հրէականութենէ (Judaism) առնուած և աւելի եւս հոգեւոր կաղապարով դարձնուած ըլլալով, Ատօնիսի մէկ ծէս-պաշտամունքն է: Իր կարճ փաստերը սա տեսութեան մէջ կ'ամփոփէ. «Ես եմ Ա (Ալֆա) և Օ (Օմէգա), Սկիզբը և Վերջը», ահա՛ այն խօսքերը զորոնք Յայանութեան գիրքը Մեսիային բերանը կը դնէ: Այս խօսքերը թագոն ակնարկութիւններ չեն Ոսիբիսի մասին, քանի որ Ալֆա և Օմէգա՝ Յունարէն այբուբէնի առաջին և վերջին գրերը միասին գալով կը կազմեն Ատօնիսի անունը»:

Վերջապէս «Գանկի տեղ» կոչուածը նախապէս Ատօնիսի նուիրուած տեղ մը չէր, ուր երկրպագութիւն կը մատուցանէին և Կօլկօս (Golgos) և այն քարէ Կոնը (Cone) որուն վրայ Ասաղիկի (Venus) արձանը կանգնուած էր նախապէս, չէ՞ որ Քրիստոնէութեան Փրկչին դատապարտութեան տեղ որոշուեցաւ, պարզապէս այն պատճառաւ:

որ արդէն հոն Ատօնիսին մարդկային իրական զո՞ մը մատուցուած էր»:

Կ'երեւի թէ Բրոֆ. Տրիւս կ'ընդունի որ, ինչպէս կը յայտնուի իր խօսքերէն, Երուսաղէմէն դուրս բլուրի մը գագաթին վրայ հին ժամանակներէ սկսեալ մինչև Քրիստոնէութեան Ա. դարը, շարունակ պաշտօն կը մատուցուէր բուսականութեան-աստուած Ատօնիսին, և թէ այս բլուրին վրայ կոն մը՝ որ Ատօնիսը կը խորհրդանշէր, կանգնուած էր, որուն առջև «ծիսական տաճ» մը կը կատարուէր, յետոյ պատկերին վրայ սղարէն և կոծ ընելէն ետքը (իրապէս հոն ապրող մէկը սպաննուած էր) անիկա ժողովուրդին իբր կենդանի կը ներկայացուէր: «Աւետարաններու վերջին պատմութիւններն ալ—Չարչարանք, Խաչելութիւն, Յարութիւն եւն, — կէս-պատմական եղանակով մը արտայայտուած այսօրինակ տուամա մըն են և ոչ թէ իրական դէպքեր»:

Այժմ քննենք իր տեսութիւնը:

Ա. Բրոֆ. Տրիւսի ենթադրութիւնը թէ բլուրին վրայ աստուածութիւնը խորհրդանշող պատկեր մը կար, պատմական ըլլալու ամենախորք հաւանականութենէն իսկ զուրկ է: Եթէ այդտեղ ատանկ բան մը գտնուէր, անշուշտ պատմաբանները կամ մարգարէները յիշած կ'ըլլային իրենց գրութիւններուն մէջ, ինչպէս որ յիշած են պղնձէ օձին և ուրիշ հեթանոսական երկրպագութեան և խորհրդանշաններու մաս կազմող առարկաներու անունները՝ որոնք այլևայլ ժամանակներ Հրէաստանի մէջ դրոյութիւն ունէին: Հրեաներուն իրենց քարտէս վերադարձէն յետոյ, երկրպագութեան բոլոր առարկաները անհետացած էին Յուդայի երկրէն, ինչպէս որ արդի դպրոցականները կ'ընդունին: Ուստի Բրոֆ. Տրիւսի ենթադրութիւնը երեւակայութեան արդիւնք կրնայ համարուիլ միայն:

Բ. Դարձեալ «Ես եմ Ալֆա և Օմէգա» խօսքերուն

մէջ Ատօնիսի ուղղուած ունէ անարկուծիւն չկայ: Յու-  
նական Ալֆա և Օմէղա՝ տառերը Eosի (Aos) առաջին և  
վերջին գրերը չեն ներկայացներ, ինչպէս կը գրուէր Յո-  
նիական գաւառաբարբառին մէջ, թէև անոնք ա ժմ յու-  
նական այբուբենին առաջին և վերջին գրերն են. Բրոֆ.  
Տրիւսի ստուգաբանութիւնը երբեք ուղիղ չիթուիր: Յո-  
նիացիք Aua (Eoa) կը կոչէին Կիլիկիան(?) (Cilicia) = Ար-  
շաղոյսի երկիր կամ Արեւելք. ասիկա Ատօնիսի՝ բուսա-  
կանութեան աստուծոյն հետ ունէ առնչութիւն չունի՝ այլ  
ասնուած է Յունական աստուածուհի Eos (Aos)ի ա-  
նունէն որ Իպէրիօն (Hyperion) և Թէա (Thea) տիտան-  
ներուն զուար էր:

Անհաւանական է, ուրեմն, որ Դորիացի Յոյները  
նոյն բառը (Aos) գործածէին թէ՛ արշաղոյսի աստուա-  
ծուհիին և թէ Ատօնիսի համար՝ որ բուսականութեան  
արու ոգին էր: Ինչո՞ւ Բրոֆ. Տրիւս անունին Դորիական  
և ոչ թէ Յոնիական ձևը կը գործածէ, քանի որ Յոնիա-  
կան Յոյները Փոքր Ասիոյ մէջ կը բնակէին՝ ուր այս տե-  
սակ պաշտամունքներ հասաբակ էին և այդ անունը (Eos)  
կը հնչէին:

Գ. Գողգոթա (Golgotha) և Կոլկոս (Colgos) բա-  
ներուն մէջ հաւանական նմանութիւն չկայ, վասնզի ա-  
ռաջինը Սեմական մինչ վերջինը Արիական արմատ բա-  
ռերէ կազմուած է: Գողգոթա որ ըստ Մատթ.ի գանկի  
մը՝ ոչ թէ գանկերու, տեղ կը նշանակէ. Եբրայեցիքէն  
«Գլորի» (Gü) (Ugolet) և «մեռնողներու բլուր» (Golgoatha)  
բառերէն առնուած է. հաւանականաբար ոճրագործները  
այդ տեղին վրայ մահուան կը դատապարտուէին:

Հետեւաբար Գողգոթա և Կոլկոս բառերուն մէջ ստու-  
գաբանական ո՛նէ առնչութիւն չկայ, ուստի այս տեսակ  
ենթադրութիւն մը ընել պարզապէս կանխակալ կարծիք-  
ներու և ո՛չ թէ ուղիղ տրամաբանութեան արդիւնք է:

Գ. Գարով Բրոֆ. Տրիւսի միւս տեսութեան, այ-  
սինքն՝ թէ Յիսուսի կեանքին շուրջ հիւտուած վերջին  
դրուագները — Սաչելութիւն, Յարութիւն, եւն. — ըն-  
թերցողին մտքին վրայ առամայի ազդեցութիւնը կը թո-  
ղուն, պարզապէս ծիծաղելի է: Այդ կարգի ներկայացում-  
ներ երբեք գոյութիւն չունէին Հրեաներու մէջ և Ա. Բ.  
դարու Քրիստոնեաներ միշտ կը հակառակէին առամանե-  
րու ու թատրոններու գոյութեանը, մինչդեռ Հուովմա-  
յեցիք կը սիրէին զանոնք: Դարձեալ Ատօնիսի, Ոսիրիսի  
և ուրիշ աստուածութիւններու վերագրուած այս տեսակ  
պարագաները բոլորովին տարբեր շարժառիթէ ծնունդ  
կառնեն, անոնց մէջ ո՛չ բարոյական և ոչ ալ իմացական  
նշանակութիւն կայ, ընդհակառակը այդ ձէս-պաշտա-  
մունքները մարդուն ստորին անարգ կիրքերը միայն կը  
հրահրէին. . . . Աստուած իմ, ու ելլել Յիսուսի կեանքին  
վերջին օրերու անցքերը նոյնացնել Ատօնիսի մը, Ոսիրի-  
սի մը ձէս-պաշտամունքներուն հետ. . . Յիսուսի խօսքը  
չիպատշաճօր ստանկներուն. «Աչքեր ունին ու չեն տեսներ»,  
միտք ունին ու չեն հասկնար:

Նկատի առնենք Բոպ ըթարնի տեսութիւններն այլ:  
Բոպըրթսըն Յիսուսը Պրօմէթէոսի և Հերակլէսի ա-  
ռասպելներուն հետ կը բաղդատէ. իր այս դիրքը թշնա-  
մական է: Նկատի առէք որ Պրօմէթէոս իր տանջանքնե-  
րէն ազատեցաւ և մարդկութեան օրհնութիւն պարգե-  
ւեց երկինքէն. . . կրակ հայթայթելով: Հերակլէս խորա-  
մանկութեամբ խաբեց Աթլասը և ուռիէ պսակ կրեց:  
Ի՞նչ նմանութիւն կարելի է գտնել Սաչի խորհրդանշա-  
նին և Փալիսկոսի (Phallic) ծառին մէջտեղ-խղճալի են-  
թադրութիւն: Յիսուս կը խաչուի մարդկութեան հոգեւոր  
փրկութեանը համար: Փուչէ պսակ կը դրուի Անոր գըլ-  
խուն ուրիշներու կողմէն: Մինչդեռ Հերակլէս կը խաբէ  
Աթլասը և ինք իր ձեռքով պսակ կը հիւսէ իր գլխուն:

Անհեթեթ և անտեղի է իր միւս Ենթադրութիւնն ալ, որով կը ջանայ նմանութիւն մը տեսնել Յիսուսի Խաչելութեան և Հաղորդութեան ու Մեքսիքացիներու «ուռհայտէ խաչածնե պատկերին» մէջտեղ: Այս տեսակ հեթանոսական արարքներու մէջ չկայ ո՛րեւէ տարր մը՝ որ նպաստէ մարդուն հոգեւոր և բարոյական կեանքին զարգացման, ընդհակառակը անոնքաւելի կը զրգունն մարդուն ստոր կիրքերը ու ելլել նմանութեան եզրեր գտնել Քրիստոնէութեան Ս. Խորհուրդին՝ Հաղորդութեան և հեթանոսական շուայտ խնջոյքի մը մէջ՝ որ ատեն կլիներ իրենց է՛ն թանկ զգեստները հազած խննէչ պարեր կը պարեն, պարզապէս մտքի արգահատելի վիճակ մը չենթադրեր: Հեթանոսական ո՞ր մէկ ծէս, ո՞ր մէկ պաշտամունք ունի հաղորդութեան առթած սրբութեան և վեհութեան յատկութիւնը, ինչպէս արամաբանօրէն կը հարցնէ Բրոֆ. Թորպըրն:

8. ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

Քիտէ՞ք ինչ կ'ըսէ Ռոպրթթարն Յիսուսի Համբարձման մասին. «Անիկա յայտնի առասպել մըն է, արդիւնք տգիտութեան»:

Եւ ինչո՞ւ:

Որովհետեւ ասանկ պատմութիւններ շատ կը գտնուին եզեր աստուած-առասպելներու տալաններուն մէջ. օր. համար, Քրիչնան կը բարձրանայ մինչեւ... Ինտարայի հաստատութիւնը, Ատոնիս իր սպաննուելէն երկու օր վերջ զինքը պաշտողներուն ներկայութեան առջեւ երկինք կ'ելլէ ու վերջապէս Հերակլէս աչ երկինք կ'ելլէ և անմահութիւն կը ծագի թաղման փայտակոյտէն և այս բանը կը թելադրուի «արեւամուտի ատեն ամպերուն գահաւորակի ձեւէն»:

Յայտնի է թէ արուեստի և զբաղմունքեան մէջ այս նիւթական աշխարհէն դէպի հոգեւոր աշխարհ անցքը կը նկարագրուի միշտ իբրեւ Համբարձում մը միջոցին մէջ: Այս տեսակ նկարագրութիւններ բնականաբար միշտ խորհրդաւոր, թաղուն նշանակութիւն մը կ'ունենան: Ամէն ազգեր, նոյն իսկ անոնք որ մտաւորապէս զարգացման բարձրագոյն վիճակի մը հասած են, նիւթական աշխարհէն դէպի հոգեւոր անցքը՝ յարութեամբ կը պատկերացնեն: Կրնայ ըլլալ որ Ա. դարու քրիստոնեաներ Յիսուսի Համբարձումը տառական իմաստով հասկցան. սակայն ամէն պարագայի մէջ ինչ կը նշանակէ Յիսուսի Համբարձումը. թէ Ան իր մահէն վերջ բարձրագոյն և հոգեւոր կեանքի սահմանները մտաւ: Աւետարանիչները թանձրացեալ օրինակով կը բացատրէին այս եղելութիւնը, հակասակա՞ն է, անարամաբանակա՞ն է իրենց նկարագրութիւնը: Չէ՞ որ գիտնականներն անզամ սա տեսակ խօսքի ձևեր կը գործածեն. «Արեւը ծագեցաւ, արեւը մարը մտաւ», եւն: Ծատ աղէկ, ո՞ր մէկ անձ կը յանդգնի ազէս և նախապաշարեալ անուանել այն գիտունը՝ որ այս տեսակ փոխաբերական սծով կը խօսի ամէն օր: Սակայն, եկուր տես որ խեղճ աւետարանիչները ազէս կոչուելու կը դատապարտուին այս տեսակ բացատրական և թանձրացեալ ձևերով խօսելուն համար և իրենց գիրքերն ալ առասպելական կը կոչուին...:

Սակայն արդեօք ինչո՞ւ կը մոռնան առասպելաբանները, թէ իրենց յառաջ բերած աստուածութիւններու համբարձման պատմութիւնները հիմնովին կը տարբերին Յիսուսի Համբարձման պատմութիւնէն՝ որ սակայն հոգեւոր խորունկ և աստուածային նշանակութեամբ լեցուն է: Հերակլէս թաղման փայտակոյտէն իբր թէ երկինք կլաւ նոյն նիւթական մարմնով՝ դեռ չմտած: Սակայն Յիսուս փոխուեցաւ, հոգեւոր մարմին առաւ, ինչպէս Ս. Պօղոս

կը բացատրէ : Ատօնիսի պարագան ալ բոլորովին տարբեր է . անորինը ոչ թէ համբարձում է՝ այլ նորէն ծնունդ , քանի որ բուսականութեան ոգին կամ աստուածը ըլլալով կը խորհրդանշէ բնութեան աստիճանական դարձնումը կամ աճումը և կամ մեռնող արեւին վերստին ծագիլը : Ըսէ՛ք , խնդրեմ , ասիկա ինչ նմանութի՞նքն կըրնայ ունենալ Յիսուսի Յարութեան և Համբարձման հետ : Երեւակայութիւն միայն այս տեսակ արտաոց եզրակացութիւններ կրնայ հնարել և չեչտենք դարձեալ թէ առասպելաբան գպրոցի հետեւողները շատ զօրաւոր են երեւակայութեամբ , բայց տկար են տրամաբանելու կարողութիւնով և զուրկ են բոլորովին հոգեւոր կեանքի իրականութիւնները տեսնելու աստուածասուր շնորհքէն : Որո՞նք մարդկութեան մեծամեծ ծառայութիւններ մատուցեր են իրենց խօսքով և կեանքով . Մուսիսնե՞ր , ըԱփրճըններ , Ճիբսի Սմիթներ , Բարքըրներ , Մեարտյանե՞ր , Շնորհալիններ , Նարեկացիներ թէ՛ Ինկլլոսոններ , Հէքէյներ Զօլաններ կամ Մանկասարեաններ , թող իրենց գործերը , իրենց թողուցած հետքերը պատասխանեն , թող անաչառ ընթերցողը դատէ՛ . . . :



ՄԱՍՆ Գ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. ՅԻՍՈՒՍ ԱՌԱՍՊԵԼ ՄԸ ԶԷ՛ ԵՐԲԵՒ

Ինչ արդիւնք յառաջ բերինք՝ հետեւելով ուղղակի քննադատական-գիտական մեթոտին :

1. Թե երեք Համայնացոյ Աւետարաններուն եւ Ս. Պողոսի Յիսուսը նոյն անձերն են : 2. Թե Աւետարաններուն Յիսուսը պատմական դեմք մըն է եւ ոչ թէ Հրեական կառ հեքսանոսական արեւ-աստուածներու մեկ ուրիշ նմանութիւնը եւ 3. Թե Քրիստոս Ա. և յայտոյ դարերու Քրիստոսներէն եւ Պողոսի հաւատ յի գաղափարական անձնաւորութիւն մը չէր . այլ պատմական դեմք մը :

1. Պողոս առաքեալ , որուն պատմական դէմք մը ըլլալը և ո՛չ մէկ քննադատ կը համարձակի կասկածի ենթարկել , երբ Տարսոնի մէջ կը բնակէր , անտարակոյս կատարելապէս տեղեակ էր զանազան հեթանոսական արարողութիւններու՝ որոնք Փոքր Ասիոյ մէջ գոյութիւն ունէին : Սակայն կան բանաւոր պատճառներ հաւատալու թէ անիկա պատմական Յիսուսը կը քարոզէր և զԱնիկա երբեք չէր նմանցներ հեթանոս աստուածութիւններու հետ : Թուենք այս պատճառները :

Ա. Պողոս առաքեալ ինք ծննդեամբ էր «փարիսեցի փարիսեցիներէ» . կրթուած էր նշանաւոր բարբի մը Գամաղիէլի ոտքը . հետեւաբար ինք Հրեականութեան այսինքն Օրէնքին , համակիր էր , որմէ կը թուի թէ երբեք չբաժնուեցաւ , վասնզի իր Թուղթերուն մէջ որոշ կերպով

կ'ըսէ թէ, Քրիստոնէութիւնը և հետևաբար Քրիստոսի խօսքերը կ'ընդունէր իբրև օրէնքի լրումը և ոչ թէ անոր (=օրէնքին) նախազգափարուած մէկ գրութիւնը: Քանի որ ինք նախապէս Հրէական օրէնքին մէջ կրթուած էր և զայն կը սիրէր, կարելի՞ էր որ յետոյ Քրիստոսին դառնար եթէ Անիկա հեթանոս արև-աստուածներու գաղափարէն առնուած էր: . . . Առողջ դատողութիւնը, գաղափարի պարկեշտութիւն և տրամաբանութիւնը կարելի՞ է որ ընդունին ստանկ ենթադրութիւն մը: Եթէ Պօղոս Քրիստոնէութիւնը իսկ ստած ըլլար ուրիշ արև-աստուծոյ մը կամ աստուածներու գաղափարէն, անշուշտ այդ պարագային ընդարձակ բացատրութիւններ պիտի տար. սակայն ինք երբեք չի խօսիր իր Թուղթերուն մէջ այս տեսակ պաշտամունքներու մասին: Ան միշտ իբր օրինակ յառաջ կը բերէ Մովսիսական օրէնքը որ նախապատրաստութիւն մըն էր Քրիստոնէութեան համար և ուստի «Քրիստոս էր օրէնքին լրումը», բայց երբեք չի խօսիր մեանող և յարութիւն առնող աստուածներու մասին:

Բ. Պօղոսի միտքին մէջ գտնուող Յիսուսը՝ զոր քարոզեց մեծ հաւատքով և անձնուիրութեամբ, երբեք չունի նմանութիւն չունի Յունա-Սիրիական ժողովուրդներու Ասօնիսին հետ:

Գ. Պօղոս բնաւ նեղութիւն չի կրեց թէ՛ Հրեաներուն և թէ՛ հեթանոսներուն քարոզելու համար թէ Աստուած կրնար մարդակալ: Անոնք պատրաստ էին ընդունելու համար այս գաղափարը: Սակայն մեծ դժուարութիւն կըրեց զանոնք համոզելու համար թէ Յիսուս ուր Մարդ մըն էր՝ Գալիլիացի պարզ շիւնական մը, իր ԿԵԱՆՔՈՎ յայտնեց իր Աստուծոյ որդի ըլլալը: Ի՞նչ էր հեթանոսական և Քրիստոնէական գաղափարներու մէջտեղ եղած տարբերութիւնը. հեթանոսներուն գիրքը սա էր. գաղափարէն դէպք

անձնաւորութիւն. ընդհակառակը քրիստոնեաներուն էր՝ անձնաւորութեան դէպք գաղափարականացում, այսինքն քրիստոնեաները ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԻՍՈՒՍԸ (=պատմական Յիսուսը) գաղափարական անձնաւորութեան մը վերածեցին, զԱյն երկնային Քրիստոս ըրին: Ի՞նչ կը տեսնեն Յիսուսի աշակերտները Անոր մէջ. ՆԱԽ ՄԱՐԴԸ՝ ՅԵՏՈՅ ԱՍՏՈՒԱԾ ՈՒԹԻՒՆԵԸ Անոր մէջ՝ իբր արդիւնք իր կեանքին: Իր աստուածային կեանքը զինք աստուածացուց: Բնական չէ՞ սա:

Դ. Պօղոս իր հակառակորդներուն հետ ունեցած վիճարանութեանց ատեն միշտ իբր փաստ յառաջ կը բերէր, ինչպէս կը յայտնուէր իր Թուղթերէն, պատմական Յիսուսը, որուն կեանքի պատմութիւնը նոյն իսկ իր մասնաբաժանութիւնով ծանօթ էր իր ժամանակակիցներուն, և ինք ալ Անոր մասին տեղեկութիւն ստացաւ ակնատեսներու միջոցաւ, որոնք Անոր աշակերտ և հետևող էին:

Աշակերտները Յիսուսը անձամբ տեսած մանաւանդ Անոր հետ ապրած և գործած ըլլալուն համար առաջնութեան աստիճան կ'ուզէին ունենալ. սակայն Պօղոս ալ կ'ըսէ թէ թէ և Քրիստոսը նախապէս մարմնով չէր տեսեր, բայց Ան իրեն յայտնուած և իրեն ալ առաքելութեան պաշտօն արւած էր:

2. Թէ Աւետարաններու Յիսուսը պատմական դէմք մըն է և ոչ թէ գաղափարական նմանութիւնը արև-աստուածներու, ներկայիս մէջ ամէնէն ընդունելի և բանաւոր բացատրութիւնն է: Ի՞նչ կը պատմեն Աւետարանները՝ ահա համառօտութիւնը իրենց վկայութեան. Յիսուս Քալիլիացի մարդ մը. Ուսուցիչ Արդարութեան և սիրող մարդկութեան, ապրեցաւ և գործեց մարդկութեան սիրոյն համար, Անոր մէջ տեսնուեցաւ աստուածային կաատրելութիւն, յաղթեց մահուան, մահը իշխանութիւն չունեցաւ Անոր վրայ: Իսկ արև-աստուածները՝ անոնք կը նկատուէին իբրև

ապրող մարդեր, ՈՉ ԵՐԲԵՔ, անոնք աստուածներ (?) էին  
և ոչ թէ մարդեր: Ուրեմն, ինչպէ՞ս կարելի ըսել թէ  
Յիսուս-Մարդուն պատմութիւնը արեւ-աստուածներու ա-  
ռասպելէն աւելուած է . . . :

Զօրաւոր փաստ մըն ալ Յիսուսի պատմականութեան  
մասին: Ա. ԴԱՐՈՒ ՄԷՋ ԷՊԻՈՆԵՍՆ (Ebeonite) ԱՂԱՆ-  
ԴԱԻՈՐՆԵՐԸ ՄԵՐԺԵՅԻՆ ՅԻՍՈՒՍԻ ԱՍՏՈՒԱԾՈՒ-  
ԹԻՒՆԸ և ըսին թէ ԱՆ ԼՈԿ ՄԱՐԴ ՄԸՆ ԷՐ, Ուսու-  
ցիչ արգարութեան: Ա. դարու մէջ ապրող աղանդաւոր-  
ներն ալ խարուեցան արդեօք . . . :

Յ. Այժմ թող Տր. Ֆրէյզըր (Dr. Frazer) խօսի մեզ:  
«Թէ՛ր Պուտտայի և թէ՛ Քրիստոսի պատմական դէմքեր  
ըլլալը տարակոյսի ենթակայ եղած են. այս հաշիւով հա-  
ւասարապէս բանաւոր պիտի ըլլար տարակուսիլ նմանա-  
պէս Մեծն Աղեքսանդրի և Մեծն Կարողոսի պատմակա-  
նութեան մասին ևս, քանի որ անոնց շուրջ ալ առասպել-  
ական պատմութիւններ յերկրուած են: Կրօնական աշ-  
խարհի մէջ մեծագոյն շարժումները կը ծագին գերազանց  
մտքերու գիտակից և յարատեւ ջանքերուն միջոցաւ և ոչ  
թէ կոյր անգիտակցութեամբ . . . : Ամէն մեծ կրօնք ան-  
ցելոյն մէջ ունեցած է իր հիմնադիրը և հեղինակը, ա-  
սիկա ամէն տարակոյսէ վեր է. եթէ կրօնք մը հեղինակ  
չունենայ և կամ պատմական անձ մը անոր հիմը դրած  
չըլլայ, չուտով կը վերջանայ»: Ծանրակշիւ խօսքեր են  
ասոնք և շատ ալ ճշմարիտ:

Ուրիշ ճշմարտութիւն մը:

Ո՞ր մէկ պատմաբան, ո՞ր մէկ կենսագիր իր գրու-  
թիւններուն մէջ թերութիւններ չէ ունեցեր. ո՞ր մէկ  
պատմաբան, ո՞ր մէկ կենսագիր իր հայեցակէտով, իր  
անձնական համոզումներուն երանգով չէ նկարագրած և  
հիւսած իր պատմութիւնը կամ կենսագրութիւնը: Ո՞վ կը  
մերժէ Քսենոփոնի՝ (Xenophon) Սոկրատէսի (Socrates)

վրայ գրածները իր Յիշատակագիրներուն (Memorabilia)  
մէջ, ուր մեծ խորհողին միաքը երբեք երեւան չի գար: Պը-  
դատոնի, Սոկրատէսի մասին իր «Տրամախօսութեան»  
(Dialogue) մէջ գրածներն ալ շատ ազատական և թերի  
են: Դարձեալ Եւսեբիոսի (Eusebius) «Կոստանդիանոսի  
կեանքը» (Life of Constantine) գիրքը մեծ իշխանութիւն  
և արժանիք կը վերագրէ կայսեր: Այս օրինակները կը  
բաւեն ցոյց տալու համար թէ անթերի գրականութիւն,  
անթերի կենսագրութիւն կարելի չէ մարդուն համար:  
Շատ աղէկ. կը կոչուիք վերագրեալ հեղինակութիւնները  
առասպելական, իրենց էջերուն մէջ թերութիւններ, չա-  
փազանցութիւններ, անճշդութիւններ և ըն, բովանդա-  
կելուն համար. կ'անուանենք անոնց գիրքերն ու հե-  
րոսները առասպելական: Ո՛չ երբեք:

Նյայէս, եթէ նոյն իսկ ենթադրելու ալ ըլլանք թէ  
Յիսուսի կարգ մը խօսքերը և գործերը՝ որոնք Աւետա-  
բաններուն մէջ գրուած են, չափազանցութիւններ են,  
դեռ անոնց մէջ կը մնայ ընդհանուր տարր մը, ներդաշ-  
նակութիւն մը, և նկարագիր մը, որ ուղղակի անձնա-  
ւորութեան մը գոյութեան և կեանքին միայն կրնայ յա-  
ռաջ գալ . . . : Ուրիշ խօսքով, եթէ Աւետարաններու խօս-  
քերը իրենց մանրամասնութեան մէջ չիտակ կամ սխալ ալ  
ըլլան, սակայն եթէ մենք գիտնանք զանոնք ուղիղ գոր-  
ծածելու կերպը, ա՛յն ատեն պիտի գտնենք անոնց մէջէն  
Յիսուսի պատմականութիւնը և իր անձնաւորութեան  
մասին բնաւ չպիտի տարակուսինք:

«Անձնաւորութեան փորձը գերագոյն և վերջնական է:  
Ո՞վ կրնայ Ասօկիսի մը, կամ արեւ-աստուծոյ(?) մը պատկերը  
կամ կեանքը ապրող եւ գործող մարդու մը կեանքին պէս  
իւր մտքին առջեւ պատկերացնել: Եւ ոչ մեկը: Սակայն ես  
կրնամ պատկերացնել Յիսուսի կեանքը իմ մտքիս առջեւ.  
Կը տեսնեմ այդ կեանքին գերազանցօրէն մարդկային ըլ-

լալը, քանի որ մարդու որդիներէն սերեցաւ, և մարդկային կեանքի յատուկ բոլոր փորձութիւններն ու փորձաութիւններն ունեցաւ, աճեցաւ մաքով, հասակով և շնորհքով: Ես կը տեսնեմ Անոր մարդկային կեանքին շարք մարդիկ, որոնք սիրով և համակրութեամբ կը կապուին Անոր, կը խօսին, կ'ուտեն, կը խմեն և կը գործակցին Անոր հետ: Վերջապէս ես կը տեսնեմ Անոր միջախարհ, ուր ապրեցաւ, պատեցաւ և գործեց. առասպելական չին Երուսաղէմ, Կափառնայում, Գալիլիա, Դեկապոլիս և ուրիշ բազմաթիւ անուններ, այլ իրական վայրեր: Աստուծոյ տներ, Հերակլէաներ, արեւ-աստուածներ գործ ունին իրական վայրերու և իրական մարդերու հետ. անոնք մարդկային էակներ են, կարելի է պատկերացնել անոնց կեանքը մարդկային մաքին առջեւ»:

Իրաւացի են և շատ ալ բանաւոր Տր. Թորպլընի խօսքերը. «Ճիշդ ինչպէս որ առանց Պուսսայի Պուսսայա-կանութիւնը չէր կրնար գոյութիւն ունենալ եւ ինչպէս որ առանց Մովսէսի Մովսիսականութիւնը չէր կրնար գոյութիւն ունենալ եւ ճիշդ ինչպէս որ առանց Մահաբալէի Մահաբալէականութիւնը չէր կրնար ծնունդ ունէր, առանկ ալ ԱՌԱՆՅ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԸ ԲԻՐԻՍՏՈՆԵՆՈՒԹԻՒՆԸ ԶՊԻՏԻ ԿՐԵԱՐ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՎԱՐԵԼ 20 ԱՄԲՈՂՋ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՅԻՆ ՄԷՁ»:

2. ԴԱՐԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հանճարները թող խօսին

«Ես կը ճանչնամ մարդիկը և ձեզի կ'ըսեմ թէ Յիսուս-Քրիստոս լսի մարդ մը չէր: Նախապաշարեալ մըքը նմանութիւն մը կը տեսնեն Քրիստոսի և կայսրութիւններու հիմնադիրներուն, Քրիստոսի և ուրիշ կրօնը-

ներու Աստուածներուն մէջտեղ: Ատանկ նմանութիւն մը սակայն երբեք գոյութիւն չունի: Քրիստոնէութեան և ուրիշ կրօնքներու մէջ անհուն հեռաւորութիւն մը կայ: Աղեքսանդր, Կեսար, Մեծն Կարոլոս և ես կայսրութիւններ հիմնեցինք: Սակայն ինչ բանի արդիւնք է մեր կարողութիւնը. — Պարզ ոչ ժի: Յիսուս-Քրիստոս միայն իր կայսրութիւնը Սիրոյ վրայ հաստատեց, և ճիշդ այս ժամուն միլիոնաւոր մարդիկ պատրաստ են անոր համար մեռնելու: Յիսուս-Քրիստոսէ զատ ուրիշ ամէն անձեր նրկարագրով թերի են: Անիկա նոյնն է երէկ և այսօր, վեհափառ և պարզ, անհունապէս հաստատուն և անհունապէս աղին: Անիկա մեր հաւատքին կը ներկայացնէ խորհուրդներու (mystery) կարգ մը, և հեղինակօրէն կը հըրամայէ որ հաւատանք անոնց, «Ես եմ Աստուած» ահաւոր խօսքէն զատ ուրիշ և ո՛չ մէկ պատճառ յառաջ բերելով:

«Սուրբ Գիրքը պատմական գործերու և պատմական անձերու կատարեալ շարք մը կը բովանդակէ՝ բացատրելու համար ժամանակ և յաւիտենականութիւն. բան մը զոր ուրիշ կրօնքներ չեն կրնար ընծայել: Եթէ Քրիստոնէութիւնը ո՛րեւէ անձի համար ճշմարիտ կրօնք չէ, այդ անձը չարաչար խաբուած է, վասն զի անոր մէջ գտնուած ամէն բան լուրջ և Աստուծոյ արժանի է: Նարոյեոն Պուսարք

«Եթէ մենք Ս. Գրքի սորվեցուցած սկզբունքներուն համաձայն կեանքով մը ապրինք, մեր երկիրը շարունակ յաջողութեան ճամբուն վրայ պիտի գտնուի և պիտի յաջողի: Սակայն, եթէ մենք և մեր սերունդը զանց ընենք անոր հանդուրժելուն, և ուրանանք անոր հեղինակութիւնը, և ո՛ մէկ մարդ պիտի կրնայ կանխատեսել այն յանկարծահաս աղէտը որ մեր վրայ պիտի հասնի՝ մեր ամբողջ փառքը խո-

րունկ անշքութեան մէջ թաղելով: Ս. Գիրքը ա՛մէնուն ալ Գիրքն է, ինչպէս Գիրքն է օրինականներուն և աստուածաբաններուն: Կը խղճամ ա՛յն մարդուն վրայ, որ անոր մէջ չի կրնար գտնել խորհուրդի հարուստ պաշար և կեանքի կանոնի համար սկզբունքներ: Ես կը հաւատամ թէ Յիսուս-Քրիստոս Աստուծոյ Որդին է: Իր կատարած հրաշքները իմ մտքիս մէջ կը հաստատան իր անձնական հեղինակութիւնը, և զիս ընդունակ կ'ընեն հաւատարութեան որ ինք կը յայտնէ:»

Տանիէլ Ռէպոքր

«Ես ըսած եմ ու մի՛շտ ալ պիտի լսեմ թէ սրբազան Մատեանին յարատեւ ընթերցումը պիտի պատրաստէ լաւագոյն քաղաքացիներ, լաւագոյն հայրեր և լաւագոյն ամուսիններ:»

Թովա ձեճէրսն

«Ս. Գրքի վրայ ունեցած հաւատքս իմ բարոյական և գրական կեանքիս առաջնորդ եղած է: Եւ ո՛չ մէկ քրիստոնէականութիւն կարող պիտի ըլլայ պակասցնել մեր հաւատքը անոր վրայէն, որուն բովանդակութիւնը մեզի կենսական զօրութիւն և կեանք տուած է: Որչափ աւելի քաղաքակրթութիւնը յառաջանայ, ա՛յնչափ աւելի Ս. Գիրքը պիտի գործածուի:»

Կէօթէ

«Կը յանձնեմ զիս Աստուծոյ՝ իմ Արարիչիս սիրտութեանը, յուսարով և վստահաբար հաւատարով թէ միայն իմ Փրկչիս Յիսուս Քրիստոսի արժանաւորութեան չնորհիւ յաւիտեական կեանքի բաժնեկից պիտի ըլլամ:»

Շէյխիի՛ իր կսակին մէջ

«Եթէ երբեք մարդ Աստուած էր, և կամ Աստուած մարդ, Յիսուս Քրիստոս երկուքն ալ էր:»

Լորս Պայրըն

«Ես աստուածաբանական հարցերէ անշատ, աշխարհական կրթութեան զօրեղագէս մի՛շտ կողմնակից եղած եմ. բայց պէտք է խոստովանիմ թէ նուազ շփոթած չեմ գիտնալու համար թէ ի՛նչ տեսակ գործնական չափերով կրօնական զգացումը, որ բարոյական կենցաղի էական խարխախն է, կարելի պիտի ըլլայ առանց Ս. Գրքի հաստատուն պահել, երբ մանաւանդ ներկայիս մէջ կարծիքներու քառասոյն վիճակ մը կը տիրէ:»

Բրոճ. Հրօլի

«Իմ դաւաններու ուսուցանելու համար, Ս. Գրքին տուած բարոյական դասերէն լաւագոյն դասեր չեմ կրնար գտնել:»

Տիսո

«Քինէ՛ փիլիսոփաներու գրքերը, իրենց պերճաշուք ասացումներուն մէջ: Որչա՛փ տկար և անարգ կը թընուին անոնք, երբ Ս. Գրքի հետ կը բաղդատենք: Ս. Գրքին վեհափառութիւնը զիս կը հիացնէ:»

Ռուսո

«Քրիստոսի բարոյական նկարագիրը անբաղդատելիօրէն գերազանց էր բոլոր մեծ ու առաքինի մարդոց նկարագրէն: Եւ ո՛չ մէկը Անոր պէս ազնիւ, խոնարհ և բարագրէն: Եւ ո՛չ մէկը Անոր պէս ազնիւ, խոնարհ և բարագրէն էր: Ան ասորեցաւ իր Երմիաւոր Հօր տունին մէջ: Իր բարոյական կեանքը ամբողջապէս Աստուծոյ լեցունութիւնն էր: Ան ամէնուն Տէրն էր, վստանդի իրապէս ամենուն եղբայրն էր:»

Բիֆոլ

«Ո՞ր մէկը իր աշակերտներէն և կամ ո՞ր մէկը իրեն հաւատացող նորադարձներէն կրնար հնարել Յիսուսի խօս-



քերը, կամ երեւակայութեամբ գրել անոր վերագրուած կեանքը և նկարագիրը: Անշուշտ այդ բանը չէին կրնար ընել Գալիլիացի ձկնորսները, և ո՛չ ալ Ս. Պօլոս, որուն նկարագիրը և ինքնատիպ խառնուածքը բոլորովին տարբեր տեսակէ էր: Բանի որ Պօլոսի պէս դերագանաց տաղանդ մը՝ օժտուած հաւանարար մեծագոյն բարեկարգիչներու և մարտիրոսներու յատկութիւններովը՝ ընդունած է զՅիսուս և անոր պատգամը, ուրեմն չի կրնար ըսուիլ թէ կրօնքը այս մարդուն վրայ հաստատուելով, և ընդունելով զայն իբրեւ մարդկութեան առաջնորդը և գաղափարականին ներկայացուցիչը, զէջ ընարութիւն մի կատարած եղաւ:»

ՃՅՈՒ ՍԻՐԵԱՐԿ ՄԻԼ

«Մարդկութեան ամբողջ պատմութիւնը առանց անոր անհասկնալի է: Ան է անընդհատելի մարդը, որուն արեւելեական խիղճը տուած է «Աստուծոյ Որդի» տիպոսը, և ստիկա՝ իրաւացիօրէն: Յիսուս էր Աստուծոյ մեծագոյն գիտակցութիւնը, որ երբեք ուրիշ ո՛ւնէ մարդու կողմէքին տակ ապրած չէ: Հանգչէ՛ ուրեմն քու փառքիդ մէջ, ազնիւ հիմնադիր: Դուն քու գործը լրացուցիր: Դու պիտի ըլլաս մարդկութեան անկիւնաքարը, շքնշել քու անունդ երկրի վրայէն, զանիկա իր հիմերէն խախտել պիտի ըլլար: Քու և Աստուծոյ մէջտեղ այլեւս և ո՛չ մէկ տարբերութիւն կայ: Դու յաղթեցիր, ուստի, թագաւորութեանդ մէջ միշտ անհամար երկրպագողներ պիտի ունենաս: Ապագան ինչ որ ալ ըլլայ, Յիսուսը գերազանցող պիտի չգտնուի: Իր յիշատակը միշտ արցունքներ պիտի խլէ մեր աչքերէն, իր տանջանքները պիտի մորմոքեն միշտ ազնիւ սրտերը, և բոլոր դարերը պիտի հրատարակեն թէ մարդոց որդիներուն մէջ Յիսուսէն ա՛ւելի մեծ մէկը ծնած չէ:»

ԷՐՆԷՍՐ ՈՐՈՒՄԱՆ

Սակայն, զարմանալի բան, հակառակ այս տաղանդաւոր հանճարներուն՝ Նարդեմներու, Ուէպլաթըրներու՝ ձէֆէրպըններու, Պայրններու, Կէօթէներու, Հըքսլիններու վկայութիւններուն, ա՛յս, հակառակ քսան ամբողջ դարերու վկայութեան՝ որուն մէջէն Օգոստինոսներու, Պընևաններու, Լուտերներու, Լուսաւորիչներու, Մահակ և Մեսրոպներու և անհամար ու անհաշուելի հոյակապ մարդոց մեծ հոգիները մեզի կը խօսին ու անանելով քսաներորդ դարու զաւակներուս սիեպալիկութիւնը, արտմախսան շեշտով կ'ըսեն մեզ թէ. «Յիսուս իրապէս աշխարհ եկաւ, ապրեցաւ, զործեց, խաչուեցաւ և յարեալ ի մեռելոց և ա՛յսպէս եղաւ մարդկութեան իսէպլին = գաղափարականին մարմնացումը, յայտնեց աստուածութիւնը, առանց որուն՝ յոյս, լոյս ու կեանք ունենալ կարելի չէ»: Ե՛հ, հակառակ այս ամէնուն, քսաներորդ դարը ծընունդ տուաւ խուժը մը ապերախա զաւակներու, որոնք ջնջել կ'ուզեն Յիսուսի անունը, եթէ կարելի ըլլայ, երկրիս վրայէն, մարդոց սրտերէն, Անոր տեղը դնելու ի՛նչ . . . ոչնչութիւն: Ջնջել Յիսուսի անունը, առասպելականացնել զԱյն, Աստուած իմ, ի՛նչ կը նշանակէ աս, մա՛հ, յաւիտենական մահ ու կործանում, մատուր, բարոյական և մանաւանդ հոգեւոր կործանում, այն աստի մարդկութիւնը, այո՛, քաղաքակիրթ և զարգացեալ կոչուած մարդկութիւնը, տիտի իյնայ թշուառութեան, խաւարի, մեղքի և ֆիզիքական ու բարոյական անկումի: անե՛լ անգունդին մէջ: Կործանեցէ՛ք Յիսուսի անունով կառուցուած բոլոր եկեղեցիները՝ որոնց մէջ Սէր ու Եզրայրութիւն կը քարոզուի, կործանեցէ՛ք Անոր անունով կանգնուած բոլոր հիւանդանոցները, բոլոր որբանոցները, բոլոր ձերանոցները, բոլոր աղքատանոցները, բոլոր հաստատութիւնները, սպաննեցէ՛ք մարդոց սրտերուն մէջ՝ հըրահրուած բարեօրոսկան զգացումները, մարտը և ամ-

բասիր կեանքով ապրելու ջանք ու ճիգերը, պարպեցէ՛ք միլիոնաւորներու սրտերուն մէջէն բոլոր ազնիւ և աստուածային զգացումները՝ որոնք Յիսուսով ներշնչուած են, և ա՛յն ատեն մարդկութիւնը սատանաներու և աշխարհ... դժոխքի պիտի փոխուի: Կը չափազանցե՛մ արդեօք. թո՛ղ պատմութիւնը խօսի, թո՛ղ մարդկային խիղճը վկայէ այս ճշմարտութիւններուն: Չէ՛, մարդիկ վրայ չեն տար իրենց հոգեկան բաղձանքները. անոնք պահել կ'ուզեն զայն ի գէն ամէն զո՛նողութեանց. թող առասպելաբանները աղէկ գիտնան ասիկա: Քսան ամբողջ դարեր և քսան ամբողջ դարերու մէջ ապրող միլիոնաւոր հոգիներ ծունկ չօքած են Անոր առջեւ և զՍ.յն դաւանած են: Անցեալը Անորն էր, Ներկան Անորն է, Ապագան աչ Անորը պիտի ըլլայ:

Մարդիկիստ ապացոյց կ'ուզեն Յիսուսի աստուածութեան հաւատալու համար, բայց ատիկա հաւատքի արդիւնք է, ո՛ւր գիտութիւնը կը վերջանայ՝ ոն հաւատքը կը սկսի: «Մարմինը ու արիւնը չեն կրնար յայտնել՝ այլ Տէրոջը հոգին»: Ինչո՞ւ սակայն, ուրանալ կ'ուզեն Անոր աշխարհ եկած ըլլալը և իբր մարդ ապրած ըլլալն ալ, հակառակ ա՛յսչափ բաղձաթիւ և ստոյգ փաստերու, ասանկներուն համար կարծես ըսուած է սա խօսքը. «Աչք ունին ու չեն տեսներ»: Այս տեսակ անձերուն կ'ըսենք մենք. «Դո՛ւրս ելէ՛ք անտառէն և ա՛յն ատեն պիտի կրնաք հաւատալ ո՛չ միայն Յիսուսի աշխարհ եկած ըլլալուն՝ այլ նաեւ Անոր Աստուածութեանն ալ: Թէ ի՛նչ ըսել կ'ուզենք «դուրս ելէ՛ք անտառէն» խօսքով, թող մեզ խօսի ձօրձ Սոլթատորուն գրութիւնը կ'արտատպինք «Աւետարներ»էն, (1913, էջ 1014-15):

«Կիրակի իրիկուն մը պատանիներու համար պաշտամունք մը կատարած էի, և պաշտամունքը լմնցնելէ հաքը եկեղեցիէն մեկնելու վրայ էի, երբ երիտասարդ մը փա-

փաք յայտնեց նետս տեսակցութիւն մը ունենալու և աւանդատունը մտաւ:

Ան ըսաւ. «Ես սկիպտիկ մըն եմ»:

— Այո՛, կրնաք ըլլալ: Մարդոցմէ ոմանք այդպէս են: Հիմա այս պահուս ինձմէ ի՛նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի համար:

— Պիտի փափաքէի գիտնալ թէ պիտի ուզէի՞ր ինձի օգնել ապացուցանելու համար թէ Քրիստոս գոյ է:

— Այդ ընել երկու վայրկեան իսկ չառնիր: Չեզի ապացուցանել թէ Քրիստոս գոյ է՝ ձեր և իմ ժամանակս վտանդէ տարբեր բան մը չէ:

— Այդ ի՛նչպէս կրնայ ըլլալ, կը կարծէի թէ ուրախ պիտի ըլլայիք ինձի օգնելով այդ մասին:

— Օ՛, դուք սկիպտիկ մըն էք: Դուք համոզուած էք ատոր: Աղէկ է որ այդպէս ալ մնաք և Քրիստոսի գոյութեան կամ չգոյութեան հարցին նկատմամբ ալ չմտածանջուիք:

— Բայց ես արդէն մտածանջ եմ:

— Կրնայ ըլլալ, և ձեզի օգտակար ալ կրնայ ըլլալ այդ, եթէ անկեղծ էք ձեր մտածանջութեան մէջ:

— Պիտի չուզէի՞ք ինձի սորվեցնել թէ Քրիստոս գոյ է:

— Ոչ, բնականաբար, սուած ժամանակս չարժեր:

— Բայց ես կը կարծէի թէ ինձի պիտի կրնաք օգնել:

— Ուրեմն, շատ աղէկ, հետեւիդ սակարկութեան մը

մտնենք: Եթէ դուք ուզէք ինձի բան մը ապացուցանել, ես ալ պիտի ապացուցանեմ ձեր ուզած բանը. եթէ դուք ինձի ապացուցանէք թէ դուք ձեր մօրը զաւակն էք, ես ալ ձեզի պիտի ապացուցանեմ թէ Քրիստոս գոյ է:

— Այո՛, պիտի ապացուցանեմ: Եւ նստաւ ու սկսաւ խորհիլ թէ ո՛ւրիկէ սկսելու էր:

Քիչ մը ետքը ըսաւ. — Չեմ գիտեր թէ ի՛նչպէս սկըսիմ:

— Ես ալ այդպէս կը խորհիմ իմ կողմէն : Դուք հազիր միայն այսչափ կրնաք ընել : Այնչափ առաջ սրչափ կըրնաք յիշել , մէկը ձեզի սորվեցուց իրեն մայրիկ կանչել , և և զքեզ իր զաւակը կը կոչէր , և դուք այն ժամանակէն ի վեր կը շարունակէք զայն մայր կոչել , բայց փաստ մը չունիք թէ ան ձեր մայրն է : Ուրեմն դուք կը հաւատա՞ք թէ ան ձեր մայրն է :

— Կատարելապէս :

— Նմանապէս , բաւական երկար ժամանակ առաջ , ևս ալ սկսայ Յիսուս Քրիստոս անուամբ Անձ մը իմ տէրս ու Փրկիչս կոչել : Ան ալ սկսաւ զիս իրենը կոչել , և այս յարաբերութիւնը կատարելապէս ու գոհացուցիչ կերպով կը շարունակուի . ահա այս է բոլորը :

— Շատ աղէկ . ըսաւ ան , այդ պարզ տրամաբանութիւն մը կ'երեւայ : Հետեւաբար ըսէք ինծի թէ ի՞նչպէս ևս ինծի համար կրնամ գտնել թէ Քրիստոս գոյ է :

— Դուք զայդ հինգ վայրկեանի մէջ կրնաք գտնել , եթէ ուզումիտ ու անկեղծ էք : Ենթադրեցէք թէ Աւրստրալիոյ մէջ էք , և կորսուած էք այն խիտ անտառներէն մէկուն մէջ զոր «Թաւուտ» կը կոչեն : Դուք հոն հազիր բան մը կրնաք ընել , այսինքն կենալ և Քու-իլի կանչել : (Քու-իլի բառ մըն է զոր կը կանչեն տարօրինակ կերպով երկար խաղով մը որ օդին մէջ բաւական երկար միջոց կը ձապարդէ ու հեռուէն յստակ կերպով կը լսուի : Այս այն սովորական կերպն է զոր թաւուտներու մէջ մտլորած մարդիկ կը գործածեն իրենց ո՛ւր ըլլալը հասկցնելու կամ իրարու տեղը գտնելու համար : ) Եթէ մօտերը մարդ մը կը ընակի , որուն ո՛ւր ըլլալը չէք զիտեր , բայց ան կրնայ ձեր ձայնը լսել՝ ձեզի կը պատասխանէ , և դուք կը շարունակէք կանչել մինչև որ ան ձեզ գտնէ և դուք այդ կերպով ազատիք . դուք ալ Յիսուս Քրիստոսը կանչելու էք , և եթէ Ան ձեզի մօտ տեղ մըն է ու կը լսէ ձեզի՝ ձեր կանչին պիտի պատասխանէ , և դուք ալ պի-

տի գիտնաք ան իրողութիւնը թէ՛ Ան գոյ է : Պիտի չուզէ՞ք Յիսուս Քրիստոսը կանչել :

— Այո՛ , կ'ուզեմ :

— Ե՛րբ պիտի սխիք :

— Հիմա :

— Հետեւաբար այդ ամուսին առջև ծնրագրեցէ՛ք :

Ան ծնրագրեց և սա տեսակ խօսքեր մը ըսաւ . «Ո՛վ Տէր Յիսուս , ես չեմ զիտեր թէ դուն ո՛վ ես և ո՛ւր ես , մութին մէջ կորսուած եմ . եթէ հիմա զիս կը լսես՝ կ'ուզե՞ս ինծի պատասխանել :

Կեցաւ . ևս անոր ըսի . «Եղած տեղերնիդ քանի մը վայրկեան կեցէք : Ան ձեզի կերպով մը պիտի պատասխանէ , կերպով մը զոր չեմ կրնար բացատրել :

Ես ալ սկսայ անոր այս վիճակը Տէրոջ ներկայացնել լսելի աղօթքով մը , ու երբ կ'աղօթէի , անոր գէմքը կը գիտէի : Դէմքը յանկարծ փոխուեցաւ . լոյսի ձառագայթ մը ցոլաց անոր գէմքին վրայ և ըսաւ . — Ան ինծի պատասխանեց :

— Դո՞յ է :

— Անչուչտ գոյ է , ու տեղին ալ : Ան հիմա իմ Տէրս ու Փրկիչս է , զիս մութէն հանեց , ու հիմա գիտեմ զԱյն , կը վստահիմ Անոր ու կը վառաւորեմ զԱյն :

Այն ատենէն ի վեր տաններկու ամիսներ անցան և որ մը պատահեցաւ որ հանրակառքի մը մէջ կը գտնուէի , ուր անութիւն տակ Ս . Գիրք ունեցող երիտասարդ մը խօսք ուղղեց ինծի : Պատասխանեցի թէ զիւրք չեմ ձանձնար :

— Ան ըսաւ . — Օ՛ , ես Քու-իլի կանչող տղան եմ :

— Օ՛ , շա՛տ աղէկ , ի՞նչպէս կ'երթայ կոր :

— Հիանալի՛ , ևս օրէ օր աւելի կը սորվիմ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ , ու հիմա Արեւելեան Լոնտոնի մէջ Ս . Գրոց դասախօսութիւն մը մտիկ ընելու կ'երթամ կանոնադրապէս : Ուրախ եմ որ ձեզ նորէն տեսնելու երջանկութիւնը ունեցայ :

Այո՛, սկեպտիկութեան, անհաւատութեան անտառէն դուրս ելլելու համար փաստերէ, ապացոյցներէ ա՛ւելի Անոր անուէր կանչելու է, անկեղծ փափաք ունենալու է զԱյն գտնելու համար:

«Ձիս վնասողները կը գտնեն»:

### ՔՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԻՒՆԵԸ ԻՐ ՊՏՈՒՂԷՆ

Քրիստոնէութիւնը չիորձուած փորձառութիւն մը կամ նոր բան մը չէ աշխարհի մէջ: Ամէն անհատ որ Քրիստոնէական քաղաքակրթութեան հետ յարաբերութիւն կ'ունենայ, շուտով կը հասկնայ թէ անոր մէջ գտնուող լաւագոյն կողմերը իրենց սկզբնաւորութիւնը առած են չորս աւետարաններու մէջ նկարագրուած պատմական Յիսուս-Քրիստոսի նկարագրին, գործին և պատգամին իրականութեան մասին գոյութիւն ունեցող հաւատքէն: Մենք կը պնդենք թէ ազնուագոյն մարդիկ և կիներ մեծ մասամբ անոնք են, որ զՔրիստոս իրենց տիպար ընդունած են, չէ թէ գաղափարական Քրիստոս մը՝ այլ պատմական Յիսուս-Քրիստոսը: Չենք ուրանար թէ Քրիստոնէութեան չըջանալէն դուրս ալ կը գտնուին ազնուագոյն մարդիկ և կիներ. սակայն մենք կը պնդենք թէ, անոնք աւելի եւս ազնուագոյն պիտի ըլլային, եթէ Քրիստոսի հաւատային, և սակայն փափաքելի էր գիտնալ թէ 20րդ դարը ՈՐՈՒՒ կը պարտի իր բարոյական և բարեսիրական ձգտումներն ու ձեռնարկները. ՈՐՈՒՒ կը պարտի իր Սիրոյ, Եղբայրութեան և Հաւասարութեան զգացումները ու փափաքները, Աստուծոյն, Պուտտայի՛ն, թէ առասպելական այս ինչ (?) աստուածին . . . : Մարդոց իրաւունքները կը յարգուին, խորհուրդի ազատութիւնը կը պահպանուի, իմացական զարգացումը յառաջ կ'ընթանայ և արդարութիւնն ու բարոյականութիւնը յաջողապէս կը

կիրարկուին ազգերու օրէնքներուն մէջ, ի՞նչ բանի, որ քաղաքակրթութեան արդիւնք են ասոնք: Յանուն ՈՐՈՒՒ միլիոնաւոր սակիներ կը զրուին լոյս ու դիտութիւն, բարոյականութիւն և աստուածպաշտութիւն ծաւալելու համար խաւար երկիրներու մէջ: Յանուն ՈՐՈՒՒ կը թական հաստատութիւններ, հիւանդանոցներ, որբանոցներ եւլն. կը հաստատուին ինկածները բարձրացնելու համար: Յանուն ՈՐՈՒՒ մարդիկ իրենց կեանքը կը վտանգեն, այո՛, կը զոհնեն հեթանոսները լուսաւորելու համար, յանուն առասպելական Յիսուսի մը . . . : Առասպելական Յիսուս մը կրնա՞ր հրաշալիքներ գործել մարդկութեան պատմութեան մէջ: Կարելի՞ է թուել հազարաւոր ու բիւրաւոր այն օրհնութիւնները՝ որոնք ձեռք բերուած են Քրիստոնէութեան միջոցաւ: Ինչէ՞ն է որ միլիոնաւոր մարդիկ այսօր պատրաստ են Անոր համար ամէն բան զոհելու և զոհուելու ալ. առասպելական Յիսուս մը կըրնա՞յ ազդել մարդուն կեանքին ու զայն բոլորովին փոխել. առասպելական Քրիստոս մը կրնա՞յ նկարագրի ու կեանքի շինել, զինեմղը՝ ժուժկալ, մարդասպանը՝ մարդասէր և չարը՝ բարի ընելով. հա՞րկ է միլիոնաւոր օրինակներէն մէջբերումներ ընել, կարելի՞ է միթէ: Կը հարցընենք. առասպելական Յիսուս մը կրնա՞ր անհաշուելի բարիքներու պատճառ ըլլալ:

Թող Պ. առասպելաբանները պատասխանեն:

### 4. «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԻՏԻԸ ԶԻԿՐՆԵՐ ՔՐԻՍՏՈՍ ՄԸ ՍՏԵՂԾԵԼ»

Հետեւեալ տողերը, ինքնին բանաւոր և վճռաւ են, կը քաղենք Տր. Բայթի հեղինակաւոր խօսքերէն:  
Մենք կը տեսնենք որ Յիսուսի կեանքին մէջ աստուածայինը և մարդկայինը իրար միացած են անբաժա-

նելի կերպով: Փորձառութիւնը ցոյց կուտայ թէ մարդկային միջոց ընդունակ է, կրնայ, երեւակայութեան միջոցաւ աւանկ կեանք մը դարձնել, կեանք մը որ ըրջայ թէ՛ մարդկային եւ թէ աստուածային եւ նոյն ասեւ ըրջայ նաեւ իրական: Ուշադիր եզէք և ահա պիտի տեսնէք որ բացի Յիսուս Քրիստոսի պարագայէն, երբ մարդիկ ջանացեր են մարդուն տալ աստուածային գերագոյն կարողութիւններ, պարզապէս այլանդակութիւններ, ո՛չ, հրէշ-մարդ-աստուածներ յառաջ բերեր են, վասնզի գերմարդը՝ մարդկային մենաշնորհը սուս է, և արդիւնքը կատարելութենէ շատ հեռի եղած է:

Ո՞վ Յիսուսի կեանքը և հեղինակութիւնը ունենալ: Հասարակ մարդը կրնայ այդ կեանքը և հեղինակութիւնը ունենալ: Հասարակ անտուածները . . . : Մարդուն երեւակայութիւնը կրնայ ստեղծել Յիսուսի պէս մէկը՝ որ մեղքերու թողութիւն տայ, ինք ըլլալով սուրբ ու անմեղ, որ հօրը կողմէն խօսի, որ մարդոց սրտերը գիտնայ, որ վերքեր ու ախտեր բժշկէ երև. երև: Ու ինչ բան այս ամէնուն մէջ աստուածական կը թուի արդեօք:

Ռուսոյի խօսքերը ազդեցիկ են. «Մենք Աւետարաններու պատմութիւնը պարզ պատրանքի արդիւնք պիտի սեպենք: Արդարեւ, բարեկամս, անոր մէջ երեւակայութեան հետքն անգամ չի նշմարուիր: Սովորաբար պատմութիւնը՝ որու մասին և ոչ մէկ մարդ կը տարակուսի, Յիսուս-Քրիստոսի պատմութիւնէն աւելի ազանով կերպով գրուած չէ: Եթէ ըսնէմք թէ Աւետարաններուն պատմութիւնը երեւակայութեան արդիւնք է, դժուարութիւնը փոխանակ վերցուցած ըլլալու, աւելի եւս կը շատցնենք: Չորս անձերու միաբանութեամբ ասանկ պատմութեան մը յիշուելու բանաւոր չի թուիր . . . : Աւետարանին մէջ գտնուած ճշմարտութիւնները այնքան ազդու և անմասն են, որ զանոնք հնարող միտքը Մեծ դէմքէն՝ Յիսուսէն

աւելի զարմանալի պիտի ըլլար»:

Նարոյէնի խօսքերն ալ ծանրակշիռ են. ան կ'ըսէ. «Պարագ սեղ կը ջանամ գանկ պատմութեան մէջ Յիսուսի պէս մէկը և կամ ուրիշ բան որ կարենայ հաւասարի Աւետարաններուն: Ոչ պատմութիւնը, ոչ մարդկութիւնը, ոչ դարերը և ոչ ալ բնութիւնը կ'ընծայեն ինձ բան մը՝ որուն հետ կարենամ բազմատեղ զԱյն և բացատրել . . . : Աւետարաններուն մէջ ամէն բան գերազանց է և բնական: Որչափ աւելի կը կարդամ Աւետարանը, ա՛յնչափ աւելի կը համոզուիմ թէ անոր մէջ մարդկային մտքին և եղելութեանց կարգին հակառակ ուրիշ բան չկայ»:

Լսենք ուրիշ հեղինակաւոր անձի մը խօսքերն ալ. «Յիսուս ունէր անխառն Սէր, Մտերմութիւն և Բարեկամութիւն: Անո՛ւ այս պատճառաւ շատեր սիրով յարեցան Իրեն: Ու երեւակայել թէ ասանկ 'Իեմք մը—Իեմք մը գոտ մարդկային, մոլեռանդութեան կամ հաւքերայութեան միջոցաւ յերևուեցաւ, բացարձակօրէն մեքի սխարութիւն ցոյց կուտայ: Ես հոգեպիշ կը նայիմ Յիսուսի Կեանքին եւ Անոր մեք առասպելական և ոչ մեկ բան կը գտնեմ: Այդ կեանքը մարդկային էր, իրական էր»:

Ու այս ամէնուն հետեւութիւնը, փակելու համար այս ատկերը, երկու անցելի ճշմարտութիւնները.

Ա. ԱՊՍՅՈՒՑԱՆԵԼԸ՝ ԺԽՏԵԼԷՆ ՍԻԵԼԻ ԴԻԻՐԻՆ Է: Հաւաստացողին դիրքը ապահով է միտքը և սիրտը հանգիստ ու խաղաղ. իսկ սկեպտիկը հաստատ վիճակ չունենար, մտքի մեք կը մտորի:

Բ. ՅԻՍՈՒՍ ՄԸ ՀՆԱՐԵԼՈՒ ՀՍՄԱՐ, ՅԻՍՈՒՍԻ ԿԵՍԵԼՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒ ՀՍՄԱՐ, Յիսուսի մը ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՏ ԷՐ: Առանց Քրիստոսի ո՛չ Աւետարանները կը գոռեին, ո՛չ Քրիստոսնեւրոսները աշխարհի տեսլանքական կրօնը կրնար ըրջալ և ո՛չ ալ այսչափ մեծ օրհնութիւններ ծնունդ կ'առնէին:

Գ Ե Ր Զ

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Սխաղ	Ուղիղ
51	28	(Մարկ. 18)	(Մարկ. Ժ. 18)
59	27	կը ճանչցուին « »	կը ճանչցուին «Q»
76	28	Զէլընդներու	Զէլըդներու
77	30	Սուեղինիտէն	Սուեղինիտէն
107	32	սնիմոսի	Հերսնիմոսի



ՏԻՄՐ Մ. ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆԻ

ՀԵՂԵՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ ՈՒ ՀՐԱՏԱՐԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ

1.	Այգոյն նախնիները.	1910	հ <sub>2</sub>	43	9/16	2	2/2
2.	Հայկական նոր եկեղեցի.	1910	"	56	"	2	"
3.	Առաջնակներ.	1911	"	42	"	1 1/2	"
4.	Գարիկներ, պատկերազարդ.	1911	"	40	"	1 1/3	"
5.	Նուշիկի Ձեչրուներ	1912	"	416	"	15	"
6.	ձերմկակ մանկը. վիպ.	1913	"	192	"	8	"
7.	Բուշրոյ. Բ. Եարի. քրքակազմ	1912	"	249	"	15	"
8.	" Գ. . . . .	1913	"	192	"	12	"
9.	" Բ. Գ. և Կարակազմ.	"	"	492	"	90	"
10.	" Ա. Բ. Գ. և Կարակազմ/ուս.	"	"	661	"	40	"
11.	Հնիւակներ. Արսեն-Կելիսը	1912	"	48	"	2	"
12.	Անձանոր ստուիներ . . .	1912	"	80	"	4	"
13.	Տարսղախոս ուսանողը Հ. Համբար	1912	"	84	"	3	"
14.	Հոգի . . . Կանան-Ասրան	1913	"	96	"	2 1/2	"

Հասցե՝

ماميگون افندي وارژابديان - مرزيفون

ՄԱՄԻԳՈՆ Է.Յ. ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ, ՄԱՐՉՈՒԱՆ

Mr. Mamigon Varjabedian, Morzifoun

Tarquo

ՀԱՅՈՐԴԻՒՆ ՄԱՐԳԱՐԻՏԵ

Եստով յոյս կը սեռնէ հեղինակիմ այս աննախընթաց գործը, պատաստած մասկավարժական աննամուր պատմապէսներու համեմատ, որ կուզայ գոնացնել հոյ վարժարաններու Տարրական Գաղարկացիներուն հոսնա-բարոյական դաստիարակութեան կենսական պէտքը, Լուս. Բողոք. եւ Կաթոլիկ դպրոցներու մէջ սեխաթը եւ յարմարաւորակն գործածելի ու բնպտանելի եղանակով մը յարկնուած:

Գ Ի Ն

Քաղաքիա 5 դրոյ

Արատաստման 30. սեպտ

Փոսթի ծախսի համար մեկ դրոյ անելի

Դիմել հեղինակին, Անարոյիա Գոյեհ, Մարգուան, իսկ Պոյթա՝ Տիար Յարոյիւն Քիւրիւնեանին, Պաղլի Գարու Եկնի Վոյթո խան, թիւ 19:

« Ազգային գրադարան



NL0160586



